«Լավ է կույր աչք, քան կույր մտք»: ***ԵՂԻՇԵ***

Չի սխալվել մեծն պատմիչը, երբ եկող սերունդներին կրթվելու, միտքը գիտելիքներով հարստացնելու պատգամ է հղել: Արդի աշխարհում, անշուշտ, գիտելիքը զենք է, կարողունակ, նախաձեռնող, ինքնուրույն, ստեղծարար, դիրքորոշում, կարծիք, տեսակետ և բարձ արժեհամակարգ ունեցող աշակերտը՝ յուրաքանչյուր պետության ամրության ու հարատևության ճարտարապետը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....4

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ.....5

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Հաստատության դասասենյակների ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրը.....11
- Ապահով և անվտանգ միջավայրի ապահովումը ուսումնական հաստատությունում.....13
- Հաստատության գրադարանի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրն ու հնարավոր թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլերը.....15
- Հաստատության ճաշարանի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրն ու հնարավոր թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլերը.....18
- Հաստատության համակարգչային լսարանի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրն ու հնարավոր թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլերը.....20
- Հաստատության ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն ուսումնական առարկաների նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրն ու հնարավոր թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլերը.....21
- Հաստատության մարզադահլիճի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրն ու հնարավոր թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլերը.....24
- Հաստատության նախակրթարանի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրն ու հնարավոր թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլերը.....26
- Հաստատությունում ռեսուրս-սենյակի հիմնում.....28
- Հաստատության ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական բազայի ուժեղ և թույլ կողմերի ամփոփ վերլուծությունը, դրանից բխող նպատակները, խնդիրներն ու գործողությունները.....29

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

- Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը.....31
- Հաստատության մանկավարժական խորհուրդը.....35
- Հաստատության առարկայական մեթոդական միավորումները.....39
- Հաստատության ծնողական խորհուրդը.....43
- Հաստատության աշակերտական խորհուրդը.....48
- Հաստատության համագործակցությունը համայնքի հետ.....52
- Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության կառավարման մարմինների հետ.....55
- Հաստատության համագործակցությունը շահառու կազմակերպությունների հետ.....57

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

- Հաստատությունում օգտագործվող ՏՀՏ, կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ընդհանուր բնութագիրը.....61
- Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները.....65

- Ուսումնական հաստատությունում հանրակրթության պետական չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն.....71
- Ուսումնական հաստատությունում հանրակրթության պետական չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովմանն ուղղված հաստատության քայլերը.....77
- Հաստատությունում բազմակարծիք, ներառական մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն.....79
- Բազմակարծիք, ներառական մասնակցային արժեքային միջավայրի ապահովմանն ու պահպանմանն ուղղված հաստատության քայլերը.....82
- Հաստատությունում աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն.....90

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

- Ուսումնական նպատակով իրականացված ծախսերի վերլուծությունը.....94
- Հաստատության բյուջեի բարելավման եղանակներն ու հնարավոր ռիսկերը.....96

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի գնահատում.....97
- Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատում.....98
- Բազմակարծիք, ներառական մասնակցային արժեքային միջավայրի գնահատում.....99
- Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատում.....99
- Դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի ներգրավվածության, արտադպրոցական աշխատանքների իրականացման գնահատում.....100
- Հալածանքի օտարման և բռնության կանխարգելման ուղղությամբ իրականացված միջոցառումների գնահատում.....101

ԴԶԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

- ԴԶԾ-ի իրականացման հնարավոր ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ/.....101

ԴԶԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ, ՄԱՐԴԿԱՅԻՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ.....103

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ.....108

- Ուստարվա յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ներկայացվող ԴԶԾ-ի կատարողականի հաշվետվության տարբերակված ձևերի օրինակներ.....109

ԱՄՓՈՓՈՒՄ.....113

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ.....114

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի մարտի 1-ի N191-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի՝ 01.11.2023թ.-ի եզրակացությունն առ այն, որ «Գետարգելի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր տեղի հավակնորդ Դիանա Հրանտի Աղասարյանի կողմից նույն դպրոցի համար մշակված զարգացման ծրագիրը մերժվել է՝ չհաղթահարելով սահմանված շեմը, հայտնում ենք, որ ծրագիրը մասնակիորեն ենթարկվել է փոփոխությունների և լրամշակումների: Մասնավորապես՝ ամբողջությամբ վերաշարադրվել է ծրագրի 6-րդ կետն իր 6 ենթակետերով՝ «Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարման արդյունքների գնահատման չափանիշները», լրամշակվել, հարստացվել է 1 կետի 1.3 ենթակետը՝ «Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը», 1.7 ենթակետը՝ «Չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծությունը», 2 կետի 2.2 ենթակետը՝ «Խնդիրների սահմանումը, դրանց համապատասխանությունը նպատակներին», 7-րդ կետի 7.2 ենթակետը՝ «Նախատեսվել են հնարավոր ռիսկերը, մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ», 8-րդ կետի 8.2 ենթակետը՝ «Զարգացման ծրագրում հավասարաչափ և արդյունավետ օգտագործվել է մարդկային, բյուջետային և տեխնոլոգիական ռեսուրսները» և 9-րդ կետն ամբողջությամբ՝ «Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները»: Խնդրում ենք հաշվի առնել վերը բերված դիտարկումները:

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Կարելի է վստահաբար պնդել, որ ներկայումս իրականացվող կրթական բարեփոխումները միտված են ավելի արդյունավետ, բաց, հասանելի, աջակցող, որակյալ կրթություն ունենալուն, որտեղ սովորողը կդադարի լինել դասագործընթացի պասիվ սուբյեկտը. կդառնա իր ուսումնառության ճարտարապետը, կունենա ընտրելու, համագործակցելու, հակադրվելու, բանավիճելու, սեփական մտահաղացումներն իրականացնելու հնարավորություն: Ի վերջո, կրթական գործընթացի բոլոր պատասխանատուների գերնպատակը մեկն է՝ ունենալ կարողունակ, մտածել իմացող, արժեհամակարգ ունեցող սովորող, ում կարելի է վստահել երկիրն ու նրա լուսառատ ապագան: Այս համատեքստում է, որ կցանկանանք կարևորել կրթական գործընթացի բոլոր մասնակիցների և պատասխանատուների նպատակային, կառուցողական համագործակցությունը՝ ի շահ որակյալ, կարողունակահեն և հասաելի կրթության: Եվ պատահական չէ, որ ժողովուրդն ասում է. «Մեկ ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես»: Ուստի և բոլորս պետք է գնանք այս գերնպատակին ընդառաջ՝ ունենալու որակյալ կրթական համակարգ, որը մեծ արդյունավետությամբ կկարողանա իրացնել բոլոր երեխաների կրթության իրավունքը, այդ թվում՝ ԿԱՊԿ ունեցողներինը:

Կրթական գործընթացի իրականացնողն ու պատասխանատուն ուսուցիչն է, սակայն որակյալ, արժանահավատ կրթություն ունենալու համար բավական չէ կարողունակ և բանիմաց ուսուցչի առկայությունը. կրթադաստիարակչական գործընթացի անցնցում և նպատակային իրականացումը պայմանավորված է նաև հաստատությունում տիրող բարոյահոգեբանական առողջ մթնոլորտով, մանկավարժական աշխատողների փոխգործակցությամբ, փոխօգնությամբ, շենքային բարվոք պայմաններով, ուսումնատեխնիկական հարուստ բազայով, դիտակտիկ և ուսումնաօժանդակ նյութերի առկայությամբ, ինչպես նաև՝ հաստատության մանկավարժական և վարչական աշխատողների միջև բարեվարք, անկաշկանդ հարաբերությունների հաստատմամբ, որտեղ բոլորը գիտեն օրենքով սահմանված իրենց պաշտոնային պարտականությունները, իրավունքները, ունեն մարդկային և մասնագիտական բարձր որակներ, և բոլորն իրենց աշխատանքային պարտականություններն իրականացնում են՝ հաշվի առնելով կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների լավագույն շահերը: Անշուշտ, այս համատեքստում անկյունաքարային է նաև հաստատության տնօրենի դերակատարումը՝ որպես առաջնորդող, ուղղորդող, օրինակելի վարք ունեցող, անաչառ անձի, ով կարող է առկա մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները ծառայեցնել բացառապես հաստատության բարգավաճմանը, առաջընթացին, նորանոր հաջողություններ ու հաղթանակներ գրանցելուն՝ իր հետևից տանելով մի ողջ մանկավարժական կոլեկտիվի, որը նույնպես իր օրինակելի աշխատանքով, միասնականությամբ կարող է հաղթահարել բոլոր մարտահրավերները:

Սույն զարգացման ծրագիրը նպատակ ունի.

1. Ներկայացել նշված հանրակրթական ուսումնասական հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացի իրականացման, շենքային պայմանների,

նյութատեխնիկական բազայի, առկա ենթակառուցվածքների ներայիս վիճակը, բացահայտել կարիքները, առաջադրել հիմնախմդիրների հաղթահարման ելքեր:

2. Ցույց տալ կրթական գործընթացին խոչընդոտող հնարավոր հիմնախնդիրները, խորքային վերլուծել դրանց հաղթահարման ընթացքում հնարավոր ռիսկերը, մարտահրավերները:
3. Հիմք ընդունելով կատարված մշտադիտարկումների և ուսումնասիրությունների արդյունքները, գնահատելով հաստատության թույլ և ուժեղ կողմերը՝ նախանշել աշխատանքային գործունեության ընթացքում կիրառվող ռազմավարական այն մեխանիզմները, որոնք հնարավորություն կստեղծեն միասնական ու համախմբված աշխատանքի շնորհիվ առաջիկա հինգ տարիների ընթացքում ունենալ ժամանակակից, բարեկարգ, ենթակառուցվածքներով ու կրթական նորարարություններով հագեցած, բարձրակարգ ու ժամանակակից տեխնոլոգիաների հետևից գնացող, մանկավարժական աշխատողներով գերհարուստ հանրակրթական ուսումնական հաստատություն:

Նշված նպատակներին հասնելու համար մեր առջև դրել ենք ներքոնշյալ խնդիրները.

- Սահմանել ծրագրային նպատակները, խնդիրները:
- Ուսումնասիրել և ներկայացնել ուսումնական հաստատության շենքային պայմանները, բացահայտել վերակառուցման և վերակազմավորման հնարավորություններն ու դրանց իրագործման ռեսուրսները:
- Ուսումնասիրել և ներկայացնել ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազայի, օժանդակ ռեսուրսների ներկայիս վիճակը, հիմնավորել դրանց թարմացման, արդիականացման անհրաժեշտությունն ու նախանշել ձեռքբերման ու տեղայնացման հնարավորությունները:
- Ուսումնասիրել և ներկայացնել դպրոցում կրթադաստիարակչական գործընթացի կազմակերպման ընթացքում հանդիպող հնարավոր դժվարությունները, կարևորել մանկավարժական աշխատողների փոխգործակցությունը, արդյունավետ համագործակցությունը խորհրդակցական մարմինների շրջանակներում, նախանշել փորձի փոխանակման, փոխօգնության արդյունավետ տարբերակներ:
- Ներկայացնել ուսումնական հաստատության ուժեղ և թույլ կողմերը, բացահայտել եղած հիմնախնդիրները, հանդես գալ դրանց լուծման առարկայական ու թիրախային եղանակներով:
- Բացահայտել դպրոց-համայնք փոխգործակցության ներկայիս վիճակն ու նախանշել համագործակցության հնարավոր հեռանկարները:
- Բացահայտել ծնող-դպրոց փոխգործակցության ներկայիս վիճակը, կարևորել ընտանիք-դպրոց շարունակական համագործակցությունը, առաջարկել այդ կապն առավել արդյունավետ և առարկայական դարձնելու եղանակներ:

- Հիմք ընդունելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ կետը՝ բացահայտել դպրոցում ԿԱՊԿՈՒ սովորողների հնարավոր դժվարությունները, առաջադրել վերջիններիս կրթությունն առավել հեշտ և արդյունավետ իրականացնելու հնարավորությունները:
- Սահմանել դպրոցի զարգացման գերակայությունները, նախանշել դրանց իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցների կառավարման հնարավորությունները:
- Հստակ և առարկայական ձևակերպել ծրագրի ակնկալվող արդյունքները՝ առաջադրելով հիմնախնդիրների լուծման առարկայական և իրատեսական լուծումներ:
- Հաշվի նստել յուրաքանչյուր կարծիքի, դիրքորոշման, տեսակետի հետ՝ նախապատվություն տալով առողջ համագործակցային մթնոլորտին և թիմային աշխատանքի գերակայությանը:
- Նախանշել ԴԶԾ-ի իրականացման վերահսկողական մեխանիզմները:

■Հաստատության զարգացման հեռանկարային ծրագիրը մշակվել է՝ հիմք ընդունելով կրթության առաջնային շահակիցների՝ սովորողների լավագույն շահերը:

■Հաստատության զարգացման հեռանկարային ծրագիրը կազմելիս հաշվի են առնվել հաստատության մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ աշխատանքային քննարկումների արդյունքում ստացված առաջարկությունները:

Հենց այս ամենը թույլ է տվել արդյունավետորեն գնահատել հնարավոր բացթողումները, առկա կարիքները, նախանշել հիմնավոր լուծումներ և երկարաժամկետ ու կարճաժամկետ գործողություններ՝ ի շահ դպրոցի բարգավաճման, կրթության որակի բարձրացման, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ կառավարման:

Հաստատության զարգացման հեռանկարային ծրագրի իրավական հիմքերը.

- ՀՀ Սահմանադրություն
- «Կրթության մասին» ՀՀ օրենքը
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենք
- «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք

- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2001 թվականի հոկտեմբերի 23-ին)

- «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության եվ տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշում:
- «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առեվտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու եվ 1996 թվականի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշում
- «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցների ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2022թվականի սեպտեմբերի 22-ի N 1481-Ն որոշում
- «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2035 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2015թվականի հուլիսի 25-ի N 797-Ն որոշում
- «Պետական հանրակրթական զարգացման ծրագրի մշակման պահանջների և ձևաչափի մասին» ՀՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 35-հրաման
- «Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի N 79-Ն հրաման
- «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2017թվականի մայիսի 28-ի N 12-Ն հրաման:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական ուսումնական հաստատության անվանումը	**«Գետարգելի հիմնական դպրոց» ՊՈԱԿ**
Հանրակրթական ուսումնական հաստատության հասցեն	Աբովյան համայնք, գյուղ Գետարգել, Հարություն Վերդյան 38
Հանրակրթական ուսումնական հաստատության ինտերնետային կայքի հասցեն	getargel.schoolsite.am
Հանրակրթական ուսումնական հաստատության էլ. փոստի հասցեն	getargel@schools.am
Հանրակրթական ուսումնական հաստատության հիմնադրման տարեթիվը	1950
Հանրակրթական ուսումնական հաստատության կանոնադրության հաստատման մասին տվյալներ	11.09.2023թ. N 260- Ա
Հանրակրթական ուսումնական հաստատության պետական ռեգիստրում գրանցման համարը	42.210.01983
Հանրակրթական ուսումնական հաստատության շինության բնութագիրը, մակերեսը	ոչ տիպային,
Նկուղային հարկի բնութագիրը	առկա չէ
Հանրակրթական ուսումնական հաստատության հարկայնությունը	երկհարկանի
Հանրակրթական ուսումնական հաստատության տիպը ըստ իրականացվող հիմնական ծրագրերի	հիմնական

Հանրակրթական ուսումնական հաստատության տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի	նախադպրոցական,տարրական/1-4/, հիմնական/5-9/
Աշխատանքային շաբաթը	հնգօրյա
Աշխատանքային ռեժիմը	միահերթ
Շինության նախագծային հզորությունը	180
Շինության ջրամատակարարումը	շուրջօրյա
Շինության կոյուղացումը	կենտրոնացված/բարվոք/
Շինության ջեռուցումը	կենտրոնացված

Հանրակրթական ուսումնական հաստատություն հաճախող աշակերտների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն

Փաստացի հաճախող աշակերտների թիվը	157
ԿԱՊԿՈՒ աշակերտների թիվը	5
Օտարերկրյա քաղաքացի հանդիսացող աշակերտների թիվը	1
Ազգային փոքրամասնություն հանդիսացող աշակերտների թիվը	1
Նախակրթարան հաճախող աշակերտների թիվը	11

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Հաստատության դասասենյակների ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրը

Դպրոցն ունի.
■ 9 դասասենյակ (ընդհանուր մակերեսը՝ 292.2 քմ) ■ 1 գրադարան (ընդհանուր մակերեսը՝ 20.47 քմ) ■ 1 ուսուցչանոց (ընդհանուր մակերեսը՝ 31.14 քմ) ■ 1 ճաշարան (ընդհանուր մակերեսը՝ 51.25 քմ) ■ 3 սանհանգույց (ընդհանուր մակերեսը՝ 36.612 քմ) ■ 1 առանձնասենյակ (ընդհանուր մակերեսը՝ 18.41 քմ) ■ 1 մարզադահլիճ (ընդհանուր մակերեսը՝ 276.0 քմ) ■ նախակրթարան (ընդհանուր մակերեսը՝ 119.1 քմ) ■ մարզահրապարակ (ընդհանուր մակերեսը՝ 4580-քմ) ■ պտղատու այգի (ընդհանուր մակերեսը՝ 675 քմ) ■ 1 համակարգչային լսարան (ընդհանուր մակերեսը՝ 17.98 քմ) ■ 1 լաբորատորիա (ընդհանուր մակերեսը՝ 11.82 քմ)

«Ուսումնական հաստատությունների նյութատեխնիկական բազան, կախված այդ հաստատությունների տիպերից ֆ ձևերից, ներառում է սովորողների համար անհրաժեշտ տարածքներ, կառույցներ, ինչպես նաֆ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ուսուցման համար անհատական տեխնիկական միջոցներ ֆ սարքավորումներ, համակարգչային դասարաններ»:
(«Կրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 5, օրենքի 48-րդ հոդվածի փոփոխությամբ):

Ուսումնական հաստատությունն ունի 9 դասասենյակ՝ ընդհանուր 292.2 քմ մակերեսով:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դասասենյակներից 5-ը վերանորոգված են:	Դասասենյակներում բացակայում են էլեկտրոնային գրատախտակները, պրոյեկցիոն սարքավորումները, ինչի արդյունքում անհնարին է դառնում դասասենյակներում անցկացնել ՏՀՏ-ի

	կիրառմամբ դասեր:
Տարրական դասարանների դասասենյակների գույքը գտնվում է լավ վիճակում:	Միջին դպրոցում գույքը թարմացման, համալրման կարիք ունի:
Դասասենյակները լուսավոր են, խստորեն պահպանվում են սանիտարահիգենիկ կանոնները, ամեն օր օդափոխվում են:	Պայմանավորված ֆինանսական միջոցների բացակայությամբ՝ դպրոցը սեփական միջոցներով ամեն տարի նորոգում և հարմարեցնում է գույքը, ինչը հավելյալ դժվարություններ է առաջացնում, երբեմն էլ խաթարվում է դասասենյակի գեղագիտական տեսքը:
Դասասենյակները հնարավորինս հարմարեցված են առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների կարիքները բավարարելուն:	Քանի որ դպրոցի շենքը ոչ տիպային է, մի շարք դասասենյակներ ունեն փոքր մակերեսներ, ինչը հավելյալ դժվարություններ է առաջացնում ոչ ֆորմալ դասերի, խմբային աշխատանքների անցկացման ժամանակ:
Դասասենյակները հագեցած են դիդակտիկ նյութերով, զննական պարագաներով, աշակերտների կողմից պատրաստված ցուցադրական նմուշներով, թեմատիկ ցուցապաստառներով:	
Կենտրոնացված ջեռուցման շնորհիվ ձմեռային սեզոնին դասասենյակներում հնարավոր է լինում ապահովել 26°C ջերմաստիճան:	

ՆՊԱՏԱԿՆԵՐ	ԽՆԴԻՐՆԵՐ
Առավել բարեկարգ, անվտանգ և բարենպաստ ուսումնական միջավայրի ապահովում:	Արձակուրդներին իրականացնել թվով 4 դասասենյակների կոսմետիկ վերանորոգում՝ կամավոր հիմունքներով ներգրավելով նաև ծնողների աշխատուժը:
Ուսումնանյութական բազայի թարմացում, անհրաժեշտ դիդակտիկ նյութերի, զննական պարագաների ձեռքբերում՝ հաշվի առնելով առաջնահերթությունները:	Դպրոցի միջոցներով փուլային տարբերակով դասասենյակներն ապահովել էլեկտրոնային գրատախնակներով, բնագիտական առարկաների լաբորատորիաները զինել անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով, համալրել ու թարմացնել մարզագույքը:

Իրականացնել մշտադիտարկումներ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին:	Տնօրենի, տնտեսվարի անմիջական մասնակցությամբ գնահատել չօգտագործվող գույքը, այլ ռեսուրսները՝ տեղայնացնելով դրանք դասասենյակներում ըստ անհրաժեշտության:

Ապահով և անվտանգ միջավայրի ապահովումը ուսումնական հաստատությունում

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ- ի կոնվենցիա (Հայաստանը կոնվենցիային միացել է 1993 թվականին)
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենք
- «ՀՀ պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2035 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2015թվականի հուլիսի 23-ի N 797-Ն որոշում
- «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում :

Ուսումնական հաստատությունը հիմնադրվել է 1950 թվականին: Տարիներ շարունակ հաստատությունն ունեցել է հիմնանորոգման լրջագույն խնդիրներ: 2019 թվականի հունիս-օգոստոս ամիսներին հիմնանորոգվել է 1-ին հարկի շուրջ 240 քմ կիսախարխուլ փայտե հատակը, իրականացվել է 1մ խորությամբ հատակի լիցք: Հիմնանորոգման և ամրակայան աշխատանքներ են իրականացվել նաև հաստատության գրադարանում, ճաշարանում, սննդի պահեստում, մասնակի նորոգվել է հաստատության տանիքը, կառուցվել է տարհանման պահուստային ելք:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Առկա է հակահրդեհային միջոցներով հատուկ կահավորված անկյուն:	Հաստատության շենքը ոչ տիպային է, հարմարեցված:
Միջանցքների, սանհանգույցների սալիկապատ հատակը սայթաքուն չէ:	Առկա չեն թեքահարթակներ:
Առկա է տարհանման պլան, որում հաշվի են առնված ԿԱՊԿ ունեցող շակերտների կարիքները:	Հաստատությունը չունի կապի և արտակարգ իրավիճակների ազդարարման համակարգ:
Արտակարգ իրավիճակներով պայմանավորված՝ տարհանման ուղիներն ազատ են, որևէ խոչընդոտ, արգելք, պատնեշ առկա չէ ազատ տեղաշարժվելու համար:	Հաստատությունը չունի ստորգետնյա ապաստարան:
Հաճախակի իրականացվում են քաղպաշտպանական միջոցառումներ, թեմատիկ հոլովակների դիտումներ:	
Համաձայն հաստատության տարհանման պլանի՝ պարբերաբար իրականացվում են փորձնական տարհանման միջոցառումներ:	

Հաստատությունում ապահով և անվտանգ միջավայրի ապահովմանն ուղղված քայլերը

ՆՊԱՏԱԿՆԵՐ	ԽՆԴԻՐՆԵՐ
Քաղպաշտպանության միջոցառումների, ուսումնավարժանքների իրականացում, սովորողների շրջանում զգոնության բարձրացում, նրանց մեջ սոցիալական ու քաղաքացիական գիտակցության ձևավորում:	Մեծացնել հաստատությունում անցկացվող քաղպաշտպանական միջոցառումների թիվը՝ «Բնական և արհեստական աղետներ, դրանց հետևանքները», «Ինչպես վարվել երկրաշարժի ժամանակ», «Անվտանգ վարքագիծ», «Օդային տագնապ», «Պատերազմական իրավիճակների դեպքում տարհանման կազմակերպում, պատսպարում» թեմաներով:Ցուցապաստառների, թռուցիկների, սեմինարների միջոցով իրազեկել արտակարգ իրավիճակների պարագայում գործելու վարքականոնները:
Թեմատիկ սեմինարների, քննարկումների անցկացում սովորողների և աշխատակազմի հետ՝ ներգրավելով նաև շահառու կազմակերպությունների համապատասխան մասնագետների:	Իրականացվող քաղպաշտպանական միջոցառումների շրջանակներում սերտորեն համագործակցել տեղական ինքնակառավարման մարմինների հետ՝ ապաստարանի բացակայության խնդրին այլընտրանքային

	լուծումներ գտնելու նպատակով:Տարհանման միջոցառումներ իրականացնելիս սերտորեն համագործակցել ԱԻՆ-ի հետ:
ՏՄԱԿ- ի հետ համագործակցության շրջանակի ընդլայնում՝ առավել անվտանգ ուսումնական միջավայր ապահովելու նկատառումներով:	Կառուցել թեքահարթակներ՝ պահպանելով ԿԱՊԿՈՒ սովորողների տեղաշարժը ապահովող չափանիշները:
Զգոնության պահպանում, հետևողականություն հաստատությունում անվտանգության կանոնների շարունակական պահպանման գործում:	Պարբերաբար ստուգել, թարմացնել հաստատությունում առկա հակահրդեհային սարքավորումների պիտանելիության ժամկետները:

Հաստատության գրադարանի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրն ու հնարավոր թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլերը



Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- **«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք»**
- **«Կրթության մասին» ՀՀ օրենք**
- **«Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում**

Գրադարանը հիմնանորոգվել է 2020 թվականին, ընդհանուր մակերեսը 20.47 քմ է: իսկ գրականության ֆոնդի վերջին թարմացումը եղել է 2022-2023 ուստարվա ընթացքում: Գրադարանից ամսական օգտվողների թիվը կազմում է 100-110 հոգի:

Ներկայիս վիճակը.

N	*Անվանում*	*Տեխնիկական բնութագիր*	*Հեռաբերում*
1	Առանձին հարմարեցված սանհանգույց	գերազանց վիճակ	Հեռք է բերվել հաստատության միջոցներով
2	Համակարգիչ (2 հատ)	գերազանց վիճակ	Հեռք է բերվել հաստատության միջոցներով
3	Աթոռ (8 հատ)	բավարար վիճակ	Հեռք է բերվել հաստատության միջոցներով
4	Սեղան (8 հատ)	լավ վիճակ	Հեռք է բերվել հաստատության միջոցներով
5	Գրադարանում առկա գրքերի ընդհանուր թիվը՝ 2936	լավ վիճակ	Հեռք է բերվել հաստատության միջոցներով
6	Գեղարվեստական գրքերի թիվը՝2020	լավ վիճակ	Նվիրատվություն
7	Տեղեկատվական գրքերի թիվը՝(բառարաններ, հանրագիտարաններ, քարտեզներ, ատլասներ)՝ 54	լավ վիճակ	Հեռք է բերվել հաստատության միջոցներով
8	Ուսումնամեթոդական գրքեի թիվը՝30	լավ վիճակ	Հեռք է բերվել հաստատության միջոցներով
9	Ամսագրերի թիվը՝25	լավ վիճակ	
	Յու պի էս՝ 3	գերազանց վիճակ	Հեռք է բերվել հաստատության միջոցներով

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Գրադարանը վերանորոգված է, հագեցած է համապատասխան գույքով:	Ընթերցասրահի փոքր լինելու հանգամանքը երբեմն անհարմարություններ է ստեղծում:
Ունի ընթերցանության համար գերազանց պայմաններ. լուսավոր է, հարմարավետ, գրադարանավարի մշտական վերահսկողությամբ խստորեն պահպանվում է լռություն:	Գրակ. ֆոնդի թարմացման, համալրման կարիք կա:
Սովորողների համար առկա են գրադարանից օգտվելու և գրքի հետ վարվելու կանոններին վերաբերող իրազեկող ցուցապաստառներ:	Գրադարանն ունի մեթոդամանկավարժական գրականության թարմացման կարիք:
Ապահովված է բարենպաստ միջավայր՝ գրական ընթերցումներ, քննարկումներ, բանավեճեր,	Աշակերտների շրջանում նկատելի է գրադարանային ռեսուրսը համացանցայինով

փոքրիկ թատերական ներկայացումներ, ոչ ֆորմալ դասեր իրականացնելու, ինչպես նաև ֆիլմեր, մուլտֆիլմեր, վավերագրական ֆիլմեր և ճանաչողական հոլովակներ դիտելու համար:	փոխարինելու միտում: Բարձր դասարանի աշակերտները նախապատվությունն առավել շատ տալիս են տեղեկատվություն ստանալու առցանց տարբերակներին:
Գրադարանում կարելի է անցկացնել ինտեգրված դասեր՝ նպատակ ունենալով զարգացնել սովորողների գեղագիտական ճաշակը, գեղարվեստական խոսքը, խթանել ընթերցասիրությունը:	

Թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլեր.

1. Պարբերաբար թարմացնել գրադարանային ֆոնդը ժամանակակից հեղինակների գրքերով, նորագյուն մեթոդամանկավարժական գրականությամբ, բառարաններով, ճանաչողական ատլասներով:
2. Ձեռք բերել բարձր դասարանի աշակերտների հետաքրքրություններին համապատասխան գրականություն, օրինակ՝ մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ կամ մոտիվացնող, իրազեկող բնույթի:
3. Գրադարանում հաճախակի անցկացնել գրական երկերի քննարկումներ, բանավեճեր, դպրոցի ստեղծագործող աշակերտների ստեղծագործությունների ընթերցումներ: Առավել մեծ շուքով նշել գրքի, գրադարանների, գրադարանավարի միջազգային օրերը, գիրք նվիրելու օրը՝ նպատակ ունենալով սովորողներին փոխանցել գրադարանային մշակույթը:
4. Կիրառել սովորողների ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունն ու ստեղծարարությունը խթանող մանկավարժական հնարներ. հաճախակի գրադարանում կազմակերպել թեմատիկ ցուցապաստառների պատրաստումներ, կազմակերպել աշակերտների ինքնավարության օրեր:
5. Իրականացնել «Առողջ գիրք» կամ «Գիրքն իմ ընկերն է» աշակերտական նախաձեռնություններ, որոնց ընթացքում աշակերտներն ինքնուրույն կարգի կբերեն վնասված, պատռված գրքերը:

Հաստատության ճաշարանի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրն ու հնարավոր թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլերը

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք
- «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին ներկայացվող պահանջներ» N 2.2.4-016-17 սանիտարական կանոնները եվ նորմերը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2002 թվականի փետրվարի 11-ի N 82 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ առողջապահության նախարարի 2017թվականի մայիսի 28-ի. N 12-Ն հրաման
- «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առեվտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, հայաստանի հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու եվ 1996 թվականի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշում
- «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում

Հաստատության ճաշարանը հիմնանորոգվել է 2019 թվականին: Ճաշարանի ընդհանուր մակերեսը 51.25 քմ է: Ճաշարանը կահավորվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի տրամադրած միջոցներով, ինչպես նաև՝ հաստատության միջոցներով:

N	Անվանում	Տեխնիկական բնութագիր	Հեռաբերում
1	Էլեկտրական վառարան (1 հատ)	4 այրիչ ջեռոցով	ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր
2	Սեղան չժանգոտող (3 հատ)	1200-1600մմ	ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր
3	Չժանգոտող պողպատից դարակ (3 հատ)	1200-500մմ	ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր
4	Չժանգոտող պողպատից երկտեղանոց լվացարան (1 հատ)	1200-500մմ	ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր
5	Սառնարան (1 հատ)	300-320 լ	ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր
6	Գազօջախ (1 հատ)	4 այրիչ ջեռոցով	Հեռաբերվել հաստատության միջոցներով
7	Էլեկտրական կշեռք (1 հատ)	հզորությունը՝ 1.01կվ, կշռելու առավելագույն քաշը՝ 5կգ	ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր
8	Փայտե սեղաններ (7 հատ)	գերազանց վիճակ	Հեռաբերվել հաստատության միջոցներով
9	Փայտե աթոռներ (56 հատ)	գերազանց վիճակ	Հեռաբերվել հաստատության միջոցներով
10	Ջրատաքացման կաթսա	Ariston 50 գերազանց վիճակ	ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր
11	Խոհանոցային սպասք (նախատեսված 100 աշակերտի համար)	բավարար վիճակ	Հեռաբերվել հաստատության միջոցներով

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Տարրական դպրոցի աշակերտները,(1-4 դասարան), ինչպես նաև նախակրթարանի սաները ստանում են առողջ և որակյալ սնունդ:	Ճաշարանն ունի խոհանոցային սպասքի թարմացման կարիք:
Ճաշարանը հիմնանորոգված է, բարեկարգ, լուսավոր, ապահովված է տեխնիկական բոլոր միջոցներով:	
Ճաշարանում խստերեն պահպանվում են սանիտարահիգենիկ կանոնները, սնունդը պատրաստելիս աշխատակիցները կրում են համապատասխան համազգեստ:	
Մշտադիտարկումների արդյունքում մշտապես գրանցվել են բարձր ցուցանիշներ՝ սանիտարահիգենիկ պայմանների, ինչպես նաև ապահով սննդի կազմակերպման առումով:	

Թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլեր.

1. Հաստատության խնայողությունների հաշվին թարմացնել խոհանոցային սպասքը:
2. Հետևողական լինել ճաշարանի գույքի, տեխնիկայի համապատասխան խնամքին:
3. Հետևողական լինել սննդի որակին և յուրաքանչյուր աշակերտին տրվող սննդի քանակին:

Հաստատության համակարգչային լսարանի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրն ու հնարավոր թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլերը

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- «Հանրակրթության մասին «ՀՀ օրենք
- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում

Համակարգչային սենյակը հիմնանորոգվել է 2021թվականին՝ անվանակոչվելով 44-օրյա պատերազմի հերոս Տիգրան Նազուլյանի անունով: Լսարանի ընդհանուր մակերեսը 17.98 քմ է:

N	*Անվանում*	*Բնութագիր*	*Հեռքերում*
1	Համակարգիչ (8 հատ)	բավարար վիճակ	Հեռք է բերվել հաստատության միջոցներով
2	Համակարգչային աթոռ (8 հատ)	լավ վիճակ	Հեռք է բերվել հաստատության միջոցներով
3	Համակարգչային սեղան (8 հատ)	լավ վիճակ	Հեռք է բերվել հաստատության միջոցներով

4	Պրոեկցիոն սարք (1 հատ)	լավ վիճակ	Ձեռք է բերվել հաստատության միջոցներով
5	Նոթբուք (2 հատ)	գերազանց վիճակ	Ձեռք է բերվել հաստատության միջոցներով
6	Տպիչ սարք (3 հատ)	բավարար վիճակ	Ձեռք է բերվել հաստատության միջոցներով
7	Սկանավորման սարք (3 հատ)	բավարար վիճակ	Ձեռք է բերվել հաստատության միջոցներով

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Համակարգչային լսարանի համակարգիչներն ապահովված են համացանց մուտք գործելու հնարավորությամբ:	Համակարգիչներն ու օժանդակ սարքավորումները թարմացման, համալրման կարիք ունեն:
Սովորողները ակտիվորեն օգտվում են համակարգիչներից՝ թեմատիկ տեղեկատվություն հավաքելու, տեսադասեր, ճանաչողական հոլովակներ դիտելու համար:	Լսարանը բավականին փոքր է, ինչը դժվարություններ է առաջացնում մեծաթիվ աշակերտներ ունեցող դասարանների դասագործընթացն այդտեղ կազմակերպելու առումով:
Համակարգչային լսարանը հասանելի է թե' ուսուցիչների, թե' աշակերտների համար:	

Թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլեր.

1. **Դիտարկել սեփական միջոցներով փուլային տարբերակով նոր համակարգիչներ ձեռք բերելու հնարավորությունները:**
2. **Դիտարկել համակարգչային լսարանն ընդլայնելու կամ նոր տարածք տեղափոխելու հնարավորությունները:**

Հաստատության ֆիզիկա, քիմիա և կենսաբանություն ուսումնական առարկաների նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրն ու հնարավոր թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլերը

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում :

Հաստատությունն ունի ընդհանուր 11.82 քմ մակերեսով լաբորատորիա, որը չի գործում, քանի որ ունի հիմնանորոգման կարիք: Սարքավորումներն ու օժանդակ նյութերը վերջին 25 տարիների ընթացքում առանձնապես չեն թարմացվել, հիմնականում պիտանի չեն օգտագործման համար: Դպրոցը նախկին շրջանավարտ Գոռ Վերդյանի նվիրատվությամբ ձեռք է բերել մանրադիտակ, բնագիտական գրականություն, փորձանոթներ և քիմիական նյութեր: Այդուհանդերձ, նշված քանակը չի կարող բավարարել դպրոցի կարիքները

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Բնագիտական առարկաների մասնախմբի ուսուցիչները հաճախակի իրականացնում են փոխադարձ դասալսումներ, անցկացնում ինտեգրված դասեր:	Հաստատության լաբորատորյան չի գործում՝ պայմանավորված հիմնանորոգման լրջագույն կարիքներով:
Պայմանավորված բնագիտական առարկաների գործնական դասերի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազայի բացակայությամբ, կամ ոչ բարվոք վիճակով՝ ուսուցիչները հաճախ դիմում են այլընտրանքային եղանակների. հնարավորության դեպքում փորձերն իրականացվում են ինքնաշեն միջոցներով:	Բնագիտական առարկաների գործնական դասերի համար նախատեսված նյութատեխնիկական բազան գտնվում է անմխիթար վիճակում, բացակայում են մի շարք առանցքային սարքեր և սարքավորումներ, կարիք կա քիմիական նյութերի, փորձանոթների ձեռքբերման և թարմացման:
Բնագիտական առարկաների ուսուցիչները հաճախակի անց են կացնում տեսադասեր, ոչ ֆորմալ դասեր բնության գրկում՝ ուսումնական առարկայի կապը կյանքի հետ առավել առարկայական ցուցադրելու նկատառումներով:	Մի շարք գիտափորձերի իրականացումն գործնականում անհնարին է դառնում՝ պայմանավորված անհրաժեշտ սարքավորումների և նյութերի բացակայությամբ:

«Առանց լաբորատոր մեթոդների կիրառման, անհնար է հասկանալ բնագիտական առարկաները»: Դ.Ի.Մենդելև

ՆՊԱՏԱԿՆԵՐ	ԽՆԴԻՐՆԵՐ
Բնագիտական առարկաների լաբորատորիայի հիմնում, հնարավոր միջոցների որոնում, տարբերակների դիտարկում, հարմարեցում:	Հնարավորինս կարճ ժամանակահատվածում մշակել լաբորատորիայի վերանորոգման, նյութատեխնիկական բազայի թարմացման, համալրման աշխատանքային ծրագիր՝ համագործակցելով բնագիտական ուսումնական առարկաների ուսուցիչների հետ: Լաբարատորիայի հիմնանորոգումը դիտարկելով որպես դպրոցի առաջնային կարիք՝ դիմել կրթության լիազոր մարմնին, շահագրգիռ կազմակերպություններին՝ ֆինանսական միջոցների ձեռքբերման նպատակով:
Բնագիտական առարկաների առարկայական ծրագրերով նախատեսված լաբորատոր աշխատանքների իրականացման այլընտրանքային մեխանիզմների մշակում, իրականացում:	Առցանց լաբորատորիաների, ինքնաշեն սարքերի միջոցով ապահովել բնագիտական առարկաների դասավանդման ընթացքում գիտափորձերի իրականացումը՝ պայմանավորված նյութատեխնիկական բազայի անբավարարությամբ կամ բացակայությամբ:
	Դպրոցի խնայողությունների հաշվին փուլային տարբերակով ձեռք բերել բնագիտական առարկաների համար նախատեսված ուսումնաօժանդակ նյութեր, սարքեր, սարքավորումներ:
Բնագիտական առարկաների հանդեպ սովորողների հետաքրքրության բարձրացում	Աշակերտների շրջանում բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով պարբերաբար իրականացնել ցուցադրական դասեր, ոչ ֆորմալ դասեր, լաբորատոր, գործնական, նախագծային, հետազոտական աշխատանքներ, դասեր

	բնության գրկում, անցկացնել ներդպրոցական և արտադպրոցական վիկտորինաներ:
Բնագիտական առարկաների ուսուցիչների մասնագիտական հմտությունների բարելավում, մեթոդական գիտելիքների հարստացում:	Սահմանված կարգով անցկացնել փոխադարձ դասալսումներ, բնագիտական առարկաների մասնախմբի նիստերին խրախուսել ուսուցիչների նորարարական գաղափարները, հնարավորություն ստեղծել դրանց իրականացման համար, հանդես գալ մեթոդական զեկույցներով:

Հաստատության մարզադահլիճի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրն ու հնարավոր թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլերը

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- **«Հարակրթության մասին» ՀՀ օրենք**
- **«Կրթության մասին» ՀՀ օրենք**
- **«Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում :**

Հաստատությունն ունի 276.0 քմ մակերեսով մարզադահլիճ, որը լուրջ հիմնանորոգման կարիք ունի:

N	*Անվանում*	*Բնութագիր*	*Հեռքբերում*

1	Բարձրացատկի կանգնակ (1 հատ)	բավարար վիճակ	Խորհրդային շրջան
2	Ներքնակներ (2 հատ)	բավարար վիճակ	Խորհրդային շրջան
3	Մարմնամարզական այծիկ (1 հատ)	բավարար վիճակ	Խորհրդային շրջան
4	Մարմնամարզական նստարան (4 հատ)	բավարար վիճակ	Խորհրդային շրջան
5	Պտտաձող (1 հատ)	բավարար վիճակ	Խորհրդային շրջան
6	Գնդակներ, պարաններ, օղակներ և այլ պարագաներ	գերազանց վիճակ	Ձեռք է բերվել հաստատության միջոցներով

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Մարզադահլիճն ընդարձակ է, լուսավոր, հարմար է տարատեսակ սպորտային միջոցառումների, մրցույթների անցկացման համար:	Մարզադահլիճն ունի հիմնանորոգման, ջեռուցման համակարգի տեղադրման կարիք:
Մարզադահլիճում պարբերաբար անց են կացվում ներդպրոցական մրցույթներ, սպորտային միջոցառումներ:	Նյութատեխնիկական բազայի, գույքի ձեռքբերման, թարմացման կարիք կա:

ՆՊԱՏԱԿՆԵՐ	ԽՆԴԻՐՆԵՐ
Գերժամանակակից մարզադահլիճի հիմնում:	Կարևոր համարելով աշակերտների ֆիզիկական ակտիվության ապահովումը՝ առանձնակի կարևորությամբ մոտենալ բարեկարգ, ժամանակակից տեխնիկական միջոցներով, մարզագույքով հագեցած մարզադահլիճ ունենալու հանգամանքին:
Մարզադահլիճի վերանորոգման , վերազինման վերաբերյալ աշխատանքների իրականացում:	Հրավիրել նախագծող մասնագիտական խումբ, գնահատել առկա կարիքները, կազմել մարզադահլիճի վերանորոգման, մարզագույքի ձեռքբերման նախահաշիվ-նախագիծ:
Ձեռնարկել քայլեր սպորտային գույքի ձեռքբերման ուղղությամբ:	Նախահաշիվ-նախագիծը ներկայացնել լիազոր մարմնին՝ հիմնավորելով մարզադահլիճի

	հիմնանորոգումն ու տեխնիկական վերազինումը՝ որպես դպրոցի առաջնային շահ: Լիազոր մարմնի հետ ակտիվորեն ունենալ հանդիպումներ, աշխատանքային քննարկումներ՝ դիտարկելով նաև կառավարության կողմից հաստատված ոլորտային այլևայլ ծրագրերին և միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները:

Հաստատության նախակրթարանի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիրն ու հնարավոր թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլերը

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- **«Երեխայի իրավունքներիի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա**
- **«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք**
- **«Երեխայի իրավունքներիի մասին» ՀՀ օրենք**
- **«Երեխայի իրավունքներիի մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա**

Հաստատությունն ունի 11.1 քմ մակերեսով նախակրթարան, որը հիմնանորոգվել է 2015 թվականին: Նախակրթարանում առկա է առանձին սանհանգույց, հանդերձարան, և խաղասենյակ: Փաստացի հաճախում է 8 սան, սակայն նախակրթարանը կարող է ընդունել մինչև 19 երեխա:

N	*Անվանում*	*Բնութագիր*	*Հեռքբերում*
1	Մանկական սեղան (9հատ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ
2	Մանկական աթոռ (29հատ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ
3	Մանկական զգեստապահարան (6 հատ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ
4	Գրապահարան (2 հատ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ
5	Մանկավարժի սեղան (1 հատ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ

6	Մանկավարժի աթոռ (2 հատ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ
7	Մանկական բազմոց (1 հատ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ
8	Խաղալիքների պահարան (2 հատ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ
9	Գորգ (1 հատ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ
10	Գրատախտակ (1 հատ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ
11	Հեռուստացույց (1 հատ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ
12	ԴՎԴ – տակդիր (1 հատ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ
13	Փոշեկուլ (1 հատ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ
15	Շերտավարագույր (20 քմ)	լավ վիճակ	ԾԻԳ պետական հիմնարկ
16	Ուսումնական և ուսուցողական նյութեր	անընդհատ թարմացվող	ԾԻԳ պետական հիմնարկ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Նախակրթարանը տեղակայված է առանձին մասնաշենքում:	Ունի գույքի թարմացման կարիք:
Նախակրթարանը հիմնանորոգված է, կահավորված:	Որոշակի հատվածներում պահանջվում է կոսմետիկ վերանորոգում:
Նախակրթարանի տարածքը մշտապես մաքուր է, պահպանվում են սանիտարահիգենիկ կանոնները, հաճախակի օդափոխվում է:	Ունի դիդակտիկ նյութերի, զարգացնող, ճանաչողական խաղերի թարմացման կարիք:
Նախակրթարանի սաներն ակտիվ մասնակցում են համադպրոցական միջոցառումներին, օգտվում են ճաշարանից:	
Նախակրթարանի սաների մասնակցությամբ հաճախակի իրականացվում են հանդեսներ, միջոցառումներ, թեմատիկ ցուցադրական պարապմունքներ, զբոսանքներ հաստատության այգում:	

Թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլեր.

1. **Դպրոցի խնայողությունների հաշվին փուլային տարբերակով ձեռք բերել դիդակտիկ նյութեր, զարգացնող, ճանաչողական խաղեր՝ նախակրթարանի սաների կրթության ու զարգացման գործընթացն առավել հետաքրքիր և հագեցած դարձնելու նպատակով:**
2. **Դիտարկել շինարարական նյութերի ձեռքբերման հնարավորություններ, այդ թվում՝ սերտորեն համագործակցելով համայնքի հետ:**

3. Ակտիվորեն համագործակցել ծնողական համայնքի հետ՝ բարեկարգման աշխատանքներում վերջիններիս որպես աշխատուժ ներգրավելու նպատակով:

Հաստատությունում ռեսուրս-սենյակի հիմնում

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը հանրակրթական դպրոցում իրականացվում է ներառական կրթության սկզբունքով»:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք, հոդված 17,կետ 5

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- ՀՀ Սահմանադրություն
- «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք
- «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում :

Կարևորելով յուրաքանչյուր աշակերտի, այդ թվում՝ ԿԱՊԿՈՒ աշակերտների համար հանրակթական դպրոցում իրենց զարգացման առանձնահատկություններին համապատասխան անհրաժեշտ պայմանների, միջավայրի ապահովումը՝ նպատակահարմար ենք համարում

հաստատությունում հիմնել ռեսուրս-սենյակ, որտեղ մասնավորապես ԿԱՊԿՈՒ աշակերտները հնարավորություն կունենան առավել հարմարավետ ու տեխնիկապես հագեցած պայմաններում ստանալ մանկավարժահոգեբանական աջակցություն, անցկացնել պարապմունքներ՝ մշտապես լինելով բազմամասնագիտական թիմի ուշադրության կենտրոնում: Ռեսուրս սենյակի ստեղծման համար նախատեսվում է օգտագործել հաստատության նախակրթարանի մասնաշենքում առկա չօգտագործվող 36.4 քմ մակերեսով տարածքը: Մեր համոզմամբ՝ այս կերպ առավել լայն հնարավորություններ և նպաստավոր պայմաններ կստեղծվեն կրթության առանձնահատուկ կարիքներով սովորողների զարգացման, սոցիալականացման, հնարավոր դժվարություններն առավել համակարգված հաղթահարելու համար: Ռեսուրս-սենյակն, ըստ էության, հնարավորություն կստեղծի, որ բազմամասնագիտական թիմն իր մանկավարժահոգեբանական աշխատանքն իրականացնի հարմարավետ, տրամադրող միջավայրում, ինչն էլ իր հերթին բխում է ԿԱՊԿՈՒ սովորողների լավագույն շահերից:

Նպատակ	*Ժամկետներ*	*Պատասխանատուներ*
Հիմնել ռեսուրս-սենյակ՝ ԿԱՊԿՈՒ սովորողների հետ տարվող աշխատանքներն առավել համակարգված, նպատակային և անխոչընդոտ իրականացնելու նկատառումներից ելնելով:	2024թ. հունվար	• Տնօրեն • Տնտեսվար • ՏՄԱԿ-ի համապատասխան մասնագետներ
Սերտորեն համագործակցելով ՏՄԱԿ-ի համապատասխան մասնագետների, ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողների հետ՝ կահավորել սենյակն ըստ առաջնային անհրաժեշտության գույքով և ուսումնաօժանդակ պարագաներով:	2024թ.հունիս-օգոստոս	• Տնօրեն • Տնտեսվար • ՏՄԱԿ-ի համապատասխան մասնագետներ • Ծնողական համայնք

Հաստատության ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական բազայի ուժեղ և թույլ կողմերի ամփոփ վերլուծությունը, դրանից բխող նպատակները, խնդիրներն ու գործողությունները

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դասասենյակների մեծ մասը, գրադարանը, ճաշարանը, համակարգչային սենյակը, նախակրթարանը հիմնանորոգված են, հիմնականում ապահովված են անհրաժեշտ գույքով:	Դպրոցը չունի հանդիսությունների սրահ:
Դպրոցն ունի ջեռուցման համակարգ:	Դպրոցը չունի ռեսուրս-սենյակ:
Դպրոցն ունի անխափան համացանցային կապ	Մարզադահլիճն ունի հիմնանորոգման, մարզագույքով ապահովման կարիք:
Դպրոցն ունի պտղատու այգի:	4 դասասենյակները, ուսուցչանոցն ունեն կոսմետիկ նորոգման կարիք:
Դպրոցն ունի դեկորատիվ բույսերի անկյուն:	Միջին դպրոցում գույքն ունի թարմացման կարիք:
Դպրոցն ունի մարզահրապարակ:	Դպրոցը նոր գույքի ձեռքբերման համար չունի ֆինանսական բավարար միջոցներ:
Դպրոցն ունի վերանորոգված սանհանգույցներ:	Դպրոցն ունի բնագիտական առարկաների նյութատեխնիկական բազայի ձեռքբերման կարիք:
Դպրոցն ունի շուրջօրյա ջրամատակարարում:	Համակարգչային լսարանն ունի նոր համակարգիչների և օժանդակ սարքավորումների թարմացման կարիք:
Դպրոցն ունի բարեկարգ բակ:	
Դպրոցն ունի վերանորոգված շքամուտք:	

Թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլեր.

1. Կազմել աշխատանքային խումբ վարչական աշխատողների, ուսուցիչների, ծնողների, աշակերտների ներգրավվածությամբ, քննարկել առկա հիմնախնդիրները, առաջադրել առաջնահերթությունները, հանդես գալ դրանց հնարավոր լուծման առաջարկություններով:
2. Կարևոր համարել դպրոցի ֆիզիկական վիճակի բարելավումը, նյութատեխնիկական բազայի համալրումը՝ գործողությունները պլանավորելով համապատասխան առաջնահերթությունների հիման վրա

Գործողություններ

N	*Միջոցառում*	*Ժամկետներ*	*Պատասխանատուներ*
1	Լաբարատորիայի ստեղծում	2024-2025 ուստարի	• Տնօրեն • Տնտեսվար • Ոլորտի մասնագետներ
2	Ռեսուրս-սենյակի հիմնում	2024-2025 ուստարի	• Տնօրեն • Տնտեսվար • Ոլորտի մասնագետներ
3	Մարզադահլիճի վերանորոգում	2024-2025 ուստարի	• Տնօրեն • Տնտեսվար • Ոլորտի մասնագետներ
4	Դասասենյակների կոսմետիկ նորոգում	2024-2028թթ.	• Տնօրեն • Տնտեսվար • Ոլորտի մասնագետներ
5	Նյութատեխնիկական բազայի ձեռքբերում, համալրում	2024-2028թթ.	• Տնօրեն • Տնտեսվար • Ոլորտի մասնագետներ

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք
- Ուս հաստատության օրինակելի կանոնադրություն

Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ[1]: Դպրոցի կառավարման մարմիններն են՝ հիմնադիրը, ԿԳՄՍ նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը (լիազորված մարմին), կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, գործադիր մարմինը՝ տնօրենը և վարչատնտեսական մասի համակարգողը/այսուհետև համակարգող[2]: Ուսումնական հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը հաստատության խորհուրդն է, որի գործառույթներն ամրագրված են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում և Ուսումնական հաստատության կանոնադրության մեջ:

Կառավարման խորհրդի լիազորությունները՝

- Կառավարման խորհուրդը հաստատում է իր աշխատակարգը, դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական, այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի կանոնները:
- Կառավարման խորհուրդը քննարկում է զարգացման ծրագրի, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները:
- Իր կազմից փակ քվեարկությամբ ընտրում է նախագահ:
- Դպրոցի կառավարման խորհուրդը իր լիազորությունների շրջանակում իրականացնում է դպրոցի ընթացիկ գործունեության վերահսկումը, քննարկում դպրոցի առաջիկա անելիքները, տալիս հավանություն, վերահսկողություն է իրականացնում դպրոցի զարգացման ծրագրի կատարման նկատմամբ, քննարկում ֆինանսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները:
- Կառավարման խորհուրդը իր գործունեությամբ նպաստում է դպրոցի բնականոն զարգացմանը:
- Կառավարման նոր համակարգի համաձայն՝ կառավարման խորհուրդը աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկում է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսում է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տալիս եզրակացություն:
- Տնօրենի ներկայացմամբ քննարկում և հավանություն է տալիս ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները, տալիս է հավանություն և ներկայացնում

[1] ՀՀ Կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի n 1392-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին ՀՀ Կառավարության՝ 15 հուլիսի 2010 թվականի N 954-Ն որոշում:

[2] Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին ՀՀ Կառավարության՝ 2023 փետրվարի 16 N 216-Ն որոշում:

համապատասխան լիազորված մարմնին ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները :

- Մասնակցում է դպրոցի ներքին գնահատմանը և քննարկում արտաքին գնահատումը:
- Կառավարման խորհուրդը սահմանում է հիմնադրի սահմանած կարգով դպրոցի շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները , լսում է գույքի օտարման և/կամ ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների առաջարկությունները[3]:

«Գետարգելի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ում կանոնադրության համաձայն գործում է միացյալ կոլեգիալ կառավարման խորհուրդ՝ «Գետարգելի հիմնական դպրոց», «Պտղնիի միջնակարգ դպրոց» և «Վերին Պտղնիի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների խորհուրդ՝ բաղկացած 19 անդամից: Համաձայն կարգի՝հաստատության տնօրենը միացիալ կոլեգիալ կառավարման մարմնի նիստերին մասնակցում է խորհրդակցական ձայնի իրավունքով: Միացիալ կոլեգիալ խորհրդի անդամներն են.

Ատոմ Պողոսյան	Պտղնիի ՈՒԽ
Կորյուն Խաչատրյան	Պտղնիի ՈՒԽ
Անգին Հայրյան	Պտղնիի ԾԽ
Օվսաննա Սարգսյան	Պտղնիի ԾԽ
Լյուդմիլա Հավհաննիսյան	Պտղնի համայնք
Աննա Արուճյան	Վ. Պտղնի համայնք
Արևիկ Խալաթյան	Վ. Պտղնիի ԾԽ
Աննա Սերոբյան	Վ. Պտղնիի ԾԽ
Շամիր Աղաջանյան	Վ. Պտղնիի ՈՒԽ
Վարթիթեր Ազիզյան	Վ. Պտղնիի ՈՒԽ
Կարինե Ղարիբյան	Գետարգելի ԾԽ
Արուս Գրիգորյան	Գետարգելի ԾԽ
Սուսաննա Գրիգորյան	Գետարգելի ՈՒԽ
Նարինե Մարգարյան	Գետարգելի ՈՒԽ
Սամվել Թորոսյան	Գետարգել համայնք
Նարինե Խաչատրյան	Կոտայքի մարզպետարան
Ավագ Ավագյան	Կոտայքի մարզպետարան
Նորայր Մելիքյան	ԿԳՄՍ
Հմայակ Ղազարյան	ԿԳՄՍ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Խորհրդի նիստերը գումարվում են՝խստորեն պահպանելով սահմանված կարգը:	Խորհրդի որոշ անդամներ հաճախակի բացակայում են նիստերին:
Քննարկվում են տնօրենի կողմից ներկայացված հաշվետվությունները՝	Խորհրդի որոշ անդամների մոտ նկատելի է պասիվություն:

[3] ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի n 113-ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին ՀՀ ԿԳՄՍ նախարարի 15 մարտի 2021 թ. N 25-Ն հրաման:

ուսումնադաստիարակչական գործընթացի և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների վերաբերյալ:	
Վերահսկվում է դպրոցի զարգացման ծրագրի կատարումը:	Խորհրդի որոշ անդամների մոտ նկատելի է կրթության ոլորտին վերաբերող կանոնադրության թույլ իմացություն:
Լսվում և քննարկվում են դպրոցի տնօրենի կողմից ներկայացվող առաջարկներ, որոնք վերաբերում են հաստատության առաջնային կարիքների բավարարմանը:	Քննարկվող հիմնահարցերի շուրջ բազմաթիվ դեպքերում նկատելի է տարակարծության, նպատակային և կառուցողական առաջարկությունների պակաս:
Ակտիվորեն քննարկվում և լուծումներ են առաջադրվում հաստատության ֆինանսատնտեսական հիմնահարցերի վերաբերյալ:	
Ակտիվորեն քննարկվում և լուծումներ են առաջադրվում դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման առումով:	
Քննարկվում և հաստատվում են դպրոցի ներքին կարգապահական և վարքագծի կանոնները:	
Քննարկվում է դպրոցի ներքին և արտաքին գնահատման արդյունքները:	
Հաստատում է ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգը՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանի:	

Թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլեր.

1. Հնարավոր խնդիրներից խուսափելու նպատակով՝ դիտարկել խորհրդի ոչ կոմպետենտ անդամների փոխարինման հարցը՝ համալրելով այն կարողունակ, իրավական ակտերի բարձր իմացությամբ թեկնածուներով:
2. Անվերապահորեն ապահովել թափանցիկություն, անաչառություն, լսել և քննարկել յուրաքանչյուրի կարծիքը՝ ապահովելով տարակարծություն և բազմազանություն:
3. Խորհրդի անդամների իրազեկվածությունը բարձրացնելու, վերջիններիս դպրոցի հետ կապը սերտացնելու նկատառումներից ելնելով՝ հաճախակի հրավիրել նրանց դպրոցում իրականացվող մշակութային, սպորտային միջոցառումներին:

4. **Աշխատանքներն առավել կանոնակարգված իրականացնելու համար ստեղծել առցանց տիրույթ, որտեղ միացյալ կոլեգիալ մարմնի անդամները հնարավորություն կունենան բաց և թափանցիկ քննարկումներ ունենալ, հանդես գալ առաջարկություններով:**

Գործողություններ

N	*Միջոցառում*	*Ժամկետներ*	*Պատասխանատուներ*
1	Ստեղծել քննարկումների առցանց հարթակ՝ ներգրավելով խորհրդի բոլոր անդամներին:	2023-2024 ուստարի	• Տնօրեն • Կոլեգիալ կառավարման խորհուրդ
2	Կազմակերպել սեմինար-քննարկում՝ վերաբերող կոլեգիալ կառավարման խորհրդի դերին, գործառույթներին:	2023-2024 ուստարի	• Տնօրեն • Կոլեգիալ կառավարման խորհուրդ
3	Աշխատանքներն առավել թափանցիկ և բաց իրականացնելու նկատառումներից ելնելով՝ զարգացման ծրագրի կատարողականները ներկայացնել հաշվետվությունների տեսքով յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին:	յուրաքանչյուր ուստարվա մեջ 2 անգամ	• Տնօրեն

Հաստատության մանկավարժական խորհուրդը

Ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը խորհրդակցական մարմին է, որը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին» ՀՀ օրենքով, «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ և մի շարք այլ իրավական ակտերով:

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում :
- Ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն

Համագործակցության վերլուծությունը

«Գետարգելի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհուրդը բաղկացած է 19 անդամից, որը կազմավորվել է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում 1 տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի նիստերն անց են կացվում առնվազն ամիսը 2 անգամ: Նիստը վարում է հաստատության տնօրենը, ով ի պաշտոնե հանդիսանում է խորհրդի նախագահը: Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրում է անդամներից ընտրված մշտական քարտուղարը:

«Գետարգելի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի կազմը.

1. Աղասարյան	Դիանա	Հրանտի
2.Մարգարյան	Կարինե	Ժորայի
3. Բաբայան	Մարի	Լևոնի
4. Մարգարյան	Նարինե	Աշոտի
5.Կարապետյան	Ֆուզելինա	Ֆրունզիկի
6.Պետրոսյան	Ինգա	Կամոյի
7. Թորոսյան	Սոնա	Ծառուկի
8. Ալեքսանյան	Տաթևիկ	Տիգրանի
9. Ղալայան	Աիդա	Արարատի
10. Գրիգորյան	Սուսաննա	Աբովի
11. Ափոյան	Արգինե	Էլմիրի
12.Այվազյան	Նարինե	Հովհաննեսի

13. Մելքումյան	Ինեսա	Լեոնիդի
14 Գևորգյան	Քրիստինե	Հովհաննեսի
15 Հովհաննիսյան	Արմինե	Ալեքսանի
16 Հովակիմյան	Կամո	Վանիկի
17 Խուդավերդյան	Մնացական	Հրաչի
18 Դանիելյան	Ալվարդ	Սամվելի
19.Չեպուրնիխ	Հասմիկ	Արսենի

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Մանկավարժական խորհրդի նիստերն անց են կացվում՝ համաձայն կարգի, անհրաժեշտության դեպքում՝ հրավիրվում է խորհրդի արտահերթ նիստ:	Որոշ ուսուցիչների մոտ նկատվում է անտարբերություն՝ նորը սովորելու, սեղծագործական, նորարարական գաղափարներ առաջադրելու, ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ կիրառելու, գործընկերների հետ համատեղ ծրագրեր իրականացնելու տեսանկյունից:
Խորհրդի նիստում քննարկվում են ուսումնական գործընթացին վերաբերող հիմնահարցեր. ■ **հիմնական ծրագրերի իրագործումը՝ համապատասխան հանրակրթության պետական չափորոշչին,** ■ **հանրակրթական ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպումը հաստատությունում,** ■ **հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, ինչպես նաև նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները և այլ նյութեր,** ■ **սահմանված կարգով իր իրավասությունների սահմաններում ընդունում է որոշումներ:**	Ուսումնական հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացին վերաբերող առանցքային հիմնահարցերի քննարկման, տարեկան արդյունքների ամփոփման ժամանակ նկատելի է տարակարծության բացակայություն, վառ ընդգծված անտարբերություն որոշ ուսուցիչների շրջանում: Ուսուցիչների շրջանում նկատվում է պասիվություն՝ մանկավարժական խորհրդի նիստերին կարծիք, դիրքորոշում հայտնելու, թիմային աշխատանք կատարելու առումով:

Հաստատության մանկավարժական խորհուրդի դերի և գործունեության կարևորմանը և ուսուցիչների ակտիվ մասնակցության ապահովմանն ուղղված քայլեր

1. Մշակել ակտիվ, նախաձեռնող, նորարար ուսուցիչների խրախուսման ներդպրոցական գործիքակազմեր:
2. Ստեղծել համապատասխան մթնոլորտ ուսուցիչների փոխգործակցության և համագործակցության համար:
3. Մեփական օրինակով ցույց տալ բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի, բարեվարքության, ժողովրդավարության և մարդասիրական մղումների կարևորությունը աշխատանքային գործունեության ընթացքում:
4. Հարգել մանկավարժական աշխատողների՝ օրենքով սահմանված իրավունքները և հետևողականորեն նպաստել վերջիններիս պարտականությունների կատարմանը:
5. Ապահովել իրավահավասարության սկզբունքը բոլոր աշխատողների համար:
6. Նյութատեխնիկական, մեթոդամանկավարժական ռեսուրսներով ապահովել մանկավարժական աշխատողներին:
7. Բացառել որևէ տեսակի բռնությունը, արժանապատվության ոտնահարումը, նվաստացումը մանկավարժական աշխատողների շրջանում՝ առաջնորդվելով բացառապես օրենքով և օրինակելի վարքականոններով:
8. Խրախուսել տարակարծությունը, լսել, քննարկել մանկավարժական աշխատողների առաջարկությունները, տեսակետները, դժգոհությունները:

Գործողություններ

N	*Միջոցառում*	*Ժամկետներ*	*Պատասխանատուներ*
1	Ներքին կարգապահական կանոնների, բարեվարքության նորմերի լրամշակում և սահմանում:	2023-2028 թթ. յուրաքանչյուր ուստարվա սկզբին	• Կառավարման խորհուրդ • Մանկավարժական խորհուրդ • Աշակերտական խորհուրդ • Ծնողական խորհուրդ
2	Փոխադարձ դասալսումների, ինտեգրված դասերի իրականացման ժամանակացույցերի կազմում և իրականացում	2023-2028 թթ. յուրաքանչյուր ուստարվա սկզբին	• Տնօրեն • Ուս. Գծով տեղակալ • Մանկավարժական խորհուրդ
3	Հաստատությունում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ստեղծում և պահպանում:	2023-2028 ուստարի պարբերաբար	• Մանկավարժական խորհուրդ • Հոգեբան

4	Ինքնակրթության, համագործակցության խթանման, նորագույն տեխնոլոգիաների կիրառման և ուսուցիչների մոտիվացիան բարձրացնելու նպատակով թեմատիկ բանավեճերի, խմբային քննարկումների, կլոր սեղանների, սեմինարների, ներդպրոցական և արտադպրոցական այլ միջոցառումների պլանավորում և անցկացում:	2023-2028 ուստարի պարբերաբար	• Տնօրեն • Ուս. Գծով տեղակալ • Մանկավարժական խորհուրդ
5	Մանկավարժական համակազմի կարիքներին, մտահոգություններին, դժգոհություններին ծանոթանալու նպատակով սոցիոլոգիական հարցումների, հարցախույզերի իրականացում:	2023-2028 ուստարի պարբերաբար	• Տնօրեն • Ուս. Գծով տեղակալ Մանկավարժական խորհուրդ
6	Մանկավարժական խորհրդի նիստերում անվանական պախարակումների, նվաստացումների բացառում, առողջ համագործակցային հարաբերությունների հաստատում	2023-2028 ուստարի պարբերաբար	• Տնօրեն • Ուս. Գծով տեղակալ • Մանկավարժական խորհուրդ

Հաստատության առարկայական մեթոդական միավորումները

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում :
- Ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն

Մեթոդական միավորումը հանրակրթական ուսումնական հաստատությունում ուսուցիչների մեթոդական աշխատանքը համակարգող գլխավոր օղակն է: Մեթոդական աշխատանքը դպրոցում իրենից ենթադրում է մանկավարժական մի համակարգ, որի հիմնական նպատակն է մանկավարժական լավագույն փորձի փոխանակումը, մեթոդամանկավարժական և ուսումնադաստիարակչական հարցերի, արտադասարանական միջոցառումների կազմակերպումը, ուսումնական տարաբնույթ հարցերի քննարկումը: Հաստատության մեթոդական միավորումների գործունեության հիմքը կրթության որակի բարելավման անհրաժեշտությունն է:

Հաստատությունում գործում են երեք մեթոդական միավորումներ.

- Տարրական կրթության մեթոդական միավորում
- Բնագիտական առարկաների մեթոդական միավորում
- Հումանիտար առարկաների մեթոդական միավորում

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Մեթոդական միավորման նիստերն իրականացվում են՝ համապատասխան կանոնագարգի, կազմվում են արձանագրություններ:	Որոշ ուսուցիչների շրջանում նկատելի է մեթեդական միավորումների աշխատանքներին պասիվ ներգրավվածություն, անտարբերություն:
Մեթոդական միավորումները, որպես դպրոցի կառուցվածքային միավոր, իրականացնում են հետևյալ աշխատանքները. ■ **առարկայական թեմատիկ պլանավորումների պատրաստում,** ■ **կրթության վերաբերյալ նորմատիվային և մեթոդական փաստաթղթերի ուսումնասիրություն,** ■ **տարբեր տեսակի դասերի անցկացման մեթոդաբանության կատարելագործում և դրանց կրթական, մեթոդական և նյութատեխնիկական աջակցություն,** ■ **մանկավարժական փորձի փոխանակում, փոխադարձ դասալսումների անցկացում, արդյունքների քննարկում, վերջնարդյունքների ամփոփում,** ■ **հեղինակային ծրագրերի, մեթոդների**	Մի շարք ուսուցիչներ դժվար են համագործակցում, խուսափում են համատեղ աշխատանքներից, նախընտրում են ինքնուրույն պլանավորել իրենց մեթոդամանկավարժական աշխատանքները:

վերլուծություն, ■ ներդպրոցական ուսումնադաստիարակչականկան գործընթացի հիմնախնդիրների քննարկում, հնարավոր լուծուման եղանակների առաջադրում, ■ առարկայի դասավանդման վիճակի մշտադիտարկում, վերլուծություն, ■ ինտեգրված, ոչ ֆորմալ դասերի, նախագծային, հետազոտական աշխատանքների պլանավորում, իրականացում, արդյունքների վերլուծություն, ■ առաջադեմ մանկավարժական փորձի ուսումնասիրություն և ընդհանրացում, ■ ժամանակակից ուսուցման մեթոդների քննարկում, փորձնական կիրառում, ■ նորարարական տեխնոլոգիաների ուսումնասիրություն և ներդնում և այլն:	

Թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլեր.

1. Տնօրենի, ուսումնական գծով տեղակալի անմիջական վերահսկողությամբ մշտադիտարկել մեթոդական միավորման աշխատանքները: 2. Մշակել ներդպրոցական խրախուսման մեխանիզմներ՝ մեթոդական միավորման աշխատանքներին առավել ակտիվ մասնակցություն ցուցբերող ուսուցիչներին խրախուսման և ոգևորման համար: 3. Ուշադրության տակ պահել մեթոդական միավորման տարեկան աշխատանքային պլանը և դրա կատարողականի հաշվետվությունները, մանկավարժական խորհրդի նիստերում կատարել կատարված աշխատանքի վերլուծություն, քննարկում: 4. Խրախուսել ուսուցիչների նորարարական գաղափարները, ինքնակրթության փորձերը, նրանց կողմից ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը: 5. Ապահովել ուսուցիչներին անհրաժեշտ մեթոդամանկավարժական, նյութատեխնիկական ռեսուրսներով՝ դպրոցում ուսումնադաստիարակչական գործընթացն արդյունավետ կազմակերպելու և կրթության որակը բարձրացնելու նպատակով:

6. **Նպաստել մեթոդական միավորման անդամների միջև փոխադարձ վստահության մթնոլորտը, հարգանքի և արդյունավետ համագործակցության հաստատմանը:**

Գործողություններ

N	*Միջոցառում*	*Ժամկետներ*	*Պատասխանատուներ*
1	Վերահսկել մեթոդական միավորման նախագահի և անդամների մատենավարության իրականացման գործընթացը/ հաշվետվություններ, արձանագրություններ, առարկայական զեկույցներ/:	2023-2028 ուստարի ամեն ամիս	• Տնօրեն • Ուս. գծով փոխտնօրեն • Առարկայական մասնախմբի նախագահ
2	Ուսուցիչների հետ համատեղ անցկացնել մեթոդական մրցույթներ, մեթոդական գաղափարների տոնավաճառներ, մեթոդական վարպետության դասեր հետևյալ թեմաներով՝ • «Դասի մոդելավորում՝ որոշակի մեթոդների կիրառմամբ» • «Առարկայական, արտադասարանական միջոցառումների մշակում և իրականացում» • «Տրված թեմայի, խնդրի վերաբերյալ սեփական փորձի ներկայացում» • «Ուսումնասիրած թեմայի, խնդրի շուրջ շնորհանդեսի նախապատրաստում» • «Սեփական ձեռքբերումների ներկայացում»:	2023-2028 ուստարի պարբերաբար	• Տնօրեն • Ուս. գծով փոխտնօրեն • Առարկայական մասնախմբի նախագահ • Ուսուցիչներ
3	Ուսուցիչների մանկավարժական վարպետության կատարելագործման, օրինակելի փորձի փոխանակման նպատակով կազմել փոխադարձ դասալսումներ ժամանակացույց:	2023-2028 ուստարվա սկիզբ	• Տնօրեն • Ուս. Գծով փոխտնօրեն • Առարկայական մասնախմբի նախագահ • Ուսուցիչներ
4	Սկսնակ ուսուցիչների հետ իրականացնել մեթոդական աջակցման, մասնագիտական հմտությունների կատարելագործմանն ուղղված աշխատանքներ:	2023-2028 ուստարի պարբերաբար	• Տնօրեն • Ուս. գծով փոխտնօրեն • Առարկայական մասնախմբի նախագահ

Հաստատության ծնողական խորհուրդը

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- ՀՀ Սահմանադրություն
- ՀՀ ընտանեկան օրենսգիրք
- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում
- Ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն

Հաստատության ծնողական խորհուրդը բաղկացած է 9 անդամից, որոնք հանդիսանում են տարրական և միջին դպրոցի թվով 9 դասարանների ծնողական կոմիտեների նախագահները:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ակտիվորեն մասնակցում են դպրոցում իրականացվող կազմակերպչական աշխատանքներին:	Որոշ ծնողների մոտ նկատելի է պասիվություն՝ իրենց իրավունքների սահմաններում դպրոցի գործունեությանը մասնակցելու տեսանկյունից
Մերտորեն համագործակցելով ուսուցչական կազմի հետ՝ նպաստում են աշակերտների բարոյական դաստիարակությանը, դպրոցում կարգապահական կանոնների պահպանմանն ու բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավմանը:	Որոշ ծնողների մոտ լիարժեքորեն ձևավորված չեն ծնողավարական հմտությունները, ինչը մեծապես խոչընդոտում է ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացմանը:
Բացահայտում և տնօրինությանն են ներկայացնում դասարաններում առկա սոցիալապես անապահով կամ այլ խոցելի հիմնախնդիրներով երեխաների կարիքները, քննարկում վերջիններիս աջակցելու և	Ծնողական համայնքում կան պասիվ ծնողներ, որոնք ոչ միայն անտարբեր են դպրոցի գործունեությանը, այլև ընդգծված անտարբերություն են ցուցաբերում իրենց երեխայի ուսումնադաստիարակչական

օժանդակելու եղանակներ:	գործընթացին. չեն մասնակցում ծնողական ժողովներին, չեն համագործակցում ուսուցիչների, այլ մանկավարժական աշխատողների հետ:
Տնօրինությանը հանդես են գալիս առաջարկություններով ամառային արձակուրդներին կամավորական հիմունքներով իրենց դասարաններում կոսմետիկ մաքրման, բարեկարգման աշխատանքներ իրականացնելու համար:	
Ելնելով անհրաժեշտությունից՝ դիմում են հաստատության տնօրինությանը իրենց երեխաների կարիքների գնահատման և հնարավոր մանկավարժահոգեբանական աջակցություն ստանալու համար	

Անշուշտ, մեծ է ուսուցչի՝ որպես կրթողի, դաստիարակողի, ուղղորդողի, խրախուսողի դերը սովորողի առաջադիմության, սովորելու մոտիվացիայի, բարձրացման, կարգապահ և բարեվարք լինելու գործում, սակայն հարկ է նկատել, որ ուսուցիչն ավելի գործուն և արդյունավետ է կազմակերպում իր աշխատանքը, երբ սովորողի ծնողի կամ օրինական ներկայացուցչի հետ ունի ընդհանուր նպատակ: Այս առումով առանցքային է երկու սուբյեկտների առողջ, նպատակային համագործակցությունը, խնդիրների միասնական վերհանումն ու լուծումը, ինչն էլ թույլ է տալիս, որ երկու կողմերն այս գործընթացում փոխլրացնեն ու շարունակեն միմյանց: Միայն այս կերպ է հնարավոր արդյունավետորեն իրացնել սովորողների՝ կրթություն ստանալու իրավունքը:

Ծնողական համայնքի հետ ակտիվ համագործակցություն ստեղծելու քայլերը.

1. Ծնողների շրջանում իրազեկվածությունը բարձրացնելու, ծնողավարական հմտությունները զարգացնելու նկատառումներից ելնելով՝ տնօրենի, մանկավարժական աշխատողների կողմից անցկացնել ճանաչողական սեմինարներ, խմբային քննարկումներ:

2. Սովորողների ծնողներին իրազեկել օրենքով սահմանված իրենց իրավունքներին և պարտականություններին:
3. Առկա հիմնախնդիրները քննարկելու, մեծամասնության կարծիքները մտահոգություններն իմանալու նկատառումներից ելնելով՝ հաճախակի իրականացնել սոցիոլոգիական հարցումներ:
4. Նպատակ ունենալով բարելավել ուսումնադաստիարակչական գործընթացը, ամրապնդել ծնող-դպրոց կապի շարունակականությունը՝ կազմակերպել բաց դռների օրեր
5. Ապահովել ծնողների ներկայացվածությունը դպրոցում, վերջիններիս մասնակցությունն իրենց երեխաների ուսումնադաստիարակչական գործընթացին՝ համաձայն «Հանրակրթության մասնի» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի:
6. Սահմանված կարգով անցկացնել ծնողական ժողովներ, որոշ դեպքերում՝ համագործակցել առանձին ծնողների հետ:
7. Սովորողների ծնողների կամ օրինական ներկայացուցիչների հետ համատեղ ջանքերով հասնել խոչընդոտների ու դժվարությունների հաղթահարման համար անհրաժեշտ արդյունավետ մեխանիզմների մշակմանը:
8. Առաջնորդվել հումանիստական մոտումներով, դրսևորել մասնագիտական և մարդկային բարձր որակներ, խուսափել կոնֆլիկտային իրավիճակներից:

Գործողություններ

N	*Միջոցառում*	*Ժամկետներ*	*Պատասխանատուներ*
1	Կազմակերպել սեմինար-քննարկում, որի շրջանակներում ծնողներին իրազեկել օրենքով սահմանված իրենց իրավունքներին և պարտականություններին:	յուրաքանչյուր ուստարվա մեջ 2 անգամ	• Տնօրեն • Ուս. Գծով փոխտնօրեն • Առարկայական մասնախմբի նախագահ • Ուսուցիչներ
2	Անցկացնել «Բուլինգը և հետևանքները» խորագրով սեմինար:	յուրաքանչյուր ուստարվա մեջ 2 անգամ	• Տնօրեն • Ուս. Գծով փոխտնօրեն • Առարկայական մասնախմբի նախագահ • Ուսուցիչներ
3	Նպատակ ունենալով ծնողների շրջանում բարձրացնել ծնողավարական հմտությունները՝ կազմակերպել ճանաչողական սեմինար «Ճանաչենք երեխաներին» խորագրով:	յուրաքանչյուր ուստարվա մեջ 2 անգամ	• Տնօրեն • Դաղեկ • ՏՄԱԿ-ից հրավիրված հոգեբան, սոց. մանկավարժ

4	Ծնողների հետ ԿԱՊԿՈՒ երեխաների վերաբերյալ կազմակերպել թեմատիկ քննարկում՝ հնարավոր բացասական տրամադրությունները բացառելու նկատառումներից ելնելով:	2023-2024 ուստարի	• Տնօրեն • Դաղեկ • ՏՄԱԿ-ից հրավիրված հոգեբան, հատուկ մանկավարժ
5	Անցկացնել «Վնասակար սովորություններ» խորգրով սեմինար:	2023-2024 ուստարի	• Տնօրեն • Դասղեկ • ՏՄԱԿ-ից հրավիրված հոգեբան, սոց. Տանկավարժ • Իրավապահ մարմնի ներկայացուցիչ

Անկախ ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակից, ծնողի կրթության աստիճանից՝ վերջինիս ներգրավվածությունը սովորողի կրթության գործընթացին անփոխարինելի կարելի է համարել սովորողի զարգացման վրա թողած ազդեցության առումով: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ամեն կերպ խրախուսել դպրոց-ծնող առողջ փոխգործակցային հարաբերությունների հաստատումն ու շարունակականության ապահովումը:



«Ուսումնական հաստատությունը ծնողական խորհրդի աչքերով»

Հարցախույզ

Հարցախույզին մասնակցել են ծնողական խորհրդի թվով 15 անդամ, վերջիններիս համար նախօրոք կազմվել է 10 հարցից բաղկացած հարցաթերթ: Հարցումը նպատակ ունի պարզել կրթական գործընթացի մասնակից հանդիսացող ծնողական համայնքի կարծիքը՝ ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության, բարոյահոգեբանական մթնոլորտի, իրենց իրավունքների պաշտպանության և դպրոցի կառավարմանը մասնակցության ապահովման վերաբերյալ:

N	Հարցադրում	Պատասխանը տոկոսներով
1	Ինչպե՞ս կգնահատեք Ձեր երեխայի ուսումնադաստիարակչական գործընթացի	73%-բարձր 20%-միջին 7%- ցածր

	արդյունավետությունը նշված ուս. հաստատությունում: • Բարձր • Միջին • Ցածր	
2	Արդյոք Ձեր երեխայի իրավունքները՝ սահմանված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով, պաշտպանվա՞ծ են դպրոցում: • Այո • Ոչ	80%-այո 20%-ոչ
3	Ինչպե՞ս կգնահատեք բարոյահոգեբանական մթնոլորտի մակարդակը նշված ուս. հաստատությունում: • Բարձր • Միջին • Ցածր	53%-բարձր 33%-միջին 14%- ցածր
4	Ձեր երեխան երբևէ ենթարկվե՞լ է բռնության, խտրականության այլ սովորողների կամ ուսուցիչների կողմից: • Այո • Ոչ	60%-ոչ 40%-այո
5	Արդյոք դպրոցն իրականացնու՞մ է բավարար չափով միջոցառումներ բուլինգի կանխարգելման նպատակով: • Այո • Ոչ	80%-այո 20%-ոչ
6	Երբևէ դիմե՞լ եք ուսումնական հաստատությանը Ձեր երեխայի առանձնահատուկ կարիքների գնահատման համար: • Այո • Ոչ	86%-ոչ 14%-այո
7	Արդյոք Ձեր իրավունքները՝ սահմանված «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով, պաշտպանվա՞ծ են դպրոցում: • Այո • Ոչ	73%-այո 27%-ոչ
8	Մասնակցու՞մ եք ուսումնական հաստատության կառավարմանը՝ օրենքով նախատեսված Ձեր լիազորությունների շրջանակներում: • Այո • Ոչ	67%-այո 33%-ոչ
9	Ինչպե՞ս կգնահատեք դպրոց- ծնող կապը: • արդյունավետ • անարդյունավետ	80%- արդյունավետ 20%-անարդյունավետ
10	Արդյոք համագործակցում եք ծնողական համայնքի հետ: • Այո • Ոչ • Երբեմն	60%- այո 33%- երբեմն 7%-ոչ

Հաստատության աշակերտական խորհուրդը

Հաստատությունում սովորողների ինքնակազմակերպման և ինքնակառավարման կարողությունների զարգացման, վերջիններիս ինքնադրսևորման, կարծիքի ազատ արտահայտման, համագործակցության, փոխգործակցության ապահովման նպատակով գործում է աշակերտական խորհուրդը:

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք
- Ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրություն

Հաստատությունում աշակերտների թիվը 2018-2023թթ.



ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Հաստատության աշակերտական խորհուրդն ունի կանոնադրություն, որի հիմքով պլանավորում և իրականացնում է իր գործունեությունը:	Արտադպրոցական աշխատանքների իրականացման ժամանակ նկատելի է չափավոր պասիվություն:
Աշակերտական խորհուրդը ակտիվորեն մասնակցում է ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներին, ինչպես նաև հանդես է գալիս սեփական	Համագործակից հանդիսացող ուսումնական հաստատությունների հետ առկա չէ միջդպրոցական համագործակցություն:

նախաձեռնություններով: Խորհրդի անդամներն իրենց գործունեությունը ծավալում են՝ առաջնորդվելով ժողովրդավարության, հումանիստական սկզբունքներով, խստերեն պահպանում են բարեվարքության կանոնները: Խորհրդի անդամների միջև առկա է առողջ համագործակցություն և իրականացվող ծրագրերին ու նախաձեռնություններին համաչափ մասնակցություն:	
Խորհրդի անդամները նախաձեռնող են, հաճախակի հանդես են գալիս առկա հիմնախնդիրների բարձրացմամբ, տնօրինությանն են ներկայացնում դրանց վերաբերող հաշվետվություններ, առաջադրում հիմնախնդիրների լուծման ելքեր, եղանակներ:	Ծավալային միջոցառումների և ծրագրերի իրականացման ժամանակ ժամանակի ոչ օպերատիվ օգտագործում:
Հաճախակի իրականացնում են ինքնավարության օրեր՝ նախաձեռնելով հետաքրքիր խմբային աշխատանքներ, ցուցադրական դասեր:	Առկա է մանկավարժական աշխատողների հետ համագործակցության պակաս:
Նախաձեռնում և իրականացնում են համայնքի հանրային նշանակության վայրերի, դպրոցամերձ տարածքի մաքրման աշխատանքներ:	

Դպրոցում աշակերտական խորհրդի դերի կարևորման և ներգրավվածության բարձրացմանն ուղղված քայլերը.

1. Ամեն կերպ օժանդակել աշակերտական խորհրդի նորարարական գաղափարներին, նախաձեռնություններին, ապահովել անհրաժեշտ ռեսուրսներով:
2. Խրախուսել խորհրդի նախաձեռնությունները, քննարկել վերջիններիս հետ ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավմանն ուղղված իրենց տեսլականը, գտներ՝ ելքեր սովորողների շրջանում օրինակելի վարքականոնների պահպանման համար:
3. Նպաստել միջդպրոցական աշակերտական խորհուրդների համագործակցության հաստատմանը, այդ շրջանակներում ակտիվորեն օժանդակել համատեղ ծրագրերի իրականացմանը:
4. Ստեղծագործող, նորարար, օժտված սովորողներին խրախուսել՝ նպատակ ունենալով նպաստել նաև առավել պասիվ սովորողների սոցիալականացմանն ու ներգրավմանը:
5. Ամրապնդել խորհրդի անդամների և մանկավարժական աշխատողների միջև

համագործակցությունը:

6. Կարևորել աշակերտական խորհրդի դերը դպրոցում, նպաստել վերջինիս իրավասությունների շրջանակի ընդլայնմանը:
7. Ապահովել աշակերտների մասնակցությունը դպրոցի կառավարման գործընթացում:
8. Բարձրացմել աշակերտների սոցիալական և քաղաքացիական պատասխանատվությունը, օժտել վերջիններիս թույլատրելի ինքնուրույնությամբ:
9. Բարձրացնել սովորողների իրավագիտակցությունը, պարբերաբար իրազեկել վերջիններիս իրենց իրավունքների և պարտականությունների մասին:
10. Մեծ ուշադրություն դարձնել աշակերտների մոտ ինքնակառավարման մեխանիզմների դրսևորումներին, սթրեսակայունության մակարդակին, կոնֆլիկտայնությանը, բացատրական աշխատանքների միջոցով բացառել բուլինգի, ֆիզիկական և հուզական բռնության ցանկացած դրսևորում:

Գործողություններ

N	*Միջոցառում*	*Ժամկետներ*	*Պատասխանատուներ*
1	Լրամշակել և արդիականացնել ներքին կանոնակարգը և աշակերտի բարեվարքության կանոնները:	յուրաքանչյուր ուստարվա մեկնարկին	• Տնօրեն • Դասղեկ • Աշ. խորհուրդ
2	Պարբերաբար իրականացնել հանդիպումներ խմբային քննարկումների ձևաչափով, սովորողների կարծիքները, առաջարկությունները, դժգոհություններ լսելու նպատակով:	յուրաքանչյուր ուստարվա մեջ 2 անգամ	• Տնօրեն • Ուս. Գծով փոխտնօրեն • Առարկայական մասնախմբի նախագահ • Ուսուցիչներ • Աշ. խորհուրդ
3	Կազմակերպել «Ինքնավարության օրեր»՝ սովորողների ինքնուրույնությունը խթանելու նպատակով	յուրաքանչյուր ուստարվա մեջ 2 անգամ	• Տնօրեն • Դասղեկ • Աշ. խորհուրդ
4	Դասղեկների հետ անցկացնել սեմինարներ՝ խնդրահարույց իրավիճակների կառավարման հմտությունները զարգացնելու նպատակով:	2023-2028 թթ.	• Տնօրեն • Հատուկ հրավիրված մանկական հոգեբան
5.	Դասղեկի ժամերին կազմակերպել թեմատիկ քննարկումներ, կլոր սեղաններ, բանավեճեր, հրավիրել հոգեբանների, սոց. մանկավարժների:	2023-2028 թթ.	• Դասղեկ • Հատուկ հրավիրված մանկական հոգեբան, սոց. մանկավարժ • Աշ. խորհուրդ

«Ուսումնական հաստատությունը աշակերտների աչքերով»

Հարցախույզ

Հարցախույզին մասնակցել են աշակերտական խորհրդի թվով 15 անդամ, վերջիններիս համար նախօրոք կազմվել է 10 հարցից բաղկացած հարցաթերթ: Հարցումը նպատակ ունի պարզել կրթական գործընթացի առաջնային շահակիցների՝ աշակերտների կարծիքը ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության, բարոյահոգեբանական մթնոլորտի, իրենց իրավունքների պաշտպանության և դպրոցի կառավարմանը մասնակցության ապահովման վերաբերյալ:

N	Հարցադրում	Պատասխանը տոկոսներով
1	Ինչպե՞ս կգնահատեք Ձեր ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը դպրոցում: • Բարձր • Միջին • Ցածր	60%-բարձր 27%-միջին 7%- ցածր
2	Արդյոք իրազեկ եք «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված Ձեր իրավունքներին: • Այո • Ոչ	53%-այո 47%-ոչ
3	Ինչպե՞ս կգնահատեք բարոյահոգեբանական մթնոլորտի մակարդակը Ձեր դպրոցում: • Բարձր • Միջին • Ցածր	33%-բարձր 53%-միջին 14%- ցածր
4	Երբևէ ենթարկվե՞լ եք բռնության, խտրականության այլ սովորողների կամ ուսուցիչների կողմից: • Այո • Ոչ	40%-ոչ 60%-այո
5	Երբևէ այլ աշակերտի ենթարկե՞լ եք հուզական կամ ֆիզիկական բռնության: • Այո • Ոչ	20%-այո 80%-ոչ
6	Ուսումնական գործընթացը հետաքրքրու՞մ է Ձեզ: • Այո • Ոչ այնքան	86%-այո 14%-ոչ այնքան
7	Ինչպե՞ս եք վերաբերում Ձեր ԿԱՊԿՈՒ դասընկերներին • Լավ • Ոչ այնքան լավ	93%-այո 7%-ոչ այնքան լավ
8	Մասնակցու՞մ եք ուսումնական հաստատության կառավարմանը՝ օրենքով նախատեսված Ձեր լիազորությունների շրջանակներում: • Այո • Ոչ	73%-այո 27%-ոչ
9	Արդյոք ուսուցիչները բավարար չափով ուշադի՞ր են բոլոր սովորողների նկատմամբ: • Առկա է խտրական վերաբերմունք • Խտրական վերաբերմունք առկա չէ	27%- առկա է խտրական վերաբերմունք 73%- խտրական վերաբերմունք առկա չէ
10	Արդյոք մասնակցու՞մ եք ինքնուրույն, նախագծային, հետազոտական աշխատանքների կատարմանը: • Այո	73%- այո 20%- երբեմն 7%-ոչ

	• Ոչ • Երբեմն	

Հաստատության համագործակցությունը համայնքի հետ



Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- **«Կրթության մասին» ՀՀ օրենք**
- **«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք**
- **«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք**

Դպրոցը մանկավարժական գործունեության տարբեր տեսակների համադրություն է՝ կրթություն, դաստիարակություն, սոցիալական աշխատանք երեխաների և նրանց ընտանիքների հետ: Գետարգել համայնքի հանրակրթական դպրոցը համայնքում ունի նաև համախմբող օղակի դեր՝ իր գործունեությամբ փորձելով աշակերտներին և ողջ բնակչությանը համախմբել նոր ու հետաքրքիր գաղափարների շուրջ, նպաստել համայնքում հասարակական կյանքի ակտիվացմանը: Դպրոցը կարևոր և առանցքային է համարում դպրոց-համայնք ամուր կապն ու փոխգործակցությունը, ինչն իր արգասաբեր պտուղներն է տալիս՝ ի շահ դպրոցի զարգացման, հզորացման, համայնքում հասարակական կյանքի ակտիվության և կարողունակ ուժերի՝ մեկ գաղափարի շուրջ համախմբման:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Համայնքի ակտիվ ներկայացուցիչների հետ հաճախակի իրականացվում են հանդիպումներ՝ դպրոց-համայնք համագործակցությունն առավել խորացնելու և առարկայական դարձնելու նպատակով:	Դպրոց-համայնք համատեղ ուժերով իրականացվող միջոցառումներին համայնքի բնակիչների շրջանում նկատելի է որոշակի պասիվություն:
Դպրոցի բաց և թափանցիկ կառավարման համակարգը ավելի է ամրապնդում դպրոց համայնք համագործակցությունը՝ ստեղծելով	Համայնքի որոշ բնակիչների մոտ առկա է քաղաքացիական, սոցիալական պատասխանատվության ցածր մակարդակ:

փոխվստահության մթնոլորտ, միմյանց անվերապահորեն օգնելու, աջակցելու ցանկություն:	
Ազգային, պետական, եկեղեցական տոների, հիշատակի և ոգեկոչման արարողությունների ժամանակ համայնքի անդամները սերտորեն համագործակցում են դպրոցի հետ:	Սոցիալապես անապահով ընտանիքներում ապրող աշակերտների, ԿԱՊԿՈՒ աշակերտների հիմնախնդիրների շուրջ առկա է դպրոց-համայնք թույլ համագործակցություն:
Աշ. խորհուրդը ակտիվորեն համագործակցում է համայնքի երիտասարդների հետ «Մաքուր դպրոց, մաքուր համայնք» խորագրով շաբաթօրյակների անցկացման շրջանակներում:	

Համայնքի հետ համագործակցության խորացմանն ու շարունակականության ապահովմանն ուղղված դպրոցի քայլերը.

1. Բաց ու թափանցիկ աշխատանքի, հաշվետվողականության բարձր մակարդակի ապահովման միջոցով շահագրգռել համայնքին՝ առավել ակտիվ համագործակցության:
2. Հաճախակի կազմակերպել բաց քննարկումներ, սոցիոլոգիական հարցումներ՝ լսելու համայնքի բնակիչների կարծիքները, մտահոգություններն ու առաջարկությունները երկուստեք համագործակցության համատեքստում:
3. Իրականացնել շախմատի մրցաշարեր՝ ներգրավելով աշ. խորհրդին և համայնքի բնակիչներին:
4. Նախաձեռնել «Գետարգելի բերք ու բարիքը» ամենամյա մրցույթ-փառատոն, որին կմասնակցեն համայնքի բնակիչները, աշակերտները՝ ցուցադրելով դասագործընթացին ձեռք բերած իրենց հմտություններն ու ձեռնարկատիրական կարողությունները: Նշված միջոցառումն առավել կսերտացնի դպրոցի և համայնքի համագործակցությունը:

Գործողություններ

N	*Միջոցառում*	*Ժամկետներ*	*Պատասխանատուներ*
1	Պարբերաբար նախաձեռնել հանդիպումներ, քննարկումներ համայնքի կառավարման մարմինների, բնակիչների հետ՝ առկա հիմնախնդիրները քննարկելու, լուծումներ առաջադրելու նպատակով:	2023-2028 ուստարի	• Տնօրեն • Համայնքի ղեկավար • Համայնքապետարանի շահառու կազմակերպություններ • Համայնքի սրտացավ բնակիչներ

2	Լինել աչալուրջ և հետևողական՝ հայտնաբերելու, ինչու չէ նաև կանխելու բուլինգի, ընտանեկան, բռնության, երեխաների իրավունքների ոտնահարման, վերջիններիս շահագործման ցանկացած դեպք:	2023-2028 ուստարի	• Տնօրեն • Համայնքապետարանի շահառու կազմակերպություններ
3	Ոչ օրինակելի վարք ունեցող ծնողների հետ իրականացնել բացատրական աշխատանքներ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով նաև համայնքապետարանի, շահառու կազմակերպությունների հետ:	2023-2028 ուստարի	• Տնօրեն • Դասղեկ • Համայնքապետարանի շահառու կազմակերպություններ
4	Մշտապես համագործակցել համայնքի բնակիչների հետ՝ համայնքում մշակութային, սպորտային կյանքն աշխուժացնելու և վերջիններիս սոցիալական պատասխանատվության մակարդակը բարձրացնելու նպատակով:	2023-2028 թթ.	• Տնօրեն • Մանկավարժական աշխատողներ • Աշ խորհուրդ

Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության կառավարման մարմինների հետ

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- **«Կրթության մասին» ՀՀ օրենք**
- **«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք**
- **«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք**

Հաստատությունը սերտորեն համագործակցում է տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության կառավարման մարմինների հետ՝ նպատակ ունենելով բարելավել ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը, լսելի դարձնել դպրոցի հիմնախնդիրները, ստեղծել համագործակցային միջավայր դրանց լուծումները գտնելու առումով: Տեղական ինքնակառավարման մարմնի հետ համատեղ իրականացվում են գործողություններ ինչպես «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի համաձայն վերջինիս իրավասությունների շրջանակներում, այնպես էլ՝ երկուստեք կազմակերպվում են համայնքային նշանակության մշակութային, սպորտային միջոցառումներ՝ սերտորեն ներգրավելով աշակերտներին և դպրոցի ռեսուրսները՝ այդպիսով խթանելով դպրոց- համայնք կապը: Կրթության կառավարման մարմինների հետ համագործակությունը բազմաբևեռ է և ընդգրկում է ինչպես ուսումնադաստիարակչական գործընթացին վերաբերող հիմնահարցեր, այնպես էլ դպրոցի առաջնային կարիքների բավարարման, ֆինանսական միջոցներով դպրոցին ապահովման, ուսուցիչների պարտադիր վերապատրաստումների, ատեստավորումների և այլ բնույթի հարցեր: Օրենքով սահմանված կարգով դպրոցը կրթության կառավարման մարմնիններին է ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթերը, իրազեկում հնարավոր դժվարությունների, խոչընդոտների, ֆորսմաժորային իրավիճակների մասին, ինչպես նաև հաղորդում տեղեկատվություն՝ հաշվետու լինելով իր ձեռքբերումներով, հաջողություններով:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Դպրոցի և տեղական ինքնակառավարման մարմնի սերտ համագործակցությունը նպաստում է դպրոց-համայնք կապի ամրապնդմանը:	Որոշ դեպքերում դպրոցն ունի ինքնուրույն նախաձեռնությունների նկատելի պակաս:
Դպրոցի կոլեգիալ խորհրդում կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ներկայացուցիչների առկայությունը թույլ է տալիս առավել լսելի դարձնել դպրոցում առկա հիմնախնդիրները և գտնել առարկայական և համակարգված լուծումներ:	Դպրոցը ոչ միշտ է մասնակցում կրթության կառավարման մարմինների կողմից իրականացվող ծրագրերի:
Դպրոցը հաճախակի կրթության պետական կառավարման լիազորված մարմնին հանդես է գալիս առաջարկություններով՝ հաստատությունում կրթության որակի բարձրացման, առկա հիմնախնդիրների քննարկման և լուծման համատեքստում:	

Թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլեր.

1. Խրախուսել դպրոցի մանկավարժական աշխատողների մասնակցել կրթության կառավարման մարմինների կողմից իրականացվող միջոցառումներին, ծրագրերին:
2. Ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավման, կրթության որակի բարձրացման նպատակով ապահովել դպրոցի բաց և թափանցիկ համագործակցության շարունակականությունը կրթության կառավարման մարմինների հետ:
3. Ապահովել տեղական ինքնակառավարման մարմինների հետ դպրոցի համագործակցության շարունակականությունը՝ նպատակ ունենալով համայնքում մշտապես բարձր պահել դպրոցի հեղինակությունն ու դերը:

Հաստատության համագործակցությունը շահառու կազմակերպությունների հետ

Դպրոցն ակտիվորեն համագործակցում է մի շարք շահառու կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենալով առավել բովանդակային և հագեցած դարձնել դպրոցում ուսումնադաստիարակչական և մանկավարժահոգեբանական աջակցության գործընթացները, հարստացնել սովորողների համակողմանի գիտելիքները, զարգացնել վերջիններիս կարողունակությունները, բավարարել կրթական կարիքները, ապահովել մանկավարժական աշխատողների մասնագիտական աճն ու փորձի փոխանակումը: Նմանօրինակ համագործակցությունը բխում է թե՝ մանկավարժական, թե՝ աշակերտական համայնքների լավագույն շահերից՝ նպաստելով վերջիններիս սոցիալականացմանը, ինքնադրսևորմանն ու նորանոր նվաճումներին:

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք

Անվանում	*Նպատակ և գործողություններ*
«ԿԶՆԱԿ» ՀԻՄՆԱԴՐԱՄ	Դպրոցը սերտորեն համագործակցում է «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն»-ի հետ՝ նպատակ ունենալով օգտվել վերջինիս կողմից առաջարկվող մանկավարժական աշխատողների աշխատանքի արդյունավետությունը բարձրացնող ռազմավարություններից, մեթոդներից, գործիքներից և դրանց կիրառման ուղեցույցներից, ինչպես նաև ակտիվորեն մասնակցում է վերջինիս կողմից կազմակերպվող վերապատրաստումներին, ծրագրերին, միջոցառումներին, սեմինարներին:

Անվանում	*Նպատակ և գործողություններ*
«Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն»	Դպրոցի համագործակցությունը ԿՏԱԿ-ի հետ նպատակ ունի ապահովել մանկավարժական աշխատողների փորձի փոխանակման համար նպաստավոր պայմաններ, հնարավորություններ ստեղծել ինքնակրթվելու, կրթական նորարարություններին ծանոթանալու, տարատեսակ վերապատրաստումներին և սեմինարներին մասնակցելու և կրթական միջավայրում ինքնադրսևորվելու համար: «Հայկական կրթական միջավայր» ֆոռումի «Մասնագետի անկյուն» բաժնում հաստատության մանկավարժներն ակտիվորեն համագործակցում են իրենց կոլեգաների հետ, տրամադրում և ստանում

	մասնագիտական խորհրդատվություն:

Անվանում	*Նպատակ և գործողություններ*
«Կոտայքի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն»	Հաստատության համագործակցությունը ՏՄԱԿ-ի հետ նպատակ ունի առավել արդյունավետ ու ապահով դարձնել հաստատության ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնադաստիարակչական և վերջիններիս տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների գործընթացները: ՏՄԱԿ-ի մասնագետների կողմից հաստատությունում պարբերաբար անց են կացվում թեմատիկ սեմինարներ, խորհրդատվություն՝ վերաբերող ԿԱՊԿՈՒ սովորողների ուսումնադաստիարակչական գործընթացին, այդ թվում՝ ԱՈՒՊ ի կազմման, այլ փաստաթղթերի վարման վերաբերյալ:

Անվանում	*Նպատակ և գործողություններ*
ՀՀ իրավապահ մարմիններ Կոտայքի տարածքային ոստիկանության բաժին	Սովորողների իրավական գիտակցությունը բարձրացնելու, վերջիններիս վնասակար սովորություններից, քրեածին արարքներից ապահովագրելու նկատառումներից ելնելով՝ հաստատությունը սերտորեն համագործակցում է Կոտայքի տարածքային ոստիկանության բաժնի ներկայացուցիչների հետ: Պարբերաբար իրականացվում են սեմինար-քննարկումներ տարբեր թեմաների շուրջ, մասնավորապես ՝ «Դասը վարում է ոտիկանը», «Ես օրինապահ քաղաքացի եմ», «Վնասակար սովորություններ», «Ոչ թմրամիջոցներին և ալկոհոլին», «Անվտանգ միջավայր» խորագրերով:

Անվանում	*Նպատակ և գործողություններ*
ՀՀ ռազմական հաստատություններ 1. **«Լուսակերտի հրետանային գունդ»** 2. **«Բալահովիտի խաղաղապահ զորքերի զորամաս»**	Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակությունը խթանելու, դպրոց-բանակ կապն առավել առարկայական դարձնելու նկատառումներից ելնելով՝ հաստատությունը սերտորեն համագործակցում է ՀՀ ռազմական հաստատությունների հետ: Կազմակերպվում են այցելություններ դեպի նշված ռազմական օբյեկտներ, իրականացվում են ճանաչողական սեմինարներ, հանդիպումներ նշանավոր ռազմական գործիչների, զինվորականների հետ: ՆԶՊ ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում սովորողներն ակտիվորեն մասնակցում են ռազմամարզական վարժանքների, խաղերի:

Անվանում	*Նպատակ և գործողություններ*
Կոտայքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժին **Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական ծրագրերի, առողջապահության և տեղեկատվության բաժին»**	Սոցիալապես անապահով ընտանիքներում ապրող, կրթությունից դուրս մնացած/ող երեխաների կրթական իրավունքի իրացումն ապահովելու, վերջիններիս հնարավոր նյութական և բարոյահոգեբանական աջակցություն տրամադրելու նպատակով հաստատությունը սերտորեն համագործակցում է «Կոտայքի մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության» բաժնի հետ: Համապատասխան բաժնին դպրոցի տնօրինության կողմից տրամադրվում է անհրաժեշտ տեղեկատվություն, անհրաժեշտության դեպքում՝ իրականացվում է տունայց, գնահատվում են երեխայի կարիքները և համատեղ մշակվում են իրավիճակային լուծումներ:

Անվանում	*Նպատակ և գործողություններ*
ԱԻՆ **Գետարգել գյուղում տեղակայված «Հատուկ նշանակության փրկարարական աշխատանքների իրականացման կենտրոն»** **Գետարգել գյուղում տեղակայված «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոն»**	Սովորողների շրջանում արտակարգ իրավիճակների վերաբերյալ գիտելիքների, հմտությունների և կարողությունների մակարդակի բարձրացման նպատակով հաստատությունը սերտորեն համագործակցում է նշված հաստատությունների հետ: Սովորողները պարբերաբար մասնակցում են կազմակերպվող փրկարարական վարժանքներին, ծանոթանում մարդասիրական աշխատանքներին, արտակարգ իրավիճակներում փրկարարների աշխատանքներին, վարքագծային մի շարք կարևոր կանոններին: Նշված հաստատությունների համապատասխան մասնագետների կողմից պարբերաբար անց են կացվում գործնական պարապմունքներ և սեմինարներ «Բնական և արհեստական աղետները», «Ինչպես վարվել երկրաշարժի ժամանակ» և այլ խորագրերով:

Անվանում	*Նպատակ և գործողություններ*
Համագործակից դպրոցներ **«Կամարիսի Ա. Սիմոնյանի անվ.միջն դպրոց» ՊՈԱԿ** **«Վերին Պտղնիի մին դպրոց» ՊՈԱԿ** **«Պտղնիի միջն դպրոց» ՊՈԱԿ**	Մանկավարժական օրինակելի փորձի փոխանակման, սովորողների սոցիալականացման, շփման և հաղորդակցմանապահովման, նոր ծանոթություններ հաստատելու, գիտակրթական, մշակութային, սպորտային համատեղ միջոցառումների, վիկտորինաների, քննարկումների ու բանավեճերի անցկացման նպատակով հաստատությունը սերտորեն համագործակցում է մի շարք դպրոցների հետ:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Երկուստեք պատասխանատվության բարձր զգացում, նախաձեռնողականության դրսևորում, համագործակցության շարունակականության և խորացման նպատակաղրվածություններ:	Շահառու այլ կազմակերպությունների հետ համագործակցության բացակայություն:
Հաստատության տնօրինության կողմից ցանկացած առաջարկի քննարկում, թիմային աշխատանքի ապահովում, համագործակցության խթանում:	Միջազգային կրթական կազմակերպությունների հետ համագործակցության բացակայություն:
Ուսումնադաստիարակչական գործընթացի համալրում, ոչ ֆորմալ, նորարարական կրթական միջավայրի ապահովում:	Որոշ դեպքերում համագործակցություն հաստատելու դժվարություններ:

Թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլեր.

1. Մանկավարժական խորհրդի և առարկայական մասնախմբերի հերթական նիստերին խրախուսել մանկավարժական աշխատողներին՝ սերտորեն համագործակցել շահառու կազմակերպությունների հետ:
2. Գործընկերային հարաբերություններ հաստատել ինչպես տեղական, այնպես էլ միջազգային այլ շահառու կազմակերպությունների հետ:
3. Դպրոցի շարունակական զարգացումն ապահովելու, նորարարական և համագործակցային գաղափարները խրախուսելու համար հաճախակի հանդես գալ շահառու կազմակերպությունների հետ համագործակցության նախաձեռնություններով:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հաստատությունում օգտագործվող ՏՀՏ, կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ընդհանուր բնութագիրը

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- ***«Կրթության մասին» ՀՀ օրենք***
- **«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք**
- **«Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում**

ՏՀՏ-ՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների համատարած կիրառումը էապես դիպչում է նաև կրթական համակարգին: Կրթության մեջ ՏՀՏ-ի, ժամանակակից կրթական տեխնոլոգիաների կիրառության կարևորումը հատկապես վերջին տարիներին օրախնդիր է, կրթության արդիականացման և կրթության որակի բարձրացման բաղադրիչ, ուստի պետությունն ամեն կերպ խրախուսում է այն ուսուցիչներին, ովքեր առանց վարանելու կիրառում են նմանօրինակ տեղեկատվական և կրթական տեխնոլոգիաներ, իրենց փորձով և ձեռքբերումներով կիսվում գործընկերների հետ:

ՏՀՏ-ի մուտքը կրթական ոլորտ աստիճանաբար կոտրեց ավանդական պատկերացումներն ու մոտեցումները կրթության վերաբերյալ՝դառնալով ուսուցչի համար գործիքակազմ, որն ունակ է առավել դյուրին կազմակերպել ուսուցման գործընթացը՝ այն դարձնելով առավել պատկերավոր և հագեցած: ՏՀՏ-ի կիրառման միջոցով դպրոցականը դառնում է առավել ակտիվ ու հետաքրքրասեր, իսկ ուսուցիչը հանդես է գալիս որպես օգնական, խորհրդատու, խրախուսում սովորողի անհատականությունը, ինքնատիպությունը, նախաձեռնությունն ու հետաքրքրասիրությունը: Ուսումնական նյութի մատուցումը ՏՀՏ տեխնոլոգիաների միջոցով ավելի մատչելի և գրավիչ է

դարձնում այն՝ աշակերտին տալով կառավարելու և ինքնակառավարվելու հմտություն: Կարևոր հանգամանք է նաև սովորողների մոտ զարգացնել ՏՀՏ հմտությունները: Ի տարբերություն հանրակրթական այլ առարկաների՝ վերջին մի քանի տասնամյակներում «Ինֆորմատիկա» առարկայի ծրագրերն առավելապես կարիք են ունեցել փոփոխության, ինչը մեծապես պայմանավորված է (ՏՏ) ոլորտում տեղի ունեցող աննախադեպ առաջընթացով: Հանրակրթական նոր չափորոշիչներով հանրակրթական դպրոցում «Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն» առարկան դասավանդվելու է տարրական դպրոցի 2-4-րդ դասարաններում, միջին դպրոցի 5-9-րդ դասարաններում և ավագ դպրոցի 10-12-րդ դասարաններում՝ որպես առանձին առարկա: Այս նորարարական քայլը կարող է խթանել, որ առավել մեծաթիվ աշակերտնե ընտրեն ապագայի նորարարական և ստեղծագործական մասնագիտություններ: Քանի որ ԹԳՀԳ-ի ուսումնական առարկայի չափորոշչային պահանջները բերում են նոր դիդակտիկական խնդիրների լուծման անհրաժեշտության, որոնք իրենց մեջ ներառում է սովորողների տարիքահոգեբանական առանձնահատկությունների հաշվառումը և ուսուցման նոր տեխնոլոգիաների կիրառումը, դպրոցը նախատեսել է մի շարք միջոցառումներ իրականացնել՝ ուսումնական առարկան ուսումնական գործընթացին անցնցում ներգրավելու, ուսուցիչների մասնագիտական կարողությունները բարձրացնելու նպատակով՝ սերտորեն համագործակցելով վերապատրաստող կազմակերպությունների հետ:

ԿՐԹԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՆ ՈՒ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Այսօրվա սովորողը, առավել քան երբևէ, մոտիվացման, խրախուսման, ինքնուրույն աշխատանքային գործունեություն կատարելու, նախագծելու, հորինելու, բացահայտելու կարիք ունի, ինչը մեծապես կարելի է պայմանավորել նաև գիտատեխնիկական աննախադեպ զարգացումներով: Թերևս, հենց վերը բերվածով է պայմանավորված կրթական համակարգի արդիականացումն ու թարմացումը՝ մեթոդամանկավարժական պայմանների արդիականացում, կրթության բովանդակության բարելավում, միջազգային օրինակելի փորձի մշտադիտարկում, արդյունավետ կրթական տեխնոլոգիաների տեղայնացում և հարմարեցում:

Կրթական համակարգի արդիականացումը ենթադրում է, որ ուսուցման մեթոդներն ու տեխնոլոգիաները, կրթության նկատմամբ ավանդական պատկերացումներն անհրաժեշտ է

վերանայել, փոփոխել՝ սովորողին հնարավորություն տալով տեղեկատվություն հավաքել, վերլուծել, հետազոտել, կատարել տնային առաջադրանքներ գրաֆիկական պատկերի, տեսասահիկի կամ ճանաչողական հոլովակի տեսքով: Ժամանակակից կրթական տեխնոլոգիաներն ունակ են առավելապես զարգացնել սովորողի ինքնուրույնությունը, ստեղծագործականությունն ու մետաճանաչողականությունը: Սովորողն այս տեխնոլոգիաների շնորհիվ հնարավորություն է ստանում գրքային գիտելիքից զատ ստանալ ավելի լայն հնարավորություններ, այդ թվում՝ սեփական հմտություններն ու կարողությունները այլընտրանքային միջավայրում իրացնելու: Այս ամենով պայմանավորված՝ հաստատությունը խրախուսում և աջակցում է բոլոր այն ուսուցիչներին, ովքեր գնում են նորարարությունների և ժամանակակից կրթական տեխնոլոգիաների հետևից, անցկացնում են նախագծային, հետազոտական աշխատանքներ, դասագործընթացի պլանավորման հիմքում դնում են ակտիվ, ինտերակտիվ, համագործակցային մեթոդական հնարները, համատեղ պլանավորում և իրականացնում են ինտեգրված դասեր, դիմում են գնահատման ժամանակակից եղանակներին, այլ խոսքով՝ կարևորում են ուսուցման աշակերտակենտրոն մոտեցումները՝ չվախենալով դուրս գալ ավանդական դասատիպերի կաղապարներից:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Ուսուցիչներն առցանց ռեժիմով ակտիվ համագործակցում և փոխգործակցում են մանկավարժական համայնքի հետ «ԿԶՆԱԿ» «ԿՏԱԿ» շահառու կազմակերպությունների, «Հայկական կրթական միջավայր» կայքի, «Պաշարների շտեմարան» հարթակի շրջանակներում: Առցանց միջավայրը լայն հնարավորություններ է ստեղծում ինքնակրթվելու, մասնագիտական առաջավոր փորձի փոխանակման համար:	Համակարգչային լսարանն ունի համակարգիչների և օժանդակ սարքավորումների համալրման կարիք:
Ուսուցիչները սահմանված կարգով և ժամանակին վարում են emis.am էլ. մատյանը:	ՏՀՏ-ների կիրառությամբ դասերի նախապատրաստման փուլում ուսուցիչներն ունենում են դժվարություններ՝ կապված տեխնիկական և մեթոդական գիտելիքների պակասով:
Ուսուցիչները տիրապետում են Microsoft Teams , Zoom հարթակների հետ աշխատանքին, օգտվում են մի շարք այլ էլեկտրոնային կրթական ռեսուրսներից, ինչպիսիք են՝ Quizizz, learningapps.org և այլն:	Որոշ ուսուցիչներ դժվարությամբ են դիմում նորարարությունների, դասագործընթացի պլանավորումը գերադասում են իրականացնել ուսուցման ավանդական մոդելով:

Ուսուցիչները հաճախակի անց են կացնում ՏՀՏ գործիքների կիրառմամբ դասեր, ինչը աշակերտի համար հնարավորություն է ստեղծում տեղեկատվությունն ինքնուրույն որոնելու, վերլուծելու, համակարգելու, հմտությունների զարգացման համար:	Ուսուցիչների մի մասի մոտ առկա է մեթոդական զինանոցի հարստացման, ժամանակակից տեխնոլոգիաների, ՏՀՏ գործիքների վերաբերյալ գիտելիքների խորացման կարիք:
Բնագիտական առարկաների դասավանդման շրջանակներում աշակերտները դիտում են առցանց գիտափորձեր:	
Ժամանակակից ուսուցման տեխնոլոգիաների կիրառությամբ դասերի անցկացումը հնարավորություն է ստեղծում բարձրացնել սովորողների մասնակցության մակարդակը դասին:	
Իթվինինգ նախագծի շրջանակներում իրականացվել է միջդպրոցական նախագծային աշխ «Արի Կոտայք» խորագրով: Դպրոցն 2021-2022 ուստարվա ընթացքում ձեռք է բերել Իթվինինգի ազգային հավաստագիր:	

Թույլ կողմերի չեզոքացմանն ուղղված քայլեր.

1. Նպաստել ուսուցիչների մասնագիտական որակների բարձրացմանը, մեթոդական խորհրդատվությամբ, փորձի փոխանակմամբ աջակցել, որպեսզի վերջիններս դասագործընթացին կիրառեն նոր մեթոդական հնարներ, ՏՀՏ գործիքներ:
2. Մշակել ներդպրոցական աշխատանքային ռազմավարություն՝ նորարար, նախաձեռնող, համագործակցող ուսուցիչներին խրախուսելու համար:
3. Համագործակցային աշխատանքի միջոցով նպաստել կրթության ոլորտին և կոնկրետ ուսումնական առարկանիերին վերաբերող կրթական նորարարություններին ուսուցիչների իրազեկ լինելուն:
4. Ապահովել ուսուցիչներին տեխնիկական բոլոր միջոցներով ՏՀՏ-ի կիրառությամբ դասեր անցկացնելու համար:
5. Առարկայական մասնախմբերի աշխատանքների շրջանակներում ուսուցիչներ հետ

անցկացնել սեմինարներ, քննարկումներ՝ վերաբերող ՏՀՏ գործիքներին, կրթական ժամանակակից տեխնոլոգիաներին ու նորարարություններին:

Գործողություններ

N	*Միջոցառում*	*Ժամկետներ*	*Պատասխանատուներ*
1	Ձեռք բերել էլեկտրոնային սարքերի, նոր համակարգիչներ:	2025-2026 ուստարի	• Տնօրեն • Տնտեսվար
2	Հետևողականորեն մեծացնել ՏՀՏ-ի կիրառությամբ և ժամանակակից տեխնոլոգիաների գործադրմամբ դասերի թվականակը:	2025-2028թթ.	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Ուսուցիչներ
3	Ուսուցիչների և աշակերտների շրջանում իրականացնել մեդիագրագիտությանը վերաբերող սեմինարներ, քննարկումներ, կազմակերպել իրազեկող հոլովակների դիտումներ:	2023-2028 թթ. շարունակաբար	• Տնօրեն • Դասղեկ • Ուսուցիչներ • Աշ. խորհուրդ
4	Ակտիվորեն մասնակցել մանկավարժական համայնքի առցանց գործունեությանը, հանդես գալ կրթության որակի բարելավմանն ուղղված համագործակցության առաջարկներով, նախաձեռնություններով:	2023-2028 թթ.	• Տնօրեն • Ուսուցիչներ

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները

- Հաստատության մանկավարժական աշխատողների թիվը՝ 3
- Ուսուցիչների թիվը՝ 19
- Տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը՝6

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Ուսուցիչների կամավոր ատեստավորման, կամավոր ատեստավորման արդյունքով ուսուցչի դրույքաչափի եվ դրան հատկացվող հավելավճարի տրամադրման, կամավոր ատեստավորման հանձնաժողովի ձեվավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2022թվականի ապրիլի 28-ի. N 596-Ն որոշում
- «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում :

Տարակարգ ստացած ուսուցիչներ

	Անուն, ազգանուն	Կարգ	Հրաման
1	Ֆուզելինա Կարապետյան	1-ին	*29.04.2019թ. N-282.Ա*
2	Անուշ Առաքելյան	1-ին	*11.12 2018. N-1051.Ա*
3	Ֆլորա Ղազարյան	1-ին	*29.04.2019թ. N-282.Ա*
4	Կարինե Մարգարյան	1-ին	*21.03.2022թ. N-428.Ա*
5	Նարինե Մարգարյան	1-ին	*04.12.2019թ. N-1011.Ա*
6	Սվետա Կասյան	1-ին	*04.12.2019թ. N-1011.Ա*

Ուսումնական հաստատության ղեկավար և վարչական կազմը

Պաշտոնը	ԱԱՀ	Պաշտոնը զբաղեցնում է
Տնօրեն	Աղասարյան Դիաննա Հրանտի	2018-ից
Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ	Մարգարյան Կարինե Ժորայի	2022-ից
Քաղ. պաշտպանության շտաբի պետ	Խուդավերդյան Մնացական Հրաչիկի	2011-ից
Գլխավոր հաշվապահ	Պետրոսյան Անժելա Հովսեփի	2022-ից

2022-2023 ուստարվա տվյալներով հաստատության ուսուցչական կազմի տարիքային բաշխվածությունը



ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• **Հաստատության բոլոր մանկավարժներն ունեն բարձրագույն կրթություն:** • **Բոլոր ուսումնական առարկաներն ունեն համապատասխան մասնագիտական կրթությամբ դասավանդող ուսուցիչներ:** • **Հաստատության ուսուցիչները մեծ պատասխանատվությամբ են մասնակցում խորհրդակցական մարմինների հերթական նիստերին:** • **Ուսուցիչները կատարում են իրենց պաշտոնային պարտականությունները:** • **Առարկայական մասնախմբերի անդամ ուսուցիչների գերակշիռ մասը արդյունավետորեն համագործակցում է գործընկերների հետ:** • **Դպրոցում տիրում է բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, ուսուցիչները պահպանում են ներքին կարգապահական կանոններով սահմանված բարեվարքության կանոնները:** • **Դպրոցում մեծ նշանակություն է տրվում համագործակցային միջավայրին, մասնագիտական փորձի փոխանակմանը:** • **Ուսուցիչների գերակշիռ մասը ուսումնական գործընթացն իրականացնում է՝ կիրառելով ՏՀՏ**	• Որոշ ուսուցիչների մոտ նկատելի է աշխատանքի պլանավորման, գրագրության և այլ մասնագիտական հարցերի իրականացման դժվարություններ: • Որոշ ուսուցիչների մոտ նկատելի է պասիվություն, դժգոհություն՝ նորարարական տեխնոլոգիաներով, ՏՀՏ գործիքներով աշխատելու առումով: • Մասնավոր դեպքերում մանկավարժական աշխատողները խախտում են բարեվարքության, քաղաքավարության կանոնները: • Փոխադարձ դասալսումների նկատմամբ առկա է անտարբերություն, պասիվություն: • Առկա է բազմակարծության, նախաձեռնողականության, հեղինակային կրթական ծրագրերի պակաս: • Առկա է ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների, նախաձեռնությունների պակաս: • Ուսուցիչների կողմից թույլ էեն տրվում տնօրինությանը ներկայացվող թղթաբանության համար սահմանված

գործիքներ, ժամանակակից կրթական տեխնոլոգիաներ: • Մեծ թիվ են կազմում ստեղծարար, նախաձեռնող, նորարարական և ինքնատիպ գաղափարների կրող ուսուցիչները: • Ինքնակրթությունը դպրոցի մանկավարժական կոլեկտիվի կարգախոսներից է: • Ուսուցիչները բաց են համագործակցության համար՝ այդ թվում առցանց ուսուցչական հարթակներում և պորտալներում: • Խնդրահարույց հիմնախնդիրները, որպես կանոն, քննարկվում են ողջ ուսուցչական կազմի ներկայությամբ, առողջ բանակցությունների միջոցով՝ լուծվում, հարթվում: • Հաճախակի են համագործակցում տարբեր մեթոդական միավորումների ուսուցիչները՝ իրականացնելով հետաքրքիր ինտեգրված դասեր: • Դպրոցում խրախուսելի և ողջունելի է տարակարծությունը, կրեատիվ մտածողությունը:	ժամկետների խախտումներ: • Առկա է մոտիվացիայի, աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու, նախաձեռնողականություն ցուցաբերելու պակաս:

Հաստատության կողմից մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող քայլերը

1. Խրախուսել մանկավարժական համակազմի համագործակցությունը շահառու կազմակերպությունների հետ, օժանդակել մասնագիտական որակների զարգացմանն ուղղված վերապատաստումներին վերջիններիս ակտիվ մասնակցությունը:
2. Տարատեսակ սեմինարների, օրինակելի փորձի փոխանկման, ոլորտի առաջավոր ներկայացուցիչների հետ կազմակերպվող հանդիպումների, հարց ու պատասխանների միջոցով կատարելագործել մանկավարժական համակարգի մասնագիտական

կարողություններն ու մեթոդական վարպետությունը:

3. Նպաստել դպրոցում ստեղծագործական, նորարարական գաղափարների կրող ուսուցիչների ծրագրերի և նախաձեռնությունների իրականացմանը:
4. Ապահովել բարեկիրթ, իրավահավասար, ժողովրդավարական և մարդասիրական աշխատանքային պայմաններ մանկավարժական համակազմի համար:
5. Նպաստել ուսուցիչների շրջանում ինքնակրթության, ինքնակատարելագործմամբ զբաղվելու գիտակցություն բարձրացմանը և մասնագիտական ու ընդհանուր զարգացումը պլանավորելու և իրականացնելու կարողության ձևավորմանը:
6. Հաճախակի կազմակերպել քննարկումներ՝ ուսուցիչների իրավագիտակցությունը բարձրացնելու, քաղաքացիական օրինապաշտությունը, երեխայի իրավունքներն ու ազատություններն արժևորելու, դրանք պաշտպանելու պատրաստակամությունը խթանելու նպատակով:
7. Մշակել նորարար ուսուցիչներին խրախուսելու և վերջիններիս ջանքերը գնահատելու մեխանիզմներ:
8. Խրախուսել ուսուցիչների շրջանում թիմային աշխատանքը, կոլեկտիվ մտածողությունը, համերաշխության մթնոլորտի ապահովումը:

Գործողություններ

N	*Միջոցառում*	*Ժամկետներ*	*Պատասխանատուներ*
1	Ուսուցիչների համար ստեղծել բոլոր հնարավորությունները՝ պարտադիր և կամավոր ատեստավորումներին վերջիններիս մասնակցությունն ապահովելու համար:	2023-2028 թթ. շարունակաբար	• Տնօրեն • Շահառու կազմակերպություններ
2	Հետևողականորեն մեծացնել ՏՀՏ-ի, ժամանակակից կրթական տեխնոլոգիաների վերաբերյալ ուսուցիչների գիտելիքները, կարողությունները:	2025-2028թթ.	• Տնօրեն • Ուս գծով տեղակալ • Առարկայական մեթոդական միավորումներ • Շահառու կազմակերպություններ
3	Ապահովել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված մանկավարժական աշխատողների իրավունքների իրացումը, հետևողական լինել նաև նույն օրենքով սահմանված պարտականությունների կատարմանը:	2023-2028 թթ. շարունակաբար	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ

4	Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացման համար ուսուցիչներին մշտապես ապահովել նյութատեխնիկական և մեթոդամանկավարժական ռեսուրսներով:	2023-2028 թթ. շարունակաբար	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Առարկայական մեթոդական միավորումներ
5	Ապահովել մանկավարժական աշխատողների օրենքով սահմանված իրավունքը՝ օգտվելու ուսումնական հաստատության գրադարանի, տեղեկատվական պահոցների ծառայություններից՝ ուսումնական հաստատության կանոնադրությանը համապատասխան:	2023-2028 թթ. շարունակաբար	• Տնօրեն • Գրադարանավար • Ուս. Գծով տեղակալ • Մ.մ նախագահ
6	Հետևել մանկավարժական աշխատողների միջև բարեվարքության կանոնների պահպանմանը:	2023-2028 թթ. շարունակաբար	• Տնօրեն • Մանկավարժական աշխատողներ
7	Սեմինարների, քննարկումների միջոցով համալրել ուսուցիչների գիտելիքները՝ ներառական կրթության և ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:	2023-2028 թթ. շարունակաբար	• Տնօրեն • Ուս. Գծով տեղակալ • ՏՄԱԿ
8	Բարձրացնել առարկայական մեթոդական միավորումների դերը դպրոցում, խթանել ուսուցիչների ակտիվ ներգրավումն աշխատանքներում:	2023-2028 թթ. շարունակաբար	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Առարկայական մեթոդական միավորումներ
9	Կազմակերպել հանդիպումներ ոլորտի առաջատար մասնագետների՝ հոգեբանների, կրթության փորձագետների, սոցիալական աշխատողների, հատուկ մանկավարժների հետ՝ ուսուցիչների ընդհանուր իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով:	2023-2028 թթ. շարունակաբար	• Տնօրեն • Շահառու կազմակերխպություններ

10	Մանկավարժական աշխատողների ձեռքբերումների, մասնագիտական հաջողությունների մասին իրազեկել սովորողներին, նրանց ծնողներին՝ ուսուցիչների աշխատանքը գնահատանքի արժանացնելու, վերջիններիս ոգևորելու նպատակով:	2023-2028 թթ. շարունակաբար	• Տնօրեն • Ուսուցիչներ

Ուսումնական հաստատությունում հանրակրթության պետական չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի վերլուծություն

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- **«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք**
- **«Կրթության մասին» ՀՀ օրենք**

1. Հանրակրթության պետական չափորոշիչը (այսուհետ՝ Չափորոշիչ) ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ), ուսումնական բնագավառները, դրանց բովանդակությանը ներկայացվող պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսումնական պլանի և առարկայացանկերի ձևավորման հիմնական սկզբունքները, սովորողների գնահատման ձևերը, սանդղակը, հաշվառման կարգը:
2. Հանրակրթական հիմնական ծրագրերը (տարրական, հիմնական և միջնակարգ) մշակվում են Չափորոշչի նորմերի և դրույթների համաձայն:
3. Չափորոշիչը նպատակաուղղված է հավասարապես հասանելի, ներառական և որակյալ կրթության քաղաքականության ապահովմանը:
4. Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական հիմնական և այլընտրանքային ծրագրերի, այդ թվում՝ առարկայական ծրագրերի, ուսումնական պլանների, դասագրքերի և ուսումնական գործընթացի բովանդակությանն առնչվող այլ ուսումնական նյութերի համար:

5. Չափորոշչի պահանջները պարտադիր են հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպական-իրավական ձևից և ենթակայությունից[4]:

«Վատ ուսուցիչը մատուցում է ճշմարտությունը, լավը սովորեցնում է այն գտնել»:

Ադոլֆ Դիստերվեգ

Արդի կրթական բարեփոխումներով պայմանավորված՝ հանրակրթական պետական չափորոշիչը սահմանում է նոր կարողունակությունների ամբողջություն սովորողների համար: Այստեղ կարևոր հանգամանք է ոչ միայն գիտելիքնի ամբարումը, այլև սովորողների մեջ հմտությունների, դիրքորոշումների արժեքների ձևավորումը, ինքնուրույնության նախաձեռնողականության, ստեղծագործական ունակությունների ձևավորումը ուսումնադաստիարակչական գործընթացի ընթացքում: Դպրոցում ուսուցչի և սովորողի համագործակցության կայացման և ուսումնառության ընթացքում ցանկալի վերջնարդյունքի հաստատմանը մեծապես կարող է օգնել կրթական համակարգի արդիականացումը: Նոր մեթոդների ներդրումը, ժամանակակից բաղադրիչներով զինված դասատիպերն ունակ են հետաքրքրել սովորողներին, բարձրացնել նրանց աշխատունակությունը, դարձնել ինքնուրույն ու նախաձեռնող: Այս ամենը հնարավոր կլինի իրականացնել այն պարագայում, երբ ուսուցիչը պատրաստակամ է գնալ կրթական բարեփոխումների, ժամանակակից կրթական տեխնոլոգիաների հետևից՝ դասագործընթացի հիմքում դնելով հանրակրթական պետական չափորոշչով սահմանված սկզբունքները, վերջնարդյունքները: Սովորողի կրթական կարիքների բացահայտման, կրթության որակի չափման, հետադարձ կապի ապահովման, աջակցող կրթական միջավայր ունենալու և կրթության որակի բարձրացման նկատառումներից ելնելով՝ ուսումնական տարվա ընթացքում իրականացվում են ներքոնշյալ միջոցառումները.

- **Ուսումնական գծով փոխտնօրենի, տնօրենի, առարկայական մեթոդական միավորման նախագահի կողմից իրականացվում են դասալսումներ՝ դասի պլանավորման, ընթացքի և չափորոշչային պահանջների համապատասխանությունը մշտադիտարկելու նպատակով:**
- **Հաստատության տնօրինության կողմից յուրաքանչյուր կիսամյակի ավարտին տրվում են գրավոր աշխատանքներ:**
- **Ուսումնական առարկաների թեմատիկ խմբերի ամփոփման դասերին սովորողներին տրվում են հայտորոշիչ գրավոր և բանավոր հանձնարարություններ:**
- **Կիրառվում է շերտավորված ուսուցում, կիրառվում են անհատակողմնորոշիչ մոտեցումներ:**

[4] ՀՀ Կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի n 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ Կառավարության՝ 4 փետրվարի 2021 թվականի N 136-Ն որոշում:

- Ուսման մեջ ցածր առաջադիմություն ունեցող սովորողների հետ տարվում են հավելյալ աշխատանքներ:
- Ակտիվորեն իրականացվում են առարկայական միամսյակներ, ստացված արդյունքները քննարկվում են մանկավարժական խորհրդի, առարկայական մեթոդական միավորման նիստերի ընթացքում, արձանագրվում են հնարավոր ձեռքբերումներն ու ցածր ցուցանիշները:

Կրթության որակի չափման և որակի բարձրացման ուղղված աշխատանքների կատարողականը 2022-2023 ուստարվա ընթացքում

N	Միջոցառում		Պատասխանատու
1	4-րդ և 9-րդ դասարաններում առաջին կիսամյակի ընթացքում տրվել է գրավոր Աշխատանքներ՝ ԿՋՆԱԿ-ի կողմից կազմված:		• Տնօրեն • Ուս գծով տեղական • Ուսուցիչներ
2	Ուսումնական կիսամյակների ավարտին տնօրենության կողմից գիտելիքների ստուգման նպատակով 1-6-րդ դասարաններում տրվել է թելադրություն մայրենի, 7-9-րդ դասարաններում՝ հայոց լեզու ուսումնական առարկաներից:		• Տնօրեն • Ուս գծով տեղական • Հումանիտար առարկաների մեթոդական միավորման նախագահ
3	Ուսումնական կիսամյակների ավարտին տնօրենության կողմից գիտելիքների ստուգման նպատակով 2-6-րդ դասարաններում հայտորոշիչ թեստային աշխատանքներ են տրվել մաթեմատիկա, իսկ 7-9-րդ դասարաններում՝ հանրահաշիվ և երկրաչափություն ուսումնական առարկաներից:		• Տնօրեն • Ուս գծով տեղական • Բնագիտական առարկաների մեթոդական միավորման նախագահ
4	Տնօրենության կողմից անգլերենից և ռուսաց լեզու ուսումնական առարկաներից 7-9-րդ դասարաններում տրվել են գրավոր աշխատանքներ:		• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Հումանիտար առարկաների մեթոդական միավորում
5	2-4 դասարաններում կատարվել է ընթերցանության գնահատում՝ մայրենի, ռուսաց լեզու, անգլերեն ուսումնական առարկաներից:		• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Հումանիտար առարկաների մեթոդական միավորում • Տարրական դասարանների մեթոդական միավորում

6	Առաջին դասարանում պարբերաբար կատարվել են դասալսումներ՝ աշակերտների տառաճանաչությունը և մաթեմատիկական գիտելիքները ստուգելու նպատակով:		• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Տարրական դասարանների մեթոդական միավորում
7	Իրականացվել է դասալսումներ օտար լեզուների, ԲՏՀՄ, հասարակագիտական ուսումնական բնագավառի, առարկաներից՝ նպատակ ունենալով ուսումնասիրել նշված առարկաների դասավանդման որակը, սովորողների պատրաստվածության մակարդակը և դասագործընթացի իրականացման համապատասխանությունը չափորոշչային պահանջներին:		• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Տարրական դասարանների մեթոդական միավորման նախագահ • Հումանիտար առարկաների մեթոդական միավորման նախագահ • Բնագիտական առարկաների մեթոդական միավորման նախագահ
8	Անհրաժեշտաբար իրականացնել են համապատասխան վերահսկողական աշխատանքներ՝ բացթողումները շտկելու, և ավելի բարձր արդյունքներ գրանցելու համար:		• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ

2022-2023 ուստարում ներդպրոցական վերահսկողության շրջանակներում տրվել են գրավոր աշխատանքներ, իրականացվել է մնացորդային գիտելիքների ստուգում տարրական և միջին դպրոցում: Արդյունքները ստորև՝

2-9-րդ դասարաններում անցկացված «Հայոց լեզու», «Մայրենի» առարկայի գրավոր աշխատանքների (թելադրություն) արդյունքներ

N	Դասարան	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	Ընդամենը	Բացակա	Առաջադիմությունը
1.	II	2	3	3	5	**13**	**1**	**57%**
2.	III	4	7	6	2	**19**	**2**	**80%**
3.	IV	1	11	6	3	**21**	**0**	**85%**
4.	V	1	2	2	3	**8**	**2**	**50%**
5.	VI	3	2	7	3	**15**	**0**	**80%**
6.	VII	5	6	4	0	**15**	**1**	**93%**
7.	VIII	0	9	6	6	**21**	**1**	**68%**
8.	IX	1	7	3	4	**15**	**0**	**80%**

Ընդամենը	17	47	37	26	127	7	

2-9-րդ դասարաններում անցկացված «Մաթեմատիկա» առարկայի գրավոր աշխատանքներ արդյունքներ

N	Դասարան	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	Ընդամենը	Բացակա	Առաջադիմությունը
1.	II	2	3	5	4	14	0	71%
2.	III	4	7	6	1	18	3	81%
3.	IV	5	6	8	2	21	0	90%
4.	V	0	2	4	3	9	1	60%
5.	VI	0	2	7	6	15	0	60%
6.	VII	0	4	6	6	16	0	63%
7.	VIII	0	1	12	8	21	0	62%
8.	IX	0	0	8	7	15	0	53%
Ընդամենը		11	25	56	37	129	4	

Տվյալներ սովորողների առաջադիմության վերաբերյալ տվյալ և նախորդ 3 ուստարիների համար՝ ըստ կրթական աստիճանների

Ուստարի	Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը տարրական դպրոցում /1-4-րդ դասարաններ/	Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը միջին դպրոցում /5-9-րդ դասարաններ/	Ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը տարրական դպրոցում /1-4-րդ դասարաններ/	Ցածր առաջադիմությամբ սովորողների տոկոսը միջին դպրոցում /5-9-րդ դասարաններ/
2019-2020 ուստարի	15 32%	7 8%	35 52%	66 78%
2020-2021 ուստարի	16 27%	9 40%	8 10%	61 78%
2021-2022 ուստարի	2 9%	5 40%	12 8%	61 78%
2022-2023 ուստարի	11 9%	12 40%	12 8%	61 78%

Սովորողների առաջադիմության դինամիկան վերջին 4 տարիների ընթացքում

Ուստարի	Գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը հաստատության տարրական և միջին օղակում
2019-2020 ուստարի	22
2020-2021 ուստարի	28
2021-2022 ուստարի	26

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Քննական դասարաններում անց են կացվում փորձնական քննություններ, ինչը նպաստում է սովորողների ինքնակառավարման մեխանիզմների զարգացմանը, ուշադրության, հիշողության կենտրոնացնելուն՝ տալով վերջիններիս ինքնանդրադարձի հնարավորություն:	Սովորողները բավարար չափով չեն տիրապետում ՏՀՏ գործիքներին, մասնավորապես դժվարանում են օգտվել տեղեկատվության առցանց հարթակներից, գրադարաններից:
Ուսումնական հաստատությունում ներդպրոցական վերահսկողական մեխանիզմների ռազմավարությունը, իրականացվելիք գործողությունների հերթականությունն ու նպատակները հստակորեն արտացոլվում են ուսումնադաստիարակչական պլանում:	Պայմանավորված սեռահասունացման տարիքով՝ արական սեռի աշակերտների մեծ մասի մոտ ուսումնական գործընթացի նկատմամբ նկատվում է անտարբերություն, պասիվություն, մոտիվացիայի պակաս:
Ուսումնադաստիարակչական պլանը կազմելիս հաշվի են առնվում նախորդ ուստարվա ընթացքում բացահայտված թերությունները, բացթողումները, կրթության որակին խոչընդոտող այլևայլ հանգամանքներ:	Աշակերտների շրջանում օլիմպիադաների նկատմամբ առկա է պասիվություն:
Ուսուցիչներն իրենց աշխատանքը պլանավորում են՝ հենվելով հանրակրթության պետական չափորոշչի և ուսուցման աշակերտակենտրոն մոդելի վրա:	Միջին դպրոցում նկատելի է գերազանցության ցուցանիշի նվազում:
Տարրական դասարաններում իրականացվում է ընթերցանության տեխնիկայի համակարգային ստուգում, ինչը թույլ է տալիս մշտադիտարկել առկա թերությունները և նախանշել դրանց շտկման արդյունավետ մանկավարժական պայմանները:	Սկսնակ ուսուցիչների մոտ նկատվում է մանկավարժական հմտությունների պակաս, ինչը խոչընդոտում է վերջիններիս կողմից կրթության որակի մշտադիտարկման և ներքին գնահատման գործիքակազմերի կիրառմանը:

Տարրական և միջին օղակներում իրականացվում են փոխադարձ դասալսումներ, չխախտելով մանկավարժական էթիկան, քննարկվում են առկա բացթողումները, առարկայական մեթոդական միավորումների նախագահների, ուս. գծով տնօրենի տեղակալի կողմից ուսուցիչներին տրամադրվում է մասնագիտական խորհրդատվություն, մեթոդամանկավարժական աջակցություն:	Որոշ սովորողների մոտ առկա է շահագրգռվածություն բացառապես գնահատականի նկատմամբ, ինչը էական խոչընդոտ է ստեղծում՝ դասարանում առողջ մրցակցային միջավայրի ապահովման համար:
Միջդպրոցական վիկտորինաների, մրցույթների միջոցով հարստացվում են աշակերտների համակողմանի գիտելիքները, վերջիններիս տրվում է ինքնանդրադարձ կատարելու հնարավորություն, ուսուցիչների համար տեսանելի են դառնում սովորողների մտավոր կարողությունների, դատողություններ կատարելու, խոսքային կարողության ուժեղ և թույլ կողմերը:	Սովորողների մոտ առկա են դժվարություններ մի շարք ուսումնական առարկաների ուսումնասիրման ժամանակ, և վերջիններս նախընտրում են խնդիրը հաղթահարել մեխանիկական վերարտադրման եղանակով՝ անբավարար գնահատականից խուսափելու համար:

Ուսումնական հաստատությունում հանրակրթության պետական չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի ապահովմանն ուղղված հաստատության քայլերը

- Կրթության որակի մշտադիտարկման, գնահատման միջոցով առկա խնդիրների վերհանում, ծնող-դպրոց կապի շնորհիվ վերահսկողական մեխանիզմների ամրապնդում, սովորողներին դեպի ուսումնական գործընթաց շահագրգռում:
- ԹԳՀԳ-ի ուսումնական առարկայի արդյունավետ ուսուցման միջոցով, սկսած կրտսեր դպրոցից, աշակերտների ոլորտային գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձևավորում և զարգացում, վերացական, ալգորիթմական մտածողության խթանում:
- Հետաքրքիր, պատկերավոր, բազմաբաղադրիչ դասերի միջոցով սովորողներին դեպի դասագործընթաց ուղղորդում, վերջիններիս թերացումների դժվարությունների փոխարեն, հաջողությունների և առաջադիմության բարձրաձայնում:
- Առարկայական շաբաթների, ամիսների կազմակերպում՝ հագեցած նախագծային, հետազոտական, ինքնուրույն աշխատանքներով, միջառարկայական կապերի ապահովմամբ դասերով, ինտերակտիվ, ակտիվ, համագործակցային մեթոդական հնարներով, ՏՀՏ գործիքներով պլանավորված դասերով:

- Գնահատման այլընտրանքային եղանակների կիրառում, առանցքային կարողունակությունների ձևավորմանն ուղղված կարողունակահեն դասերի անցկացում:

Կրթության որակի չափման և որակի բարձրացման ուղղված աշխատանքների կատարողականը 2022-2023 ուստարվա ընթացքում

N	Միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու
1	Մանկավարժական խորհրդի, առարկայական մեթոդական միավորման շրջանակներում նոր չափորոշիչների բովանդակության քննարկում, փորձի փոխանակում:	2023-2024 ուստարի	• Տնօրեն • Ուս. գծով տեղական • Մեթոդական միավորումների նախագահներ • Ուսուցիչներ
2	ԿԱՊԿ ունեցող սովորողների, ցածր առաջադիմությամբ սովորողների համար երկարօրյա ուսուցման կազմակերպում:	2023-2028թթ.	• Տնօրեն • Ուս. գծով տեղական • ՈՒսուցիչներ • ՏՄԱԿ-ի համապատասխան մասնագետներ
3	Կարողունակությունների ձևավորմանն ուղղված դասերի պլանավորում և անցկացում	2023-2028 ուստարի	• Տնօրեն • Ուս. գծով տեղական • Մեթոդական միավորումների նախագահներ • Ուսուցիչներ
4	Կրթական նորագույն տեխնոլոգիաների վերաբերյալ զեկույցների մշակում, քննարկում:	2023-2028 ուստարի	• Տնօրեն • Ուս. գծով տեղական • Մեթոդական միավորումների նախագահներ • Ուսուցիչներ
5	Ուսուցման նկատմամբ սովորողների մոտիվացիայի բարձրացում մի շարք միջոցառումների, մրցույթների, ճանաչողական էքսկուրսիաների միջոցով, ինչպիսիք են՝ • «Լավագույն ձեռագիր» մրցույթ • «Լավագույն ընթերցողը» մրցույթ • «Լավագույն կտավը» մրցույթ • «Իմ հայրենիքը» թեմայով շարադրությունների մրցույթ • «Ես և պատմությունը», «Առողջ ապրելակերպ», «Ֆիզիկական կուլտուրան իմ կյանքում», «Քիմիայի աշխարհում» նախագծային աշխատանքներ • Ճանաչողական այց դեպի մատենադարան, Օշական, Էջմիածին, ՀՀ Պատմության թանգարան • Հայրենասիրական, հասարակագիտական,	2023-2028 ուստարի	• Տնօրեն • Ուս. գծով տեղական • Մեթոդական միավորումների նախագահներ • Ուսուցիչներ

	բնագիտական, օտար լեզուներին վերաբերող այլ միջոցառումների անցկացում:		

Հաստատությունում բազմակարծիք, ներառական մասնակցային արժեքային միջավայրի վերլուծություն

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- ՀՀ Սահմանադրություն
- «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիա
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք
- «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում :

«Ուսուցիչն աշխատում է ամենապատասխանատու խնդրի վրա՝ նա ձևավորում է մարդուն»: Միխայիլ Կալինին

Կրթական համակարգի բարեփոխումների ներկա փուլում առաջնահերթություն կարելի է համարել աջակցող, հավասար, որակյալ կրթական միջավայրի ապահովումը, կրթական բարենպաստ միջավայրի ստեղծումը, որտեղ սովորողը կարող է անցնցում ձեռք բերել իմացական ու գործառական գիտելիքներ: Այս համատեքստում ներկայումս նախապատվություն է տրվում ուսուցման աշակերտակենտրոն մոդելին, ինչը ենթադրում է, որ սովորողն ուսումնական գործընթացում ունի ավելի ակտիվ դերակատարում: Այդ դերը կենտրոնացնելու, սովորողին ինքնուրույն գործելու և նախաձեռնողի դերում հանդես գալու համար առանցքային նշանակություն ունի դպրոցում տիրող բարոյահոգեբանական միջավայրը, սովորողի սոցիալականացման, շփման հաղորդակցության համար նպաստավոր, բարեկիրթ պայմանների ստեղծումը, իրավահավասարության, սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու ներառական մասնակցային արժեքային միջավայրը: Նմանօրինակ միջավայրի ապահովման և պահպանման համար պատասխանատու են կրթության գործընթացի մասնակից հանդիսացող բոլոր սուբյեկտները, այդուամենայնիվ ուսուցչի՝ որպես կրթական գործընթացի հիմնական կազմակերպչի դերն ու օրինակն առավել առանցքային և ընդգծված է:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Յուրաքանչյուր ուստարվա վերջում մանկավարժական խորհուրդը քննարկում է ԿԱՊԿ ունեցող աշակերտների ուսումնառության ժամանակ առաջ եկած հնարավոր խնդիրները, ԱՈՒՊ-ի կազմման, դրանով ուսումնադաստիարակչական գործընթացի իրականացման արդյունավետությունը, գրանցված հաջողությունները, կարիքի վերագնահատման անհրաժեշտությունը, այլ խոսքով՝ քննարկում են հարցեր՝ ներառական կրթության անցնցում ինտեգրման և ԿԱՊԿ ունեցող երեխաների համար հանրակրթական դասարանում լավագույն կրթադաստիարակչական միջավայրի ապահովմանն ուղղված:	Հաստատությունը չունի ռեսուրս սենյակ, թեքահարթակ:
Գործում է արդյունավետ համագործակցային միջավայր ԿԱՊԿ ունեցող սովորողի ծնողի և/կամ օրինական ներկայացուցչի, ուսումնական հաստատության և ՏՄԱԿ-ի միջև՝ առաջնային նպատակ համարելով ԿԱՊԿ ունեցող աշակերտի սոցիալականացումը, ուսուցման և դաստիարակության արդյունավետ իրականացումը հանրակրթական դպրոցում:	ԿԱՊԿ ունեցող սովորողների մոտ նկատվում են սոցիալականացման, միջավայրին հարմարման դժվարություններ:
Մանկավարժական համակազմը մասնակցում է ներառական կրթությանը վերաբերող վերապատրաստումներին, կոնֆերանսներին, սեմինարներին՝ նպատակ ունենալով ձեռք բերել գիտելիքներ, հմտություններ ու կարողություններ՝	Որոշ ուսուցիչների մոտ առկա է գիտելիքների, հմտությունների և կարողությունների պակաս՝ ԿԱՊԿ ունեցող սովորողների հետ աշխատանքում:

առանձնահատուկ կարիքներով երեխաների ուսումնառությունն արդյունավետ ու ըստ կարիքների պլանավորելու և իրականացնելու համար:	
Դասղեկների կողմից աշակերտների հետ տարվում են բացատրական, իրազեկման աշխատանքներ ԿԱՊԿ ունեցող աշակերտների նկատմամբ խտրականության դրսևորումները, հուզական և ֆիզիկական բռնությունը բացառելու, նրանց հոգատարությամբ և հանդուրժողականությամբ շրջապատելու համար:	Ծնողական համայնքում առկա է որոշակի անհադուրժողական վարք, ապատեղեկատվության, չստուգված, չհիմնավորված լուրեր տարածելու հակում:
Բոլոր աշակերտներն ունեն սոցիալհոգեբանական պաշտպանվախություն, հաստատությունը խիստ վերահսկողություն է իրականացնում՝ աշակերտների շրջանում բռնությունը, խտրականությունը, ծաղրը, անհարգալից վերաբերմունքը, կոնֆլիկտային իրավիճակները բացառելու նպատակով:	Դեռահասության տարիքի որոշ տղաները շուտ են բռնկվում, անհանդուրժող են, ունեն կարծրատիպային մտածելակերպ, անտարբեր են ուսման նկատմամբ:
Հաստատության մանկավարժները, աշակրտները, նրանց ծնողները կարողանում են անխոչընդոտ իրականացնել իրենց կամարտահայտության իրավունքը, արտահայտել կարծիք, տեսակետ, դժգոհություն:	Մանավոր դեպքերում նկատվում է աշակերտների իրավունքների խախտում շրջապատի կողմից:
Ուսուցիչների, աշակերտների մասնակցությամբ հաճախակի են կազմակերպվում կոնֆլիկտային իրավիճակների կանխարգելմանն ուղղված հանդիպում-քննարկումներ:	Մասնավոր դեպքերում նկատվում է շակերտների կողմից սեփական պարտավորությունների շրջանցում, անտարբերություն:
Կրթութական համակարգի հենքը աշակերտի արժեհամակարգի ձևավորումն է: Չունենալով արժեհամակարգ՝ աշակերտը չի կարող հասկանալ կրթության հարկը, սովորելու, գիտելիք, հմտություն, կարողություն ձեռք բերելու իմաստը, ուստի հաստատությունը կարևորում է աշակերտների մեջ արժեքային համակարգի ձևավորումը, կրթության մարդասիրական բնույթը, ազգային և համամարդկային արժեքների, մարդու կյանքի ու առողջության, անհատի ազատ և համակողմանի զարգացման առաջնայնությունը, քաղաքացիական գիտակցության կարևորումը, անհատի և նրա իրավունքների ու ազատությունների նկատմամբ հարգանքը, արժանապատվությունը, հայրենասիրությունը, աշխատասիրությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, բնապահպանական աշխարհայացքի ձևավորումը:	Առկա է մեդիագրագիտության պակաս ուսուցիչների, աշակերտների շրջանում, աշակերտների շրջանում առկա են կիբեռհարձակման նախադեպեր:
Հաստատությունը խրախուսում է սովորողների ինքնուրույնությունը, ինքնակազմակերպման, ինքնակառավարման հմտությունները, նախաձեռնողականությունը, ստեղծարարությունը: Ուսումնադատիարակչական գործընթացի ժամանակ փորձ է կատարվում նպաստել նշված	Նկատվում է բազմակարծության, նորարարությունների, ստեղծագործականության պակաս ուսուցիչների շրջանում:

հատկանիշների ձևավորմանն ու զարգացմանը:	
Աշակերտների համար անց են կացվում ինքնավարության օրեր. «Դասը վարում են աշակերտները», «Գրադարանավար աշակերտներտները», ինչպես նաև մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հանդիպում-քննարկումներ:	Առկա են համացանցային կախվածության մասնավոր դեպքեր, համակարգչային խաղերի մեջ ներգրավվածություն:
Հաստատությունն օժանդակում է օժտված աշակերտներին՝ հետաքրքիր նախաձեռնությունները կյանքի կոչելու համար:	Առկա են ընտանեկան բռնությունների, ծնողական անտարբերության, հակասոցիալական վարքի դրսևորման մասնավոր դեպքեր:
Աշակերտների ձայնը ուսումնական հաստատությունում լսելի է. աշ. խորհուրդը վերջիններս հաճախակի է հանդես գալիս առաջարկություններով, նախաձեռնություններով, հիմնախնդիրների բարձրաձայնմամբ:	
Խրախուսվում է բազմակարծությունը, աշակերտների ակտիվ մասնակցությունը հաստատության կառավարմանը, կազմակերպչական հարցերին, ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներին:	
Հաստատությունն ունի աշակերտների համար նախատեսված վարքականոններ:	
Մեծ ուշադրություն է դարձվում սովորողների անձնային առանձնահատկություններին, խառնվածքին, սեռատարիքային առանձնահատկություններով պայմանավորված վարքագծին, տարբեր սեռերի աշակերտների միջանձնային շփումներին: Հնարավոր հիմնախնդիրները չեն հանրայնացվում, լուծվում կամ մեղմվում են մասնագիտական աջակցությամբ:	

Բազմակարծիք, նեռարական մասնակցային արժեքային միջավայրի ապահովմանն ու պահպանմանն ուղղված հաստատության քայլերը

1. **Դաստիարակությունը հոգեխթանիչ գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն**

կարևոր դեր է կատարում անձի ձևավորման գործում: Պայմանավորված սույն պնդմամբ՝ հաստատությունում ապահովել աշակերտների մտավոր, բարոյական, գեղագիտական, ֆիզիկական, աշխատանքային, բնապահպանական դաստիարակության համար նպաստավոր պայմաններ:

2. Ինքնակրթության, վերապատրաստումների, օրինակելի փորձի փոխանակման, ուսուցիչների ակտիվ ու նպատակային համագործակցության միջոցով նպաստել վերջիններիս մասնագիտական կարողությունների զարգացմանը, այդ թվում՝ ժամանակակից կրթական տեխնոլոգիաների, ներառական կրթության, աշակերտակենտրոն, կարողունակությունների վրա հիմնված կրթական մոդելների վերաբերյալ:
3. Մեծ ուշադրություն դարձնել դպրոցում բարոյահոգեբանական առողջ միջավայրի ապահովմանը, կոնֆլիկտային իրավիճակների անցնցում կառավարմանը, բռնությունների, խտրականության բացառմանը ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների շրջանում:
4. ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար ապահովել ուսումնառության համար հարմարավետ, պաշտպանված միջավայր, ապահովել նրանց ծնողների, ուսումնական հաստատության, ՏՄԱԿ-ի և այլ շահառու կազմակերպությունների միջև հասանելի և արդյունավետ համագործակցություն:
5. Ներառական կրթության որակի բարձրացման, ԿԱՊԿ ունեցող աշակերտների հարմարումն ու սոցիալականացումը խթանելու նպատակով կազմակերպել սեմինարներ, քննարկումներ, ճանաչողական հոլովակների դիտումներ թեմայի շուրջ:
6. Բազմակարծության, աշակերտնների ինքնուրույն գործունեությունը խթանելու, նրանց միջև թիմային համագործակցությունն ամրապնդելու նպատակով ստեղծել արտադասարանային մի շարք միջոցառումներ:
7. Տարատեսակ ուսումնադաստիարակչական միջոցառումների միջոցով բարձրացնել աշակերտների իրավագիտակցությունը, քաղաքացիական և սոցիալական պատասխանատվությունը, ձևավորել հումանիստական, ժողովրդավարական հայացքներ:
8. Միջոցառումների, սեմինարների օգնությամբ բարձրացնել մանկավարժական աշխատողների և աշակերտների մեդիագրագիտության իմացության մակարդակը:
9. Խրախուսել նորարարներին, ստեղծագործողներին, նախաձեռնողներին:
10. Շարունակել հավատարիմ մնալ ժողովրդավարական և մարդասիրական սկզբունքներին հաստատության կառավարման գործընթացում:

Գործողություններ

N	Միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու

1	Աշակերտների համար վարքականոնների մշակում, ներքին կարգապահական կանոնների սահմանում:	2023-2028թթ. ուստարվա սկզբին	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Կառավարման խորհուրդ • Խորհրդակցական մարմիններ • Ուսուցիչներ
2	Մանկավարժական էթիկայի կանոնների սահմանում և պահպանում:	2023-2028թթ. ուստարվա սկզբին	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Կառավարման խորհուրդ • Խորհրդակցական մարմիններ • Ուսուցիչներ
3	Առաջարկություններ և դիտողությունների արկղիկների ներդնում հաստատության բոլոր դասարաններում և ուսուցչանոցում:	2023-2028թթ. ուստարվա սկզբին	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ
4	Իրազեկող վահանակների, պատի թերթերի պատրաստում և տեղայնացում՝ ըստ անհրաժեշտության:	2023-2028թթ.	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Մեթոդական միավորումներ • Աշ. խորհուրդ •
5	Ուսուցման նկատմամբ սովորողների հետաքրքրության բարձրացում մի շարք մանկավարժական տեխնոլոգիաների կիրառությամբ:	2023-2028թթ.	• Տնօրեն • Ուս. գծով տեղական • Մեթոդական միավորումների նախագահներ • Ուսուցիչներ
6.	Կոնֆլիկտի կառավարման, ինքնակառավարման, ագրեսիայի բացառման, սթրեսակայունության, փոխզիջման, փոխադարձ հարգանքի մասին քննարկումների անցկացում ուսուցիչների և աշակերտների շրջանում:	2023-2024 ուստարի	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Մեթոդական միավորումներ • Աշ. խորհուրդ • Հրավիրված մասնագետներ • Շահառու կազմակերպություններ
7	Ներառականության վերաբերյալ իրազեկող թռուցիկների, ցուցապաստառների պատրաստում, սահիկաշարերի ցուցադրում, ուսուցիչների, աշակերտների և ծնողների շրջանում՝ հանդուրժողականության ապահովման և խտրականության բացառման նպատակով:	2023-2024 ուստարի	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Մեթոդական միավորումներ • Աշ. Խորհուրդ • Ծնողական խորհուրդ • Հրավիրված մասնագետներ • Շահառու կազմակերպություններ
8	Արական սեռի սովորողների հետ առանձին ժողովների հրավիրում, զրույց հոգեբանի, սոց. մանկավարժի, իրավապահ համակարգի աշխատակցի, բժշկի հետ:	2023-2024 ուստարի	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Մեթոդական միավորումներ • Աշ. Խորհուրդ • Հրավիրված մասնագետներ • Շահառու կազմակերպություններ
9	Արտադասարանային ակումբների հիմնում՝ «Բանավեճի ակումբ», «Ստեղծագործողների ակումբ»,	2023-2024 ուստարի	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Մեթոդական միավորումներ

	«Գրքասերների ակումբ», «ԹԳՀԳ ակումբ», «Բնագետների ակումբ», «Շախմատասերների ակումբ», «Ազգային երգի և պարի ակումբ»:		• Աշ. Խորհուրդ • Ուսուցիչներ
10	Համագործակցային միջավայրի, փոխգործակցության խրախուսման միջոցով ապահովել առողջ, ապահով,փոխադարձ հարգանքի վրա կառուցված, իրավահավասար, հագեցած և հուսալի մթնոլորտ հաստատությունում:	2023-2028թթ.	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Կառավարման խորհուրդ • Խորհրդակցական մարմիններ • Ուսուցիչներ • Աշ. Խորհուրդ • Ծնողական խորհուրդ
11	Սովորողների շրջանում իրականացնել բացատրական աշխատանքներ անվտանգ կենսագործունեության, տարերային աղետներից պաշտպանության, վնասակար սովորությունների, քրեածին գործողությունների վերաբերյալ:	2023-2028թթ.	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Կառավարման խորհուրդ • Խորհրդակցական մարմիններ • Ուսուցիչներ • Աշ. Խորհուրդ
13	Մասնակցություն «Իմ կյանքը համայնքում» ծրագրին:	2023-2028թթ.	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Խորհրդակցական մարմիններ • Ուսուցիչներ • Աշ. Խորհուրդ • Ծնողական խորհուրդ • Շահառու կազմակերպություններ

Հաստատությունում կրթադաստիարակչական գործընթացի արդյունավետության վերաբերյալ սոցիոլոգիական հարցումներ մանկավարժական աշխատողների շրջանում

Բազմակարծիք մասնակցային միջավայրի ապահովման, մանկավարժական աշխատողների համար ինքնավերլուծության, ինքնանդրադարձի հնարավորության ապահովման, ուսումնադաստիարակչական գործընթացի առավելությունների, բացթողումների վերհանման նպատակով հաստատության թվով 17 մանկավարժական աշխատողների շրջանում իրականացվել է սոցիոլոգիական հարցում: Նախօրոք կազմվել է 7 հարցից բաղկացած հարցաշար, որի արդյունքների ամփոփումը կներկայացնենք ստորև:

Հարցաթերթ

1	Ինչպե՞ս կգնահատեք ուսուցիչների միջև համագործակցության, փոխգործակցության,

	մասնագիտական փորձի փոխանակման մակարդակը հաստատությունում: • Բարձր • Միջին • Ցածր
2	Ինչպե՞ս կգնահատեք բարոյահոգեբանական միջավայրի մակարդակը ուսումնական հաստատությունում: • Բարձր • Միջին • Ցածր
3	Հիմնվելով Ձեր կողմից իրականացված փոխադարձ դասալսումների վրա՝ ինչպե՞ս կգնահատեք դասագործընթացի որակը՝ հաշվի առնելով մի շարք պարտադիր և ցանկալի դրույթներ՝ օրվա դասի պլանի առկայություն, սովորողների համաչափ մասնակցություն, ժամանակակից կրթական տեխնոլոգիաների, ՏՀՏ գործիքների, զննական պարագաների և դիդակտիկ նյութերի կիրառում, աշակերտակենտրոն մոտեցումներ, դասի փուլերի հստակ տարանջատում, կարգապահական միջավայր: • Բարձր • Միջին • Ցածր
4	Ինչպե՞ս կգնահատեկ Ձեր նախաձեռնողականության, նորարարական գաղափարների, ստեղծագործական աշխատանքների իրականացման մակարդակը ուսումնադաստիարակչական գործընթացի շրջանակներում: • Բարձր • Միջին • Ցածր
5	Որքա՞ն հաճախ եք դասագործընթացի ընթացքում կիրառում նորարարական ուսուցման մեթոդական հնարներ, անցկացնում ոչ ֆորմալ, ինտեգրված դասեր, նախագծային հետազոտական աշխատանքներ, դասեր՝ ՏՀՏ գործիքների կիրառությամբ: • Մշտապես • Երբեմն • Հազվադեպ
6	Ձեզ համարու՞մ եք կարողունակ, նորարար, հմուտ ուսուցիչ: • Այո • Ոչ • Չեմ կարող պատասխանել:
7	Ուսումնական հաստատությունում իրացվու՞մ են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթները՝ վերաբերող մանկավարժական աշխատողների պարտավորություններին: • Այո • Ոչ • Դժվարանում եմ պատասխանել

Հարցման մասնակից ուսուցիչների 41%-ն այն կարծիքին է, որ ուսուցիչների միջև համագործակցության, փոխգործակցության, մասնագիտական փորձի փոխանակման մակարդակը հաստատությունում բարձր մակարդակի վրա է, 47%- ը պնդում է, որ միջին, իսկ 12%-ի համոզմամբ՝ ցածր մակարդակի */տրամագիր 1/:*



Տրամագիր 1

Պարզելու համար, թե ինչպիսինն է բարոյահոգեբանական միջավայրը հաստատությունում, հարցված ուսուցիչներին տրվել է նույնաբովանդակ հարցադրում: Եվ այսպես, հարցվածների 70%-ը պնդում է, որ բարոյահոգեբանական միջավայրը բարձր է, իսկ 30% -ը՝ միջին մակադակի վրա */տրամագիր 2/:* Սույն հարցադրման արդյունքները կօգնեն հասկանալ առկա թերացումները և միասնաբար աշխատել դրանց լուծումների ուղղությամբ:



Տրամագիր 2

Ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետության մակարդակի վերաբերյալ հարցված ուսուցիչներին տրվել է նույնաբովանդակ հարցադրում: Հարցման մասնակիցների 47%-ի գնահատմանբ ուսումնադաստիարակչական գործընթացն ունի արդյունավետության բարձր, 35%-ը՝ միջին, իսկ 18%-ը՝ ցածր մակարդակ */տրամագիր 3/:* Կարծում ենք, որ սույն հարցադրման պատասխանների արդյունքները խիստ մտահոգվելու առիթ են ստեղծում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի բարելավմանն ուղղված քայլերն առավել ինտենսիվ և առարկայական դարձնելու:



Տրամագիր 3

Սեփական կարողություններն ու հմտությունները հարցման մասնակիցների 76%-ը գնահատել է բարձր, 17%-ը միջին, իսկ 7%-ը ցածր */տրամագիր 1/:* Ակնհայտ է, որ ուսուցիչներն ինքնավստահ են, բարձր են գնահատում սեփական կարողունակությունները, այդուհանդերձ, կարծում ենք, որ այս պարագայում ինքնավերլուծության, ինքնաքննադատության պակասը նույնպես տեսանելի է՝ հաշվի առնելով նախորդ հարցադրման խատասխանների արդյունքում ստացված 35% միջին, և 18% ցածր ցուցանիշները՝ վերաբերող ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությանը:



Տրամագիր 4

Պարզելու համար, թե հարցման մասնակից ուսուցիչները որքան հաճախ են դասագործընթացի ընթացքում կիրառում նորարարական ուսուցման մեթոդական հնարներ, անցկացնում ոչ ֆորմալ, ինտեգրված դասեր, նախագծային հետազոտական աշխատանքներ, դասեր՝ ՏՀՏ գործիքների կիրառությամբ, տրվել է նույնաբովանդակ հարցադրում: Հարցվածների 51%-ը նշել է, որ մշտապես, 35%-ը՝ երբեմն, 14%-ը՝ հազվադեպ է իրականացնում նմանօրինակ դասեր */տրամագիր 5/:*



Տրամագիր 5

Հաջորդ հարցադրումն ինքնագնահատման նպատակ ուներ. «Ձեզ համարու՞մ եք կարողունակ, նորարար, հմուտ ուսուցիչ»: Հարցվածների 82%-ը դրական է պատասխանել, իսկ 18%-ն այս հարցադրմանը որևէ պատասխան չի տվել */տրամագիր 6/:* Նկատելի է, որ ուսուցիչների շրջանում առկա է ինքնավստահության բարձր և ինքնաքննադատության ցածր մակարդակ: Կարծում ենք, որ հետագայում, սույն թեմայի շրջանակներում անհրաժեշտ է կազմակերպել քննարկում, հարց ու պատասխան:



Տրամագիր 6

Պարզելու համար, թե ուսումնական հաստատությունում արդյոք իրացվում են «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված դրույթները՝ վերաբերող մանկավարժական աշխատողների պարտավորություններին, հարցման մասնակիցներին տրվել է նույնաբովանդակ հարցադրում: Մասնակիցների 82%-ը դրական է պատասխանել, իսկ 18%-ը դժվարացել է պատասխանել հարցադրմանը */տրամագիր 7/:* Կարծում ենք, որ այս պարագայում ակնհայտորեն նկատվում է իրավագիտակցության, իրավական ակտերին անծանոթ լինելու իրավիճակ, որի պատճառով էլ հարցված ուսուցիչների 18%-ը հարցադրմանը կոնկրետ պատասխան չի տվել:



Տրամագիր 7

Հաստատությունում աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների վերլուծություն

Ենթաթեմայի իրավական հիմքերը.

- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենք
- «Կրթության մասին» ՀՀ օրենք
- «Ստանդարտացման մասին» ՀՀ օրենք
- «Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին եվ արտաքին գնահատման չափանիշները եվ իրականացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 03.09.2010 թվականի սեպտեմբերի 3-ի N 1334-Ն որոշում :

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Կազմակերպվում են մեծարման, գնահատանքի միջոցառումներ՝ նվիրված վաստակաշատ մանկավարժների աշխատանքային կենսափորձին:	Կան ուսուցիչներ, ովքեր դժվարություններ ունեն ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման հարցում:
Կարողունակ, ստեղծարար, նորարար ուսուցիչներին հանձնվում են պատվոգրեր, շնորհակալագրեր, պարգևավճարներ:	Նորարարների և նախաձեռնող ուսուցիչների թվականակը հաստատությունում մեծ չէ:

Կրթական առցանց հարթակներում որոշ ուսուցիչներ վարում են սեմինարներ, կիսվում մասնագիտական իրենց փորձով:	Կան ուսուցիչներ, ովքեր նախապատվություն են տալիս ուսուցման ավանդական մոդելին և դժվար են հաշտվում կրթական նորարարությունների հետ:
Հաստատության տնօրենն անկտիվորեն մասնակցել է «Արժանապատիվ աշխատանք հիմա» և «Կրթություն և համերաշխություն» արհմիության կազմակերպած դասընթացներին:	Մասնավոր դեպքերում ուսուցիչներն ունենում են դժվարություններ փորձի փոխանակման, մասնագիտական համագործակցության ժամանակ:
Մեթոդական միավորումների շրջանակներում ուսուցիչները հանդես են գալիս թեմատիկ զեկույցներով, հետազոտական աշխատանքներով, մեթոդների և կրթական տեխնոլոգիաների կիրառման իրենց փորձով:	Նկատվել են այլոց մասնագիտական աշխատանքը պիտակավորելու, բանսարկության մասնավոր դեպքեր:
Մանկավարժական խորհրդի նիստերին քննարկվում են ուսուցիչների հաջողություններն ու ձեռքբերումները:	Նկատելի է քննատադական մտածողության, փորձարարական հմտությունների, ստեղծագործական մոտեցումների պակաս:
Հատատության տնօրենը, ուս. գծով տեղակալը ուսուցիչներին պարբերաբար տրամադրում են մասնագիտական խորհրդատվություն, մասնագիտական աճին միտված ուղղորդումներ:	
2018-2022թթ.-ին հաստատության մանկավարժական աշխատողների մոտ 35%-ը ստացել է առաջին կարգի տարակարգ:	
Մասնագիտական գիտելիքների, հմտություններ և կարողությունների շարունակական բարելավման և զարգացման նկատառումներից ելնելով՝ մի շարք ուսուցիչներ նպատակադրված են դիմել կրթության կառավարման մարմնին՝ 2-րդ կարգի տարակարգ ստանալու համար:	

«Աշխատել պետք է ոչ թե 12 ժամ, այլ գլխով»: Սթիվ Ջոբս

Ուսումնական հաստատությունում աշխատակազմի խրախուսումը, արժևորումը մեծ դերակատարում ունի վերջինիս աշխատունակության, մոտիվացիայի բարձրացման վրա:

Հաստատությունն այս հանգամանքը քաջ գիտակցում է, ուստի գնում է կարողունակ և սրտացավ ուսուցիչներին մեծարելու, գնահատելու ճանապարհով:

Այս նպատակով իրականացվում են մի շարք միջոցառումներ՝ շնորհակալագրերի, պատվոգրերի, խրախուսագրերի հանձնում, մեծարման ցերեկույթների կազմակերպում:

Ինքնակրթության հարկն իմացող ուսուցիչը կարող է մեծ հաղթանակներ ունենալ՝ իր հետևից տանելով թե՛ աշակերտներին, թե՛ գործընկերներին:

Ուսուցիչը չպետք է խուսափի նորարարություններից, կրթական նոր տեխնոլոգիաներից ու գործիքներից: Սկզբնական դժվարությունները հաղթահարելով՝ ուսուցիչը ձեռք կբերի կարողունակությունների մի կարևոր փունջ, ինչը թույլ կտա առավել դյուրին և արդյունավետ իրականացնել ուսումնադաստիարակչական գործընթացը:

Հենց այս ամենի հիմքով է ուսումնական հաստատությունը մշակում իր աշխատանքային ռազմավարությունը՝ հնարավորություններ ստեղծելով, որ ուսուցիչներն ինքնակրթվեն, փոխգործակցեն, կիսվեն իրենց փորձով և դառնան օրինակ թե՛ պասիվ գործընկերների, թե՛ աշակերտների համար:

Հաստատությունում աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունների բարելավմանն ուղղված քայլեր

1. Աշխատակազմի մասնագիտական, մեթոդամանկավարժական անձնային, արժեհամակարգային ռեսուրսների գնահատում, հնարավոր թերությունների՝ մասնագիտական ցածր մակարդակի, ոչ օրինակելի, կոնֆլիկտային վարքի շտկում, մեղմում:

2. Ուսուցիչներին ապահովել անհրաժեշտ ռեսուրսներով՝ ինքնակրթվելու, նորը սովորելու և փորձի փոխանակման համար:
3. Հետևել, որ փոխադարձ դասալսումները չկրեն ձևական բնույթ, արձանագրությունները լինեն անաչառ, օբյեկտիվ, քննարկվեն:
4. Թերացող, ոչ համարձակ, կարծրատիպային մտածելակերպ ունեցող ուսուցիչների հետ տանել մասնավոր աշխատանք, աջակցել, խրախուսել վերջիններիս:

Գործողություններ

N	Միջոցառում	Ժամկետ	Պատասխանատու
1	Կիրառել ինքնագնահատման մեխանիզմներ՝ հարցաշարեր, ռուբրիկներ:	2023-2028թթ. ուստարվա սկզբին	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Խորհրդակցական մարմիններ • Ուսուցիչներ
2	Կարիքների գնահատման, ընդհանուր կրթական միջավայրի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով սոցիոլոգիական հարցումների, խմբային քննարկումների անցկացում:	2023-2028թթ.	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Ուսուցիչներ
3	Ուսուցիչների կողմից թեմատիկ սահիկների, հոլովակների պատրաստում և ներկայացում՝ կրթական ժամանակակից տեխնոլոգիաների վերաբերյալ:	2023-2028թթ.	• Տնօրեն • Ուս. գծով տեղակալ • Ուսուցիչներ
4	Աշխատակազմի նվաճումների, հաղթանակների մասին իրազեկումներ ուսուցիչների, ծնողների շրջանում, հաստատության կայքում:	2023-2028թթ.	• Տնօրեն Ուսուցիչներ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴՐԱՆՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ, ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՇԵՂՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Ուսումնական նպատակով իրականացված ծախսերի վերլուծությունը

Ենթաթեմայի իրավական հիմքերը

- **«Կրթության մասին» ՀՀ օրենք**
- **«Հանրակրթության մասին» ՀՀ օրենք**
- **«Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցների ֆինանսավորման կարգը, պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքները և մեթոդաբանությունը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 1481-Ն որոշում**
- **«Հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման գործակիցներն ու նորմատիվները հաստատելու մասին» ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի. N 79-Ն հրաման**

Մինչև 2023-2024 ուստարին ուսումնական հաստատությունների ֆինանսավորումը պետբյուջեից կատարվել է ըստ հաստատության սովորողների թվի: 2023-2024 ուստարվանից, համաձայն ՀՀ կառավարության N 1481-Ն որոշման՝ ընդունված 22 սեպտեմբերի 2022թ., ուսումնական հաստատությունները կֆինանսավորվեն ըստ դասարանների թվի, ինչը, անշուշտ, կնպաստի հաստատության բյուջեի բարելավմանը:

2018-2023 ուտարիների ընթացքում հաստատության ֆինանսական միջոցները ծախսվել են՝ հաշվի առնելով առաջնային կարիքները: Հաստատությունն իր ֆինանսական միջոցների օգտագործման գործընթացը բաց ու թափանցիկ քննարկել է կառավարման խորհրդի հետ՝ մշտապես ներկայացնելով կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվություններ: Ֆինանասական միջոցների անթաքույց կառավարումը, մշտական հաշվետվողականությունն աներկբայորեն թույլ է տվել լուծել մի շարք համակարգակառուցվածքային և հրատապ խնդիրներ, որոնք դպրոցն ունեցել է տարիներ շարունակ:

2018-2023 թթ.-ի ընթացքում հաստատությունում իրականացվել են հիմնանորոգման, կոսմետիկ վերանորոգման, կահավորման, նյութատեխնիկական բազայի ձեռքբերման լայնածավալ աշխատանքներ, մասնավորապես՝

Գործողություններ

N	Միջոցառում	ժամկետ
1	Դասասենյակների հիմնանորոգում, կոսմետիկ նորոգում:	2018-2022թթ.
2	Հիմնանորոգվել է հաստատության ճաշարանը, ձեռք է բերվել գույք, խոհանոցային տեխնիկա, սպասք:	2019-2020 ուստարի
3	Վերանորոգվել, կահավորվել է հաստատության գրադարանը:	2020-2021 ուստարի
4	Հիմնանորոգվել են սանհանգույցները, ձեռք են բերվել զուգարանակոնքեր, լվացարաններ	2020-2021 ուստարի
5	Կառուցվել է սննդի պահեստ, ճաշարանը համալրվել է խոհանոցային տեխնիկայով:	2022-2023 ուստարի
6	Մասնակի նորոգվել է շենքի տանիքը:	2020-2021 ուստարի
7	Հիմնանորոգվել է համակարգչային լսարանը, համալրվել նոր համակարգիչներով:	2020-2022 թթ.
8	Իրականացվել են կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ 1-ին և 2-րդ հարկերում:	2019-2021 թթ.
9	Թարմացվել է մարզական նյութատեխնիկական բազան:	2019-2023թթ.

Կատարված ֆինանսական ծախսեր՝ վերջին երկու տարվա կտրվածքով

2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի
Աշխատավարձ-38.607.000 դրամ	Աշխատավարձ-40.370.000 դրամ
Վերապատրաստում-72.000 դրամ	Վերապատրաստում-96.000 դրամ
Տարակարգ-755.400 դրամ	Տարակարգ-755.400 դրամ
Գրասենյակային-100.000 դրամ	Գրասենյակային-100.000 դրամ

Հաշվետու ժամանակահատվածում հաստատության շենքային պայմանների նյութատեխնիկական միջոցների բարելավմանն ուղղված ծախսերի հաշվետվություն

Ժամկետ	Գործողություն	Ծախս
2018-2019 ուստարի	Հատակի հիմնանորոգում	2.437.000 դրամ
2018-2019 ուստարի	Պահուստային ելքի երկաթյա դռան ձեռքբերում	120.000 դրամ
2018-2019 ուստարի	Շինանյութի ձեռքբերում	79.000 դրամ
2018-2019 ուստարի	Հատակի սալիկապատում	480.000 դրամ
2019-2020 ուստարի	Սանհանգույցների նորոգում	380.000 դրամ
2019-2020 ուստարի	Նրբատախտակի ձեռքբերում	98.600 դրամ
2019-2020 ուստարի	Շինանյութի ձեռքբերում	239.900 դրամ
2020-2021 ուստարի	Տանիքի մասնակի	463.470 դրամ
2020-2021 ուստարի	Մետաղապլաստե դռան ձեռքբերում	120.000 դրամ

2020-2021 ուստարի	Մետաղապլաստե լուսամուտների ձեռքբերում	360.000 դրամ
2020-2021 ուստարի	Կաթսայի տեղադրում	180.000 դրամ
2021-2022 ուստարի	Մետաղապլաստե դուռ 2հատ	250.000 դրամ
2021-2022 ուստարի	Զուգարանակոնքերի ձեռքբերում	120.000 դրամ
2021-2022 ուստարի	Լվացարանների ձեռքբերում	70.000 դրամ
2022-2023 ուստարի	Սննդի պահեստի կառուցում	511.000 դրամ
2022-2023 ուստարի	Շերտավարագույրների ձեռքբերում	50.000 դրամ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
Հաստատությունը նախահաշիվ կազմելիս հաշվարկում է տվյալ ուստարով 4-րդ եռամսյակի խնայողության հավանական չափը՝ քննարկելով կառավարման խորհրդի հետ:	Աշակերտների թվով պայմանավորված՝ հաստատության ֆինանսավորման մեխանիզմը բացասական է ազդում հաստատության բյուջեի բարելավման վրա՝ հաշվի առնելով աշակերտների փոքր թվաքանակը:
Բյուջեի նախագիծը կազմելիս մշտապես հաշվի են առնվում հրատապ լուծում պահանջող, կենսական նշանակության խնդիրները:	Հաստատությունը չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն:
Հաստատության նախկին շրջանավարտները կամավորականության սկզբունքով օժանդակում են դպրոցի ֆիզիկական վիճակի և նյութատեխնիկական բազայի բարելավման աշխատանքներին:	Պայմանավորված շենքի ոչ տիպային լինելու հանգամանքով՝ հարմարեցման և վերակազմավորման վրա օգտագործվում են հավելյալ ֆինանսական միջոցներ:

Հաստատության բյուջեի բարելավման եղանակներն ու հնարավոր ռիսկերը

- Համաձայն ՀՀ կառավարության N 1481-Ն որոշման՝ ընդունված 22 սեպտեմբերի 2022թ., որով նախատեսվում է ուսումնական հաստատությունները ֆինանսավորել ըստ դասարանների թվի, էական առաջընթաց չի բերի նշված ուսումնական հաստատությանը՝ պայմանավորված դասարանների սակավ թվաքանակով, ուստի կարիք կառաջանա հավելյալ ֆինանսական միջոցների ներգրավման:
- Համայնքի, ծնողական խրհրդի, նախկին շրջանավարտների հետ առողջ համագործակցային հարաբերությունների հաստատման միջոցով նպաստել դպրոցի ֆինանսական վիճակի բարելավմանը, շինարարական աշխատանքների ժամանակ կամավոր աշխատուժի ներգրավմանը:

- Հաստատության ֆիզիկական վիճակի և նյութատեխնիկական միջոցների բարելավման նպատակով դիտարկել հնարավոր հովանավորների ներգրավման հարցը:

N	Գործողություններ	Ժամկետ	Պատասխանատու
1	Իրականացնել ձեռնարկատիրական գործունեություն:	2023-2028թթ.	• Տնօրեն • Ձեռնարկատիրություն առարկայի մասնագետ • Աշ. խորհուրդ
2	Ակտիվություն ցուցաբերել պետական բյուջեյից ֆինանսավորվող լրացուցիչ ծրագրերին մասնակցության հարցում:	2023-2028թթ.	• Տնօրեն • Մանկավարժական համակազմ
3	Ստեղծել նախկին շրջանավարտների խորհուրդ:	2023-2024 ուստարի	• Տնօրեն • Ծնող խորհուրդ • Նախկին շրջանավարտներ
4	Դիտարկել դպրոցի տարածքից ուսումնադաստիարակչական նպատակներով վարձակալական հիմունքներով տրամադրման հարցը:	2023-2024 ուստարի	• Տնօրեն • Ծնողական խորհուրդ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի գնահատում

Աղյուսակ 1.

Գնահատվող գործողությունները	Նախնական գնահատում վատ/բավարար/լավ/գերազանց	Վերջնական գնահատում վատ/բավարար/լավ/գերազանց
Դասասենյակների ֆիզիկական վիճակի նկարագիր		
Նյութատեխնիկական բազան		
Ապահով,անվտանգ ուսումնական միջավայրի առկայություն		
Հաստատության գրադարանի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիր		
Հաստատության ճաշարանի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիր		
Հաստատության մարզադահլիճի		

ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիր		
Հաստատության նախակրթարանի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիր		
Հաստատության համակարգչային լսարանի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիր		
Հաստատությունում ռեսուրս-սենյակի ֆիզիկական վիճակի, նյութատեխնիկական հագեցվածության նկարագիր		
Միջանցքների և սանհանգույցների ֆիզիկակն վիճակի նկարագիր		

Կրթության որակի և առաջադիմության վրա ուսումնադաստիարակչական աշխատանքների ազդեցության գնահատում

Աղյուսակ 2.

Գնահատվող գործողություններ	Նախնական գնահատում Անբավարար/բավարար/լավ/ գերազանց	Վերջնական գնահատում Անբավարար/բավարար/լավ/ գերազանց
Ուսումնական հաստատությունում հանրակրթության պետական չափորոշչային պահանջներին համապատասխան կրթության որակի ստուգում		
Ներդպրոցական վերահսկողության իրականացում		
Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումներ		
Տարակարգ ստացած, կամավոր ատեստավորման մասնակցած և պարտադիր ատեստավերման մասնակից ուսուցիչների վերաբերյալ քննարկումներ		
Սովորողների առաջադիմությանն ու կրթության որակի բարելավմանն ուղղված միջոցառումներ		
ՏՀՏ –ի կիրառումը դասապրոցեսում		
Ներդպրոցական,միջդպրոցական և արտադպրոցական		

միջոցառումների պլանավորման և իրականացման քայլաշարի առկայություն		
Մշտադիտարկումներ,խնդիրների վերհանում,հետագա քայլերի մշակում/խորհրդատվություն		

Բազմակարծիք, ներառական մասնակցային արժեքային միջավայրի գնահատում

Աղյուսակ 3.

Գնահատվող գործողություններ	Նախնական գնահատում Անբավարար/բավարար/լավ/ գերազանց	Վերջնական գնահատում Անբավարար/բավարար/լավ/ գերազանց
Բարեվարքության կանոնների պահպանում/ներքին կարգապահական կանոնների պահպանում/		
Իրազեկվածություն իրավունքների և պարտականությունների վերաբերյալ		
Համագործակցության ապահովում		
Ստեղծարար ուսումնական միջավայրի առկայություն		
Բարոյահոգեբանական բարենպաստ միջավայրի առկայություն		
Ինքնագնահատում,փոխադարձ գնահատում		
Խնդիրների վերհանում,առաջարկների ներկայացում, համատեղ քննարկումներ		

Աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության միջավայրի ձևավորման գնահատում

Աղյուսակ 4.

Գնահատվող գործողություններ	Նախնական գնահատում Իրականացվել է/ չի իրականացվել	Վերջնական գնահատում Իրականացվել է/ չի իրականացվել
Ինքնագնահատման մեխանիզմների,հարցաշարերի, ռուբրիկների ամփոփում, խնդիրների վերհանում		
Սոցհարցումների կազմակերպում, առաջարկների և դիտողությունների քննարկում		

Առաջավոր փորձի վերաբերյալ սեմինարների կազմակերպում		
Խրախուսագրերի տրամադրում		
Մեծարման ցերեկույթների իրականացում		
Իրազեկող պաստառների պատրաստում		
Պարգևավճարների տրամադրում		

Դպրոց-համայնք կապերի, ծնողական համայնքի ներգրավվածության, արտադպրոցական աշխատանքների իրականացման գնահատում

Աղյուսակ 5.

Գնահատվող գործողություններ	Նախնական գնահատում Իրականացվել է լիարժեք/ոչ լիարժեք	Վերջնական գնահատում Իրականացվել է լիարժեք/ոչ լիարժեք
Իրազեկվածություն, թափանցիկություն		
Համատեղ միջոցառումների կազմակերպում		
Բուլինգի հայտնաբերման և կանխարգելմանն ուղղված քայլեր		
Ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում		
Ընտանեկան բռնությունների վերաբերյալ պատկան մարմիններին իրազեկում,անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկում		
Պարտադիր կրթությունից դուրս մնացած/մնացող սովորողների հայտնաբերում,պատկան կառույցներին իրազեկում, մշտական համատեղ գործողությունների իրականացում		
Շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված արտադպրոցական միջոցառումների համատեղ կազմակերպում՝ «Մաքուր դպրոց, մաքուր համայնք», «Մաքությունը սկսվում է հենց քեզնից» ակցիաների կազմակերպում, իրազեկման պաստառների պատրաստում, թեմայի շուրջ թռուցիկների բաժանում համայնքում:		

Հալածանքի օտարման և բռնության կանխարգելման ուղղությամբ իրականացված միջոցառումների գնահատում

Աղյուսակ 6.

Գնահատվող գործողություններ	Նախնական գնահատում Իրականացվել է լիարժեք/ոչ լիարժեք	Վերջնական գնահատում Իրականացվել է լիարժեք/ոչ լիարժեք
Տարբեր բռնությունների դեպքերի բացահայտում		
Խնդիրների վերհանում		
Բուլինգի հայտնաբերման և կանխարգելմանն ուղղված քայլեր		
Դեպքերի վերաբերյալ պատկան մարմիններին իրազեկում		
Հետևողական վերաբերմունք		
Պարտադիր կրթությունից դուրս մնացած/մնացող սովորողների հայտնաբերում,պատկան կառույցներին իրազեկում, մշտական համատեղ գործողությունների իրականացում		

ԴԶԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

ԴԶԾ-ի իրականացման հնարավոր ռիսկերը մեղմացնող կամ չեզոքացնող գործողություններ

Աներկբա է, որ ԴԶԾ-ի արդյունավետ և սահմանված ժամկետներում իրականացումը կարող է պարունակել նաև որոշակի ռիսկեր: Ընդ որում՝ այդ ռիսկերը հաճախ կանխատեսելի են, երբեմն՝ ոչ՝պայմանավորված ֆորսմաժորային իրավիճակներով կամ անսպասելի ընթացքով: Այս համատեքստում պահանջվում է զգոնություն, առաջնային նպատակների գերակայության շեշտադրում, քանի որ նշված ռիսկերը կարող են լինել բազմաբևեռ՝ խոչընդոտներ ստեղծելով ուսհաստատության բնականոն աշխատանքի համար: Տեղին կլինի ասել, որ կրթությունը չի կարող սպասել, իսկ ռիսկերն էլ ինքնաբերաբար չեն չեզոքացվում կամ մեղմվում, ուստի, որպեսզի ուսհաստատությունում ուսումնադաստիարակչական ընթացքը լինի անխոչընդոտ, հարկավոր է մշակել ռիսկերը կառավարելու հստակ մեխանիզմներ, գործիքակազմեր: Ստորև ներկայացված են հնարավոր ռիսկերի կառավարմանն ուղղված գործողություններ.

- Ուսումնական հաստատության խնայողությունների արդյունավետ և թիրախային օգտագործում, նախկին շրջանավարտների, ծնողական խորհրդի և շահառու կազմակերպությունների հետ կառուցողական ու շարունակական համագործակցություն:

- Ուսհաստատության առաջնային կարիքների վերհանում, դրանց ուղղությամբ աշխատանքների պլանավորում և իրականացում:
- Ուսհաստատությունում ապահով ու անվտանգ միջավայրի ապահովում, սանիտարահիգենիկ պայմանների ապահովման մշտական վերահսկողության հաստատում:
- Ֆորսմաժորային, կոնֆլիկտային իրավիճակների կանխարգելմանն ուղղված գործողությունների նախանշում և իրականացում:
- Մանկավարժական համակազմի մասնագիտական շարունակական զարգացման ապահովում, վերջիններիս խրախուսման համակարգի ներդնում:
- Մանկավարժական աշխատողների փոխգործակցության և փոխօգնության խրախուսում:
- Մանկավարժական աշխատողների իրավունքների իրացման համար հնարավորությունների ապահովում, պարտավորությունների կատարման մշտադիտարկում՝ համաձայն «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի[5]:
- Մանկավարժական համակազմի ձայնը լսելի դարձնելուն ուղղված քայլերի իրականացում:
- Մեթոդական միավորումների աշխատանքների իրականացման արդյունավետության բարձրացում, սկսնակ ուսուցիչներին խրախուսելուն, աջակցելուն ուղղված քայլերի իրականացում:
- Բազմակարծության խրախուսում, կառուցողական աշխատանքային միջավայրի ապահովում:
- Ծնող-դպրոց կապի ամրապնդում, հաստատության ուսումնադաստիարակչական գործընթացում ծնողներին ներգրավում:
- Ծնողների հետ ճանաչողական սեմինարների, կլոր սեղանների անցկացում, ծնողավարական հմտությունների զարգացմանն ուղղված մանկավարժահոգեբանական աջակցություն:
- Ծնողների շրջանում հնարավոր կոնֆլիկտային իրավիճակների բացահայտում, մանկավարժահոգեբանական խորհրդատվության տրամադրում:
- Ընտանեկան բռնության, շահագործման դեպքերի մշտադիտարկում, կանխարգելում:
- Ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոններով սահմանված բարեվարքության կանոնների իրազեկում սովորողների շրջանում, խստագույնս պահպանում:
- Սովորողների սոցիալական և քաղաքացիական պատասխանատվության բարձրացում:
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ սովորողներին իրենց իրավունքներին ու պարտականություններին իրազեկում[6]:
- Ուսհաստատությունում աջակցող ու մասնակցային ուսումնական միջավայրի ապահովում:
- Բուլինգի, օտարման խտրականության դրսևորումների մշտադիտարկում, բացահայտում, իրավիճակի հարթում, կանխարգելում:
- Աշակերտական խորհրդի դերի արժևորում և գործառույթների ընդլայնում:

[5] «Հանրակրթության մասնին» ՀՀ օրենք, հոդված 27:
[6] «Հանրակրթության մասնին» ՀՀ օրենք, հոդված 20:

ԴԶԾ-Ի ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ, ՄԱՐԴԿԱՅԻՆ, ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Ըստ էության՝ ուսհաստատության զարգացման ծրագիրը առաջնահերթությունների, հաղթանակներ, ձեռքբերումներ, բարելավումներ, որակապես ու քանակապես բարձր ցուցանիշներ ունենալու ուղեցույց է, որը, սակայն, միայն հաստատության տնօրենի տիրույթում չէ: Ծրագրի արդյունավետ իրականացման համար իրենց ներդրումն են ունենում կրթության գործընթացի բոլոր մասնակիցները, ջանք թափում, որ ծրագիրը չմնա թղթին, այլ լիարժեքորեն իրականացվի: Այս համատեքտում կարևոր է, որ համաչափորեն օգտագործվեն բոլոր ռեսուրսները, դրանց բացակայության պարագայում՝ ընտրվեն այլընտրանքներ: Կարևոր է, որ առկա ռեսուրսները որևէ կերպ աննպատակ չօգտագործվեն, յուրաքանչյուր գործիք, ֆինանս, մարդկային ներուժ ու տեխնիկական միջոց պետք է ծառայի իր կոնկրետ նպատակին՝ փոխլրացնելով իրար: Եթե հաստատությունն ունենա գերազանց ֆիզիկական վիճակ, հագեցած լինի նյութատեխնիկական բազայով, սակայն ուսումնադաստիարակչական գործընթացում լինեն բացեր ու թերացումներ, մանկավարժական համակազմի, տնօրենության կողմից չարաշահումներ, աներկբայորեն կարելի է համոզմունք հայտնել, որ նման պայմաններում կրթության որակը բնավ էլ դրական առաջընթաց չի ունենալու: Հետևապես՝ անհրաժեշտություն է առաջանում ամեն կերպ չշրջանցել պատճառահետևանքային կապերը,կարևորել տեխնիկապես հագեցած ու բարեկարգ դասասենյակում բանիմաց ու կարողունակ ուսուցիչ ունենալու առաջնահերթությունը:

N	Ակնկալվող արդյունքներ	Անհրաժեշտ միջոցներ, նյութատեխնիկական բազա և մարդկային ռեսուրսներ	Ռիսկեր
1	**Շենքային պայմանների բարելավում, նյութատեխնիկական բազայի ավելացում, հարմարավետ ուսումնական միջավայրի ապահովում**	Ուսումնական հաստատության խնայողությունների արդյունավետ և թիրախային օգտագործում, նախկին շրջանավարտների, ծնողական խորհրդի և շահառու կազմակերպությունների հետ կառուցողական ու շարունակական համագործակցություն	Ֆինանսական միջոցների անբավարարություն և դրանով պայմանավորված իրականացման ժամկետների խախտումներ
2	**Մանկավարժական համակազմի մասնագիտական շարունակական զարգացման ապահովում, վերջիններիս խրախուսման համակարգի ներդնում**	Տարակարգի, կամավոր ատեստավորման արդյունքում դրույքաչափերի ավելացում, կարողունակ ուսուցիչներին պատվոգրերի, խրախուսական մրցանակների, պարգևավճարների տրամադրում	Կրթական նորարարություններին, մասնագիտական աճին ընդդիմացող ուսուցիչների առկայություն, ովքեր ունեն կարծրատիպային մոտեցումներ
3	**Բազմակարծիք, ներառական մասնակցային արժեքային միջավայրի**	Խորհրդի և խորհրդակցական մարմինների, շահառու	Անհանդուրժողականության մթնոլորտ, ոչ հավաստի

	ստեղծում 	կազմակերպությունների հետ թիրախային, կոնկրետ, բաց համագործակցության ապահովում, բազմակարծության, մասնակցելիության, ազատ խոսքի խրախուսում, հաստատությունում իրավահավասար, մարդասիրական, բարյացկամ մթնոլորտի ապահովում	լուրերի տարածում, միասնականության, համախմբվածության բացակայություն
4	**Աշակերտական խորհրդի դերի արժևորում, աշակերտակենտրոն մոտեցումների հաստատում, խորհրդի մասնակցության անվերապահ ապահովում հաստատության կառավարման գործընթացին**	Դպրոցում աներկբայորեն լսելի դարձնել աշակերտների ձայնը՝ տալով վերջիններիս հնարավորություն ինքնուրույն նախագծեր մշակելու և իրականացնելու, առաջարկություններ ներկայացնելու, հաստատության համար կենսական նշանակության հարցերի քննարկումներին միասնական տեսակետ հայտնելու	Պասիվ աշակերտներ, ովքեր ընդառաջ չեն գնում նոր գաղափարներին, անկազմակերպ աշակերտական համայնքի առկայություն
5	**Անվտանգ և ապահով ուսումնական միջավայրի ստեղծում** 	Ամենայն պատասխանատվությամբ մոտենալ աշակերտների քաղպաշտպանական գիտելիքներին՝ ապահովելով վերջիններիս համար ապահով ուսումնական միջավայր: Այդ նպատակով պարբերաբար իրականացնել միջոցառումներ, իրազեկման անկյուններ, թեմատիկ ցուցապաստառներ, իրականացնել նախագծային աշխատանքներ: Ուսումնական տարվա սկզբին պատասխանատուների ներգրավմամբ անցկացնել քննարկում և մշակել համապատասխան ուսումնադաստիարակչական միջոցառումների անցկացման ժամանակացույց: Սերտորեն համագործակցել շահառու կազմակերպությունների հետ՝ ապահովելով փոխադարձ այցելությունների	Ոչ բավարար ռեսուրսներ, պասիվ, չհամագործակցող ուսուցիչներ

		հնարավորություն:	
6	**Հարմարավետ և աջակցող միջավայրի ստեղծում ԿԱՊԿ ունեցող սովորողների համար**	Բարելավել շենքային պայմանները՝ հարմարեցնելով հենաշարժողական խնդիրներով ԿԱՊԿՈՒ սովորողների համար նախատեսված չափորոշիչներին: Միջոցառումների, ՏՀՏ գործիքների կիրառման միջոցով ապահովել ներառական կրթության վերաբերյալ տեղեկատվության հասանելիություն ծնողների և աշակերտների շրջանում՝ այդպիսով ստեղծելով աջակցող միջավայր: Բացառել նշված խմբի սովորողների նկատմամբ բռնության, խտրականության, օտարման հնարավոր դեպքերը, ապահովել իրավահավասար ուսումնական միջավայր բոլոր սովորողների համար: Ուսումնական գործընթացում հաշվի նստել ԿԱՊԿ սովորողների կարիքների, առանձնահատկությունների հետ, ակտիվ համագործակցել ՏՄԱԿ-ի հետ:	ԿԱՊԿՈՒ սովորողների նկատմամբ անհանդուրժողականության , խտրականության և բռնության մասնավոր դեպքեր, որոնք հնարավեր չի եղել կանխարգելել
7	**Ընտանիք-դպրոց կապի ամրապնդում** 	Հաճախակի իրականացնել ծնողական ժողովներ՝ ծնողներին ներկայացնելով իրենց երեխաների ուսումնական հաջողությունները, թերացումները, վարքային հնարավոր խնդիրները: Ծնողների հետ մշակել սովորողների դաստիարակության ընդհանուր մեխանիզմներ՝ հիմքում դնելով արժեքային համակարգը, սոցիալական, քաղաքացիական պատասխանատվությունը, մարդասիրությունը, հարգանքն ու կրթության, զարգացման արժեորումը:	Անտարբեր, ծնողավարական ցածր հմտություններով, չկազմակերպված ծնողների առկայություն

		Անվերապահորեն իրացնել սովորողի ծնողների կամ օրինական ներկայացուցիչների՝ հաստատության կառավարմանը մասնակից լինելու օրենքով նախատեսված իրավունքը:	
8	**Ինքնակրթություն, փորձի փոխանակում, փոխօգնության մթնոլորտի հաստատում**	Խթանել և աջակցել մանկավարժական աշխատողների համագործակցությունը, օրինակելի փորձի փոխանակումը: Բարձրացնել առարկայական մեթոդական միավորումների աշխատանքի արդյունավետությունը՝ ներդնելով ակտիվ և նախաձեռնող անդամներին խրախուսելու մեխանիզմներ: Ապահովել ուսուցիչների գիտամանկավարժական համապատասխան գրականությամբ ինքնակրթվելու, կրթական նորարարություններին ծանոթանալու համար:	Պասիվ, անտարբեր, քննադատական հայացքների տեր ուսուցիչների առկայություն
9	**Սովորողների դաստիարակության գործընթացը**	Օգնել, որ սովորողները լինեն բարեվարք, ունենան հետաքրքրություններ, նախասիրություններ, հոբիներ, արտադպրոցական և արտադասարանական տարատեսակ միջոցառումների, նպատակային էքսկուրսիաների միջոցով նպաստել վերջիններիս գեղագիտական ճաշակի զարգացմանը, մշակությանին նախասիրությունների հայրենասիրական զգացմունքների, աշխարհայացքի մասնագիտական կողմնորոշման ձևավորմանը: Որևէ կերպ չնվաստացնել, չիրավորել սովորողին, հարգել նրա իրավունքներն ու արժանապատվությունը, գովել և խրախուսել, մատնացույց անել անգամ	Դաստիարակության հարցում դպրոցի և ընտանիքի համագործակցության, ընդհանուր նպատակի բացակայություն, ամենաթողություն, անպատժելիություն

		չնչին ձեռքբերումները՝ պարսավելու և քննադատելու փոխարեն:	
10	**Աշակերտների աշխատունակության և սովորելու մոտիվացիայի բարձրացում**	Դասագործընթացը պլանավորել ժամանակակից կրթական տեխնոլոգիաներով, ՏՀՏ գործիքներով, հենվել աշակերտակենտրոն ուսուցման մոդելի վրա՝ սովորողին պասիվ լսողից դարձնելով, հետազոտող, բացահայտող, գյուտարար, նախագծող, ստեղծարար: Կոտրել դասի ավանդական կարծրատիպերը, տալ սովորողներին ինքնուրույնություն՝ այդպիսով դասագործընթացը վերջիններիս համար դարձնելով հետաքրքիր և ցանկալի:	Անհետաքրքիր դասագործընթաց, ոչ օբյեկտիվ գնահատում, խտրականություն սովորողների նկատմամբ, սովորողների կաշկանդում
11	**Ֆինանսատնտեսական միջոցների արդյունավետ օգտագործում**	Ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման համար սահմանել հաստատության առաջնային կարիքները, արդյունավետորեն պլանավորել և իրականացնել գնումների գործընթացը՝ հնարավորինս խուսափելով հավելյալ ծախսերից:	Ֆինանսական աղբյուրների սակավություն, անտեղի ոչ հրատապ, չպլանավորված ծախսերի կատարում

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ



ԴԶԾ-ի արդյունավետ իրականացման վերահսկողությունն իրականացնում է ուսումնական հաստատության Կառավարման խորհուրդը: Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի վերջին հաստատության տնօրենը ներկայացնում է հաշվետվություն՝ ԴԶԾ-ի կատարողականի վերաբերյալ: Զարգացման ծրագրի լիարժեք և արդյունավետ իրականացումը պահանջում է պատասխանատու, թափանցիկ աշխատելաոճ, համագործակցության, հաշվետվողականության մթնոլորտի անվերապահ ապահովում: Սա ենթադրում է անվերապահ պատասխանատու մոտեցում թե՛ դպրոցի տնօրենի կողմից՝ ԴԶԾ-ի տարեկան կատարողականի վերաբերյալ արժանահավատ տեղեկատվության տրամադրելու առումով, թե՛ Կառավարման խորհրդի կողմից: Այս մասով կցանկանանք շեշտադրել այն հանգամանքը, որ կարևոր է ոչ միայն Կառավարման խորհրդի կողմից ԴԶԾ-ի կատարողականի վերաբերյալ որակական և քանակական ցուցանիշների ամրագրումն ու գնահատումը այլ նաև՝ համապատասխան խորհրդատվական աջակցության տրամադրումը հաստատության տնօրենին, ինչը կարող է մեծապես նպաստել կառուցողական և արդյունավետ աշխատանքային միջավայրի ապահովմանը: Աներկբայորեն կարելի է պնդել, որ պայմանավորված ժամանակակից կրթական մարտահրավերներով, ոլորտում ամենօրյա ռեժիմով ի հայտ եկող հրամայականներով, բացառված չէ, որ զարգացման ծրագրի որոշակի դրույթներ կարիք ունենան վերանայման ու լրամշակման, ուստի այս առումով ևս ակնկալվում է զգոնություն, հեռատեսություն և նորարարություն շահառու բոլոր կողմերից:

Որպեսզի ԴԶԾ-ի կատարողականի վերաբերյալ՝ հաստատության տնօրենի կողմից ներկայացվող ցուցանիշները լինեն արժանահավատ, ունենան մեծ լայնույթ՝ արտացոլելով թիրախային բոլոր ոլորտները, հարկավոր է, որ դրանցում հստակորեն ամրագրվեն որակական և քանակական ցուցանիշներ, ժամկետներ, հնարավոր գերակատարման ու թերակատարման վերաբերյալ տեղեկություններ: Այսպիսով, ԴԶԾ-ի կատարողականի վերաբերյալ հաստատության տնօրենի կողմից տրամադրվող հաշվետվությունը պետք է.

- Լինի արժանահավատ, ունենա իրավական հիմնավորում
- Պարունակի խորքային ուսումնասիրություն թիրախային բոլոր ցուցանիշների վերաբերյալ
- Պարունակի հիմնավորումներ հնարավոր թերակատարումների կամ ձախողումների վորաբերյալ/հարկավոր է արձանագրել փաստը՝ զերծ մնալով սուբյեկտիվ դիրքորոշումներից/
- Պարունակի տվյալներ ԴԶԾ-ում հնարավոր վերանայումների վերաբերյալ /լրամշակումներ կարող են իրականացվել՝ պայմանավորված նոր առաջնահերթություններով կամ ֆորսմաժորային իրավիճակներով/
- Պարունակի իրական, հավաստի որակական և քանակական տեղեկատվություն
- Լինի օբյեյտիվ, անաչառ

Ուստարվա յուրաքանչյուր կիսամյակի ավարտին ներկայացվող ԴԶԾ-ի կատարողականի հաշվետվության տարբերակված ձևերի օրինակներ

Ուսհաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների կատարողականի հաշվետվության նմուշ-օրինակ

Գործողություններ, քայլեր, միջոցառումներ	*Կատարված աշխատանքի նկարագրություն*	*Աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր խոչընդոտների, ռիսկերի, դժվարությունների նկարագրություն*	*Սահմանված ժամկետ/կատարման ժամկետ*	*ԴԶԾ-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*
1. ՆԴՎ –ի շրջանակներում իրականացված աշխատանքներ				
2.Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող, փոխադարձ համագործակցությունը խրախուսող միջոցառումներ				
3.Հաստատությունում				

բազմակարծիք, նեռարական մասնակցային արժեքային միջավայրի ապահովմանն ուղղված քայլեր				
4.Հաստատությունում կրթության որակի բարձրացմանը, մասնակցային և աջակցող ուսումնական միջավայրի ապահովմանն ուղղված գործողություններ				
5.Հաստատությունում մանկավարժական աշխատողների, սովորողների և նրանց ծնողների՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքների իրականացնմանն ու պարտավորությունների կատարման խրախուսմանն ուղղված քայլեր				
6.ԿԱՊԿ ունեցող սովորողների կրթական կարիքների բավարարմանն ուղղված միջոցառումներ				
7.Ուսհաստատությունում ներքին կարգապահական կանոնների անվերապահ պահպանմանն ուղղված միջոցառումներ				
8.Ուսհաստատությունում անվտանգ և ապահով միջավայրի պահպանմանն ուղղված քայլեր				
9.Արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների արդյունավետ իրականացմանը նպաստող գործողություններ				
10.Շահառու կազմակերպությունների, սովորողի, ծնողների, համայնքի, տեղական ինքնակառավարման մարմինների, լիազոր մարմնի հետ համագործակցության սերտացմանն ու շարունակականության ապահովմանն ուղղված				

գործողություններ				
11.Նորարար ուսուցիչներին, սովորողներին, խրախուսելու, նրանց ձեռքբերումները երևան հանելուն ուղղված քայլեր				
12.Սովորողների շրջանում անհատակողմնորոշիչ մեխանիզմների կիրառման, օժտված և ետ մնացող սովորողների բացահայտմանը, նրանց կարիքների մշտադիտարկմանն ու բավարարմանն ուղղված քայլեր				

Ուսհաստատության վարչատնտեսական աշխատանքների կատարողականի հաշվետվության նմուշ-օրինակ

Գործողություններ, քայլեր, միջոցառումներ	*Կատարված աշխատանքի նկարագրություն*	*Աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր խոչընդոտների, ռիսկերի, դժվարությունների նկարագրություն*	*Սահմանված ժամկետ/կատարման ժամկետ*	*ԴՀԾ-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*
1. Ուսումնական նպատակով իրականացված ծախսեր				
2.Նյութատեխնիկական բազայի /դիդակտիկ նյութեր, զննական պարագաներ, անհրաժեշտ սարքեր, սարքավերումներ, գրքեր, քարտեզներ, օժանդակ միջոցներ/ ձեռքբերում				
3.Հաստատությունում ապահով և անվտանգ միջավայրի պահպանմանն ուղղված ծախսեր				
4.Անհրաժեշտ գույքի ձեռքբերմանն ուղղված ծախսեր				

5.Այլ ծախսեր				

Ուսհաստատության իրականացված շինարարական շխատանքների կատարողականի հաշվետվության նմուշ-օրինակ

Գործողություններ, քայլեր, միջոցառումներ	*Կատարված աշխատանքի նկարագրություն*	*Աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր խոչընդոտների, ռիսկերի, դժվարությունների նկարագրություն*	*Սահմանված ժամկետ/կատարման ժամկետ*	*ԴՀԾ-ում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*
1.Հաստատությունում ռեսուրս-սենյակի հիմնում, վերանորոգում				
2. Մարզադահլիճի հիմնանորոգում				
3. Բնագիտական առարկաների լաբորատորիայի հիմնանորոգում				
4. Դասասենյակների ընթացիկ նորոգում				

ԱՄՓՈՓՈՒՄ

Ժողովուրդն իմաստուն է՝ «Մեկ ձեռքը ձեռք է լվանում, երկու ձեռքը՝ երես»: Ես էլ իմ իմաստությունն եմ ուզում անհամեստորեն ներկայացնել՝ «Մեկ ձեռքը ձեռք է լվանում, իսկ երբ կա համագործակցություն, անտրտունջ աշխատանք, ոչնչից ամեն ինչ ստեղծելու ցանկություն, սակավ միջոցներով մեծ հաղթանակներ ունենալու նկատմամբ հավատ, մեկ ձեռքը երես էլ կլվանա:

Այսօր որակյալ կրթակարգ համակարգը ուժեղ, հզոր, ժամանակակից, տեխնոլոգիական, տնտեսապես կայացած երկիր ունենալու փշոտ ու դժվար, սակայն միակ ճանապարհն է: Տրտնջացիր, ծուլացար, վախեցար, կամ պատճառաբանություններ փնտրեցիր, կմնաս նույն աստիճանի վրա: Սա հրամայական է, իսկ հաղթանակները հեշտությամբ չեն տրվում: Պետք է աշխատել, պետք է սովորել, պետք է զինվել նորարարություններով, որպեսզի նոր աշխարհը քեզ կուլ չտա, պետք է կարողանալ հասնել առավելագույնի, հակառակ դեպքում՝ կանես ամեն ինչ՝ չունենալով ոչինչ: Մեզ բախտ է վիճակվել ապրել տեխնոլոգիական դարաշրջանում, երբ ամեն բան հասանելի է, մնում է միայն ցանկանալ, իսկ ցանկությունն այս պարագայում ճակատագրեր է որոշում:

Ուզու՞մ ես ունենալ որակապես բարձր կրթական համակարգ, ուրեմն պատրաստ եղիր չհոգնել, սովորել, չտրտնջալ, չբողոքել: Լիահույս եմ, որ ՀՀ-ում կրթական բարեփոխումները վաղ, թե ուշ կտան իրենց սպասված պտուղները, և մեզանից յուրաքանչյուրն այլևս հաշվետու կլինի առաջինն իր առաջ՝ արդյոք արե՞լ եմ առավելագույնը...

Մեծագույն ցանկություն ունեմ, որ երբ այս հարցադրումն ինքս ինձ տամ, վստահաբար ասեմ՝ այո', արել եմ...

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է պնդել, որ ամեն բան հենց մեր ձեռքերում է, միայն մնում է մեկտեղվել, համագործակցել, չքննադատել, լսել, հարգել, ընդառաջել՝ ունենալու համար որակյալ և աջակցող կրթական համակարգ:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1.Ուսումնական հաստատությունը 2019-2023թթ.-ին. անվտանգ և բարեկարգ ուսումնական միջավայրի ստեղծում





2.Ներդպրոցական վերահսկողության շրջանակներում կրթության որակի բարելավմանն ուղղված համագործակցային աշխատանքներ



3.Ուսումնական միջավայրը դպրոցում. ցուցադրական դասեր, բաց դասեր, դաս-միջոցառումներ, ինտեգրված, ոչ ֆորմալ դասեր

4. Ապահով համացանց, կիբեռ անվտանգության ապահովում: Հանդիպում լրագրողի հետ, «Մեդիահրագիտության շաբաթ»



5.Քաղաքաշտպանության միջոցառումներ, իրազեկման պարապմունքներ և ուսումնավարժանքներ ԱԻՆ-ի հետ համատեղ

6. «Մաքուր դպրոց, մաքուր համայնք» շաբաթօրյակների կազմակերպում

7.Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումներ

8. Սպորտլանդիայի և տարբեր սպորտային միջոցառումներ կազմակերպում

9. Միջդպրոցական խաղ-վիկտորինաների, միջոցառումների կազմակերպում

10. Դպրոցի գրադարանը՝ կրթության լույսի աղբյուր

11.Կոնֆլիկտների,բռնության, խտրականության կանխարգելմանը, բուլինգին ուղղված կանխարգելիչ միջոցառումներ, դերախաղեր, իրազեկող տեսանյութերի ցուցադրություն

12. Հաստատության նախակրթարանը

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍՏ

Երկար տարիներ մեծագույն նվիրումով աշխատելով դպրոցում՝ անհնար է հոգիդ չնվիրել քեզ ջերմ ժպտացող, գրկող, սիրող, քեզնից սեր ու հոգատարություն պահանջող սաներիդ, անհնար է ամեն երեկո անահամբերությանմբ չսպասել, թե երբ ես կրկին գնալու սիրելի աշխատանքիդ, որն անչափելի ես սիրում:

Ես հասկացել եմ հաջողության գաղտնիքը՝ անսահման սեր ու միայն սեր...

Շնորհակալություն եմ հայտնում բոլոր նրանց, ում շնորհիվ այս լայնածավալ աշխատանքը կարողացա իրականացնել:

Ուրախ եմ, որ այս բարեփոխման առաջին մասնակիցներից եմ և հնարավորություն ունեմ իրապես ներկայացնել այն գիտելիքները, հմտություններն ու կարողությունները, առանց որոնց այս մեծ ընտանիքն անհնար է փայփայել, զարգացնել, առաջ տանել՝ ի շահ արժանապատիվ հանրակրթության:

Շնորհակալություն